


Գ Ի Բ Բ Ա Ի Բ Բ Մ Տ Լ



Գիրք և միտք. ակնարկների ժողովածու

Կազմող և խմբագիր՝ Ավետիք Մեջլումյան

Ձևավորող՝ Աստղիկ Փիրումյան

Ժողովածուն էլեկտրոնային տարբերակով հրատարակել է «Հանրային քաղաքականության ինստիտուտ» (ՀԹԻ) հասարակական կազմակերպությունը՝ Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութեան աջակցությամբ իրականացվող «Գրքերի ուղեցույց» ծրագրի շրջանակներում:

Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութեան աջակցությունը չի նշանակում որևէ արտահայտված կամ օգտագործված կոնկրետ կարծիքի, տեսակետի կամ մոտեցման հաստատում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան

5

■ Ինչու են ձախողվում պետությունները

Տարոն Աճեմժոլու, Ջեյմս Ա. Ռոբինսոն

Ազգերի ու պետությունների հանելուկային երկընտրանքը

7

«Ինչու են ձախողվում պետությունները» գրքում

Ադասի Թադևոսյան

Չաջողակ պետությունները նման են իրար,

12

յուրաքանչյուր պետություն ձախողվում է յուրովի

Ավետիք Մեջլումյան

■ Կապիտալիզմ և ազատություն

Միլթոն Ֆրիդմեն

Կապիտալիզմը՝ պետության զարգացման գրավական

18

Աշոտ Տերտերյան

Լիբերալի հավատամքն՝ ընդդեմ պատերնալիզմի

21

Ավետիք Մեջլումյան

■ Անգետ ուսուցիչը

Ժակ Ռանսիեր

Սովորեցնելու հետքերով... ինչպես դասավանդել առանց «իմանալու»

28

Միշա Թադևոսյան

Ուսուցիչը պետք է հաղթահարվի. այսպես խոսեց Ժաքոթոն

31

Ավետիք Մեջլումյան

■ **Քողոքական էթիկան և կապիտալիզմի ոգին**

Մաքս Վեբեր

Ի՞նչ կապ ունի կրոնական էթիկան տնտեսական վարքագծի հետ 36

Վահրամ Սողոմոնյան

Ճգնակեցությունն ու կոչված լինելու զգացումը՝ կապիտալիզմի ոգու հիմնասյուներ 38

Ավետիք Մեջլումյան

■ **Ինչ է պոպուլիզմը**

Յան-Վերներ Մյուլլեր

Պոպուլիզմը՝ «ժողովուրդ» հասկացությունը մանիպուլացնող հակապլյուրալիզմն է 45

Էդգար Վարդանյան

Պոպուլիզմի ծուղակը. ժողովուրդ vs. հասարակություն 47

Ավետիք Մեջլումյան

■ **Մտածողություն. արագն ու դանդաղը**

Դանիել Քանեման

Դանիել Քանեմանի՝ մտածողության երկու ռեժիմների տեսությունը 53

Լևոն Բաբաջանյան

Ինչպես է ծուլությունը պայմանավորում մեր մտածողությունը 57

Ավետիք Մեջլումյան

■ **Հրապարակն ու Աշտարակը**

Նիլ Ֆերգյուսոն

Ցանցերը՝ պատմության անտեսանելի դերակատարներ 62

Դավիթ Սարգսյան

Չտեսնված պատմության (վերա)շարադրանքը՝ Ֆերգյուսոնի 64

«Հրապարակն ու աշտարակը» գրքում

Ավետիք Մեջլումյան

■ Արքայի ամբողջ թիկնազորը

Ռոբերտ Փեն Ուորեն

Արքայի ամբողջ թիկնազորը. չընդհատվող ու ծանոթ պատմություն

67

Ավետիք Մեջլումյան

■ Հուզական ինտելեկտ

Դենիել Գոուլման

Դենիել Գոուլմանի «Հուզական ինտելեկտ»-ը և դրա նշանակությունը

72

Քրիստինա Ծատուրյան

Ճանաչեք ձձմարիտ հույզերը և դրանք ձեզ կազատեն

74

Ավետիք Մեջլումյան

■ Պլյուրալիզմ, ժողովրդավարություն, սոցիալական արդարություն

Ջոն Ռոլս, Մայքլ Ուոլցեր, Դեյվիդ Միլեր

Բաշխական արդարության տեսություններ. Ռոլս, Ուոլցեր, Միլեր

78

Արշակ Բալայան

Մոնիզմի և պլյուրալիզմի հակադրությունն արդարության տեսություններում

82

Ավետիք Մեջլումյան

ՆԱԽԱԲԱՆ

«Հանրային քաղաքականության ինստիտուտ» (ՀՔԻ) հասարակական կազմակերպությունը Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութեան աջակցությամբ նախաձեռնել էր հայերեն հրատարակված գրքերի քննարկման մի շարք: Նպատակն էր՝ ընթերցողների լայն շրջանակին ներկայացնել նշանակալի գիտական ու գիտահանրամատչելի աշխատությունները, գեղարվեստական գրքերը, խթանել դրանց ընթերցանությունն ու քննադատական իմաստավորումը:

Հայաստանում վերջին տարիներին բավական աշխույժ է թարգմանական գրականության հրատարակումը, այդ թվում՝ Գալուստ Կիլպէնկեան թարգմանական մատենաշարի շնորհիվ: Բազմաթիվ գրքեր են թարգմանել արդի հումանիտար մտքի ասպարեզներում: Բազմազան տեսականի ունենալը որքան դրական, նույնքան էլ՝ շփոթեցնող հանգամանք է: Դժվար է կողմնորոշվել՝ որն է նշանակալի գիրք և ինչ կարելի է ակնկալել ընթերցումից: Տվյալ պահի մոդայիկ բեսթսելլերներն ու իրապես արժեքավոր գրքերը նույն շարքում են, ինչն էլ խոչընդոտում է դրանց պատշաճ քննարկումն ու արժևորումը:

Ակնկալիքը պարզ էր. հանրային քննարկումները պետք է դառնային ընթերցողների վստահելի ուղեցույցը՝ գրքերի ընտրության հարցում, նպաստեին բարդ տեքստերի մեկնությանն ու հասկացմանը:

2024 թ. հունվարից նույեմբեր ընկած ժամանակահատվածում տեղի է ունեցել տասը գրքի քննարկում: Հանդիպման մեկնարկին բանախոսները հաջորդիվ ներկայացրել են քննարկվող գրքի հիմնական և արժեքավոր դրույթները, ինչին հետևել են լսարանի հարցերն ու ելույթները, ծավալվել է բանավեժ:

Հանդիպումները տեսաձայնագրվել են, և մոնտաժված տեսանյութերը հասանելի են ինչպես ՀՔԻ, այնպես էլ «Ալիք մեդիա Հայաստան»-ի յութուբ-ալիքներում:

Այս ժողովածուն ամփոփում է յուրաքանչյուր գրքի վերաբերյալ բանախոսների հեղինակած քննադատական-վերլուծական ակնարկները: Քննարկումների տեսանյութերն ու գրավոր ակնարկները հասանելի են նաև [ՀՔԻ կայքում](#):

Բանախոսների տեքստերը խիստ տարբեր են՝ գրված տարբեր դիրքերից և անգամ՝ տարբեր նպատակադրումներով: Որոշները գրքերի գաղափարների մեկնություն են առաջարկում, մյուսներն իրենց տոնայնությամբ էսսե են հիշեցնում, որի մեկնակետ-առիթը գիրքն է եղել, սակայն չի կաշկանդել հեղինակին իր բովանդակությամբ, այլ նոր մտածումներ է խթանել: Կան համառոտ ու «քաղաքավարի» անդրադարձներ (հատկապես այն պարագայում, երբ բանախոսն առանձնապես ոգեշնչված չէ գրքով), կան մանրամասն վերլուծություններ, կա հիացմունք զարմացնող բացահայտումների հանդեպ:

Ակնարկներն, այս կամ այն չափով, անդրադառնում են գրքերի.

- Ստեղծման պատմական-հասարակական, գիտական, անձնական համատեքստերին:
- Հիմնարար, առավել արժեքավոր դրույթներին և դրանց քննադատական իմաստավորմանը:
- Ազդեցությանը՝ հասարակական-քաղաքական, գիտական, այլ:
- Միջգիտակարգային կապերին, առնչությանը՝ ժամանակակից հայ իրականությանը:


Գրքերի ընտրությունը հոլիստիկ մոտեցման վրա էր հիմնված: Այդքան կարևոր չէր առանձին գրքի՝ որևէ կոնկրետ գիտական կամ գեղարվեստական հղացքին պատկանելությունը: Անձի և հանրային մտքի հարստացման համար հավասարապես նշանակալի են և՛ տրամաբանությունն ու վերացարկված մտածողությունը խթանող գրքերը, և՛ հուզական լիցք բերող, հավերժական թեմաներ բարձրացնող գրականությունը:

Այս նախագծի շնորհիվ հանրային ուշադրության և ռեֆլեքսիայի դաշտ են բերվել արժեքավոր ստեղծագործություններ (էական չէ՝ գիտական մտքի, թե՛ գեղարվեստական), վեր են հանվել դրանց փոխառնչությունները:

Վերջապես, գրքի քննարկումն առիթ էր՝ թիրախավորելու հանրային տաբուավորված պատումները և առաջարկելու իրականության այլընտրանքային մեկնաբանություններ: Գրքի շուրջ իրական խոսակցությունը հենց այդպիսին է. տեքստը միայն խթան է, որ դրդում է խոսելու հուզող խնդիրների մասին և միտքն անսովոր տարածքներ է ուղղորդում: Պարտադիր չէ, որ նվաճվող տարածությունը շատ մոտ լինի գրքին:

Շնորհակալություն ենք հայտնում մեր սիրելի գործընկերներին, ում շնորհիվ հնարավոր է դարձել նախաձեռնության իրագործումը.

- Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութեան Հայկական բաժանմունքին՝ ծրագրին աջակցելու համար:
- Միրզոյան գրադարանին՝ քննարկման հարթակ տրամադրելու համար:
- Ալիք մեդիա Հայաստանին՝ հանդիպումների տեսանկարահանման համար:



ԻՆՉՈՒ ԵՆ ՁԱԽՈՂՎՈՒՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տարոն Աճեմողլու, Ջեյմս Ա. Ռոբինսոն

*Գիրք & Միտք #1 | Ինչու են ձախողվում պետությունները
Աղասի Թաղևոսյան և Ավետիք Մեջլումյան*

Ազգերի ու պետությունների հանելուկային երկընտրանքը «Ինչու են ձախողվում պետությունները» գրքում

Աղասի Թաղևոսյան

Մշակութային մարդաբան

Տարոն Աճեմողլուի և Ջեյմս Ռոբինսոնի «Ինչու են ձախողվում պետությունները» գրքին անդրադարձը կցանկանալի սկսել վերնագրի հայերեն թարգմանությունից: Անգլերենում այն հնչում է «Why Nations Fail: The Origins of Power, Prosperity, and Poverty»: Այստեղ գլխավոր քննարկվելիք հարցը վերաբերում է «nation» բառի «պետություն» թարգմանությանը: Կա կարծիք, որ հայերենում «nation» նշանակում է «ազգ» և պետք է այդպես թարգմանել:

Հայտնի է, որ «ազգ» եզրույթը հայերենում երկու հիմնական իմաստ ունի: Առաջինի համաձայն, այն նշանակում է ազգարյունակցական խումբ: Այս բառի երկրորդ իմաստով նշվում է էթնիկական հանրույթը կամ ազգը որպես էթնոս, նկատի ունենալով, որ այդ էթնիկական հանրույթն իրենից ներկայացնում է մեկ ընդհանուր նախնուց սերված արյունակիցների մեծ համախումբ, որը ձևավորել է իր ինքնությունը ընդհանուր պատմական մի տարածքում, ընդհանուր մշակույթի ու լեզվի միջոցով:

Սակայն խնդիրն այն է, որ վաղուց արդեն հասարակագիտական ու հումանիտար ոլորտներում գործածվող լեզվում «nation» եզրույթը կիրառվում է գերազանցապես հենց «պետություն» իմաստով և այս գրքի բովանդակությունից էլ հասկանալի է, որ խոսքը ոչ թե էթնիկական ազգերի բարգավաճման կամ անկման մասին է, այլ՝ ազգի, որպես քաղաքական միավորի կամ պետության:

Ինչու են կարևոր ինստիտուտները

Աճեմողլուի և Ռոբինսոնի գրքի հիմնական պնդումն այն է, որ աղքատ և հարուստ պետությունները

կազմակերպված են տարբեր կերպ և դրանում առանցքային տարբերությունները վերաբերում են ինստիտուտներին: Որոշիչ չեն ոչ աշխարհագրական ու կլիմայական պայմանները, ոչ մշակույթը կամ ռասայական գործոնը: Կարևոր չէ նաև վերնախավերի քաղաքական գրագիտության աստիճանը: Կարևորը ինստիտուտների կայացման ընթացքն է և, թող զարմանալի չթվա, սակայն հեղինակների պնդմամբ՝ պատահականությունները: Հաճախ պատահականություններն են պայմանավորում *բեկումնային փուլերի* կամ *բարենպաստ շրջանի* ձևավորումը, որոնք առանցքային են համարվում հատկապես *ներառական* ինստիտուտների ձևավորման համար:

Հեղինակների սիրելի օրինակներից է ԱՄՆ և Մեքսիկայի սահմանին գտնվող Նոգալես քաղաքի երկու տարբեր հատվածների համեմատությունը: Ամերիկյան հատվածում չափահաս բնակչության մեծ մասն ավարտել է ավագ դպրոց, մարդիկ օգտվում են առողջապահական ապահովագրական համակարգից, ունեն տնտեսական գործունեություն ծավալելու հավասար իրավունքներ, չկան հատուկ արտոնություն վայելող խավեր, օրենքը բոլորի համար գործում է հավասար կերպով: Առկա են զարգացած ենթակառուցվածքներ, որոնք համապատասխանում են ամերիկյան ընդունված չափանիշներին: Այդ ամենի շնորհիվ մարդիկ ապրում են բավական բարեկեցիկ կյանքով, իսկ կյանքի միջին տևողությունը միջազգային չափանիշներով բարձր է:

ԱՄՆ-ն և Մեքսիկան միմյանցից սահմանազատող ցանկապատի մյուս կողմում գտնվող մեքսիկական Նոգալեսում ձանապարհները ողբալի վիճակում են, մնացած ենթակառուցվածքները նույնպես: Առկա է մանկական մահացության բարձր աստիճան: Բնակչության մեջ տարածված են տարատեսակ վարակներ ու հիվանդություններ: Չափահասների մեջ շատ քիչ մարդ ունի որակյալ կրթություն: Այստեղ բավական բարձր է կոռուպցիայի մակարդակը, և շատ բարդ է բիզնես սկսելն ու վարելը, եթե կապեր ու հովանավորներ չլինեն իշխանություններում: Մարդկանց կյանքի միջին տևողությունը երկար չէ, և բարեկեցության աստիճանը մի քանի անգամ ցածր է ամերիկյանից:

Ի՞նչն է պատճառը այս խորը և էական տարբերության, որ գոյություն ունի նույն աշխարհագրական ու կլիմայական պայմաններում ապրող մարդկանց կյանքում, որոնք բաժանված են ընդամենը երկու երկրները տարաջատող սահմանային ցանկապատով:

Պատճառն, ինչպես պնդում են գրքի հեղինակները, աշխարհագրական կամ կլիմայական պայմանները չեն և ոչ էլ մշակույթը: Պատճառը քաղաքական ու տնտեսական ինստիտուտներն են, որոնք ԱՄՆ-ում ունեն *ներառական* (inclusive), իսկ Մեքսիկայում և ընդհանրապես Լատինական Ամերիկայի երկրներում՝ *կորզող-վանող* (extractive) բնույթ:

Նոգալես քաղաքի երկու մասերի խորը տարբերությունը գալիս է Իսպանիայի և Անգլիայի կողմից Ամերիկա մայրցամաքի գաղութացման շրջանից: Լատինական Ամերիկայի բնիկների ձևավորած պետություններում կային բավականին հարուստ վերնախավեր, ովքեր ունեին կուտակած հսկայական գանձեր: Գաղութարար իսպանացիներն իրենց ջանքերը կենտրոնացրեցին հնդկացիական վերնախավերից այդ գանձերը կորզելու և տեղի բնիկների ստրկական շահագործման միջոցով հարստանալու վրա:

Անգլիացիները Հյուսիսային Ամերիկայի գաղութացումը սկսեցին նման նպատակներով, սակայն, ինչպես պարզվեց, այստեղ վերնախավերը չունեին ոսկու ու արծաթի մեծ հարստություններ: Բնիկները նաև պատրաստ չէին շահագործվելու ու լուրջ դիմադրություն ցույց տվեցին: Դրա

արդյունքում անգլիացիները ստիպված էին նոր գաղթականներ բերել Անգլիայից և իրենց գոյությունն ապահովելու համար զբաղվել տնտեսական գործունեությամբ: Որպեսզի շահագրգռեին գաղթականներին նախ, գալու նահանգներ ու հետո՝ աշխատելու, անհրաժեշտ էին *փոքր փոփոխություններ*: Սա աստիճանաբար բերեց այնպիսի օրենքների ու ինստիտուտների ձևավորման, որոնք խթանում էին բնակչության լայն խավերի ներառումը տնտեսական գործունեություն ծավալելու համար: Զուգահեռաբար, ձևավորվեց քաղաքական ինստիտուտների վրա ազդելու հնարավորությունների հավասարություն:

Բերված և բազմաթիվ այլ օրինակների միջոցով հեղինակները փորձում են հիմնավորել մի քանի առանցքային գաղափար:

Ինչպիսին պետք է լինեն ինստիտուտները

Հիմնարար գաղափարն այն է, որ հարուստ ու աղքատ պետությունների միջև տարբերությունների առաջացման պատճառները *ներառական* ու *կորզող* ինստիտուտներն են: Դրանցում պետք է տարանջատել տնտեսական ինստիտուտները քաղաքականից: *Ներառական ինստիտուտները* նպաստում են, որպեսզի հասարակության ցանկացած անդամ հնարավորություն ունենա բացահայտելու իր ստեղծարար ներուժը, ներառվի և ներգրավվի զարգացման գործընթացներում՝ հարստանալով անձամբ և նպաստելով տնտեսության զարգացման ու աճի գործընթացներին: Դրանց կարևոր հատկանիշը հասարակության բոլոր անդամների համար տնտեսական գործունեության հավասար ու նպաստավոր դաշտի ձևավորումն է: Այս ինստիտուտները ստեղծում են որոշակի խթաններ, որոնք շահագրգռում են մարդկանց՝ գործունեություն ծավալել:

Կարևոր դեր ունեն սեփականության, հեղինակային իրավունքի ու պատենտի գաղափարները: Պատենտը թույլ է տալիս ցանկացած մարդու զբաղվել նոր գաղափարների փնտրտուքով և օրենքով ամրագրելով դրա հանդեպ իր հեղինակային իրավունքը, այն վերածել բիզնեսի կամ վաճառել դրանով հետաքրքրված այլ գործարարների: Ներառական տնտեսական ինստիտուտների կարևոր հատկանիշներից մեկն էլ այն է, որ դրանք դիմադրում և ի վերջո բացառում են մենաշնորհների ճնշող գերիշխանությունը:

Բոլորովին այլ գործառույթ են իրականացնում կորզող տնտեսական ինստիտուտները: Դրանք առաջին հերթին ուղղված են սպասարկելու իշխանություն ունեցող շրջանակների տնտեսական շահերն ու ծառայելու նրանց հարստացմանը: Դրանց գլխավոր նպատակներից մեկը տնտեսական շահութաբեր ոլորտներում մրցակցային պայմանների բացառումն է ու արտոնյալ վերնախավերի տնտեսական գործունեության համար մենաշնորհային կարգավիճակի ձևավորումը:

Եթե ներառական ինստիտուտները խրախուսում են մրցակցային բարձր հատկություններ ցուցաբերող ձեռներեցների ու կազմակերպությունների առաջընթացը, ապա կորզող ինստիտուտներն ընդհակառակը, բոլոր միջոցներով խոչընդոտում են հասարակության մնացած անդամների տնտեսական գործունեության հնարավորությունները՝ նրանց մղելով լուսանցքային տարածքներ և դարձնելով գործիք՝ մենաշնորհային դիրք զբաղեցնող վերնախավերի հարստացման գործում:

Հեղինակների եզրակացությունն այն է, որ աղքատ երկրներում տիրապետող են կորզող ինստիտուտները, որոնք արգելափակում են մարդկանց տնտեսական

նախաձեռնողականությունը և հնարավորությունները:

Քաղաքական ինստիտուտների որոշիչ դերը

Գրքի երկրորդ խոշոր գաղափարն այն է, որ բացի ներառական ու կորզող տնտեսական ինստիտուտները, կան նաև *ներառական ու կորզող բնույթի քաղաքական* ինստիտուտներ: Քաղաքականի ու տնտեսականի միջև գործում են ամուր ու փոխադարձ կապեր: Կորզող տնտեսական ինստիտուտները գոյություն ունեն շնորհիվ կորզող քաղաքական ինստիտուտների հովանավորության:

Չեղինակներն իրենք այսպես են ձևակերպում կորզող ու ներառական քաղաքական ինստիտուտները՝ «Բավարար չափով կենտրոնացված և բազմավար քաղաքական ինստիտուտները մենք կանվանենք ներառական քաղաքական ինստիտուտներ: Այս պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում քաղաքական ինստիտուտները կանվանենք կորզող»:

Ինչպես տեսնում ենք, այս մեջբերման մեջ երկու կարևոր հասկացություն կա՝ *կենտրոնացված քաղաքական ինստիտուտներ* և *բազմավար քաղաքական ինստիտուտներ*: Առաջին հայացքից թվում է, թե բազմավար և կենտրոնացված քաղաքական ինստիտուտները համատեղելի չեն և դրանք հակընդդեմ դերակատարում ունեն: Սակայն, հեղինակներն այլ կերպ են մոտենում այս հարցին:

Բազմավար ինստիտուտներն անհրաժեշտ են, որպեսզի ապահովեն հնարավորինս շատ մարդկանց մասնակցությունը քաղաքական գործընթացներին: Սրանք նաև ապահովում են հասարակության մեջ *իշխանության բաշխման* համաչափությունը: Իսկ կենտրոնացված ու ուժեղ ինստիտուտներն անհրաժեշտ են, որպեսզի բացառեն այս կամ այն խմբի կողմից տնտեսական ու քաղաքական ինստիտուտների վրա ճնշումների գործադրումն ու ծառայեցումը խմբային շահերին:

Հասարակության անդամներն ինստիտուտների շնորհիվ ունենում են հավասար հնարավորություն՝ այդ ինստիտուտների գործունեությունը իրենց ծառայեցնելու համար: Այստեղ, ի տարբերություն աղքատ երկրների, ինստիտուտները բացառում են առանձին արտոնյալ անհատների շահերին դրանց ծառայեցումը: Սա նաև ապահովում է քաղաքացիների ներառականությունը քաղաքական գործընթացներում, ապահովում քաղաքական գործիչների վարքը վերահսկելու ու ինստիտուտների գործունեության վրա ազդելու հնարավորությունը: Իշխանությունը լայնորեն բաշխող ներառական քաղաքական ինստիտուտները հակված են արմատախիլ անել այն տնտեսական մեխանիզմները, որոնք մի քանի հոգու շահի համար յուրացնում են մեծամասնության ունեցվածքը, ստեղծում են շուկա մուտք գործելու խոչընդոտներ և սահմանափակում շուկաների գործունեությունը: Այս տեսանկյունից չափազանց բնութագրական օրինակ է մեքսիկացի միլիարդատեր Կարլոս Սլիմի և ամերիկացի գործարար Բիլ Գեյթսի հարստացման պատմությունների համեմատական նկարագիրը:

Պետությունները ձախողում են, երբ ունեն կորզող տնտեսական և դրանց օժանդակող քաղաքական ինստիտուտներ: Կարևոր է չչփոթել բացարձակատիրությունը և կենտրոնացված

քաղաքական ինստիտուտները միմյանց հետ: Առաջինը կենտրոնացնում է ուժը նեղ խմբի ձեռքում՝ հասարակության մնացած խավերին ճնշած պահելու նպատակով: Իսկ երկրորդի դեպքում քաղաքական հաստատությունները ծառայում են հասարակության մեջ իշխանության հավասարաչափ բաշխմանը և ներառական տնտեսական ինստիտուտների գործունեությունն ապահովելուն:

Ներառական տնտեսական ինստիտուտների գաղափարն ուղեկցվում է մի շարք այլ առանցքային գաղափարներով: Դրանցից մեկը *ստեղծարար ոչնչացման* և *տեխնոլոգիական առաջընթացի* գաղափարն է: Ներառական տնտեսական ինստիտուտները մեծ հնարավորություն են ստեղծում ստեղծարարության, նոր գաղափարների ու տեխնոլոգիաների առաջացման: Սրանք իրենց հերթին «ոչնչացնում են» գործող տեխնոլոգիաները և տնտեսական կառույցները՝ փոխարինելով դրանք նորերով:

Կորզող տնտեսական ինստիտուտները խիստ դիմադրում են ստեղծարարությանն ու նոր տեխնոլոգիաներին, քանի որ վախենում են, որ դրանք կարող են թուլացնել արդեն փորձված ու ազդեցիկ տնտեսական ինստիտուտները, որոնց վրա կառուցված է կորզող քաղաքական ինստիտուտների իշխանությունը: Գրքում բերված են բազմաթիվ օրինակներ, թե ինչպես են կորզող ինստիտուտներն արգելափակում նոր գյուտերի ու տեխնոլոգիաների կյանքի կոչումը, վախենալով դրանցից սպասվող հնարավոր փոփոխություններից:

Գրքի կարևոր հասկացություններից կցանկանայի առանձնացնել նաև *բեկումնային փուլեր* և *փոքր տարբերություններ* հասկացությունները: Բեկումնային փուլի օրինակ է *Սև մահի*՝ ժանտախտի տարածումը Եվրոպայում կամ Ամերիկայի հայտնաբերումը: Փոքր տարբերությունների շնորհիվ Անգլիայում ժանտախտից հետո գործընթացները հանգեցրեցին ավատատիրության ավարտին և վարձու աշխատուժի ձևավորմանը, իսկ Արևելյան Եվրոպայում ու Ռուսաստանում՝ հակառակը՝ ավատատիրության խորացմանը: Կամ՝ Լատինական Ամերիկայում փոքր տարբերությունները ձևավորեցին կորզող տնտեսությունների վրա հենված բացարձակատիրություններ, մինչդեռ Չյուսիսային Ամերիկայում՝ ներառական քաղաքական ու տնտեսական ինստիտուտներ:

Փոքր տարբերությունների շնորհիվ կարող է ձևավորվել *բարենպաստ շրջան*: Բարենպաստ ժամանակաշրջանի ձևավորման համար կարևոր է, որ բացարձակատիրական վերնախավերը գերադասեն փոքր զիջումների գնալը, այլ ոչ՝ բռնաճնշումների ուժեղացումը: Եթե բեկումնային պահերին վերնախավերն անցնում են բռնաճնշումների ուժեղացմանը, ապա բարենպաստ շրջանի փոխարեն պետությունները կարող են հայտնվել երկարատև ձգնաժամի մեջ, ինչը հեղինակներն անվանում են հոռի շրջան: Հոռի շրջանում կորզող ինստիտուտները կարող են այն աստիճան հարստահարել ու աղքատացնել հասարակությունն ի նպաստ վերնախավերի նեղ շրջանակի հարստացման, որ պետությունը հայտնվի ձախողման եզրին:

«Ինչու են ձախողվում պետությունները» գրքին նվիրված այս ակնարկը կցանկանայի եզրափակել երկու մեջբերումով. «...հարուստ երկրների կառավարությունները ծառայում են

իրենց երկրների քաղաքացիներին, իսկ աղքատ երկրների կառավարությունները այդ երկրների վերնախավերին» և «...աղքատ պետություններն աղքատ են, որովհետև իշխանություն ունեցողները աղքատություն ձևավորող որոշումներ են կայացնում»:

Հաջողակ պետությունները նման են իրար, յուրաքանչյուր պետություն ձախողվում է յուրովի

Ավետիք Մեջլումյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

«Ինչու են ձախողվում պետությունները» (**Why Nations Fail**) գիրքը հրատարակվել է 2012-ին և դարձել աշխարհում ամենաշատ քննարկվող աշխատություններից մեկը: Սա պատմագիտական հարուստ նյութ պարունակող միջգիտակարգային աշխատանք է, որ միաժամանակ աղերսներ ունի համեմատական քաղաքագիտության, տնտեսագիտության, սոցիոլոգիայի և այլ գիտակարգերի հետ:

Տարոն Աձեմօղլուն ամերիկացի տնտեսագետ է՝ ծնված 1967-ին, **Ստամբուլի հայկական ընտանիքում**: 1992-ին Լոնդոնի տնտեսագիտական դպրոցում մագիստրոսի, այնուհետև՝ դոկտորի գիտական աստիճան է ստացել: 2004-ից **Մասսաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի կիրառական տնտեսագիտության ամբիոնի պրոֆեսոր է**: Գրքի համահեղինակ **Ջեյմս Ռոբինսոնը** (ծնված 1960-ին) բրիտանացի տնտեսագետ և քաղաքագետ է, Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր: Դասավանդել է նաև Հարվարդում, Բերկլիում, Կալիֆորնիայի համալսարանում:

Չաշխատող տեսություններ

Նախքան գրքի հիմնադրույթները շարադրելը, հեղինակները քննարկում են պետությունների զարգացումը բացատրող տարբեր տեսությունների սահմանափակումները: Դրանցից մեկն, օրինակ, մշակութային տեսությունն է, որ զարգացման կամ անկման մեջ կարևորում է մշակույթի դերը: Օրինակ, գերմանացի սոցիոլոգ Մաքս Վեբերը կապիտալիզմի ոգու զարգացման մեջ տեսնում է կրոնական գործոնի դերակատարությունը՝ բողոքական շարժման և բողոքական էթիկայի նշանակալի ազդեցությունը:

Սակայն, ըստ հեղինակների, վարքի, արժեքների ու կանոնների միջև առկա տարբերությունները ոչ թե մշակութային պատճառներից են, այլ՝ հաստատությունների (ինստիտուտների) և անցած ճանապարհի տարբերությունների հետևանք: Ակնառու օրինակներից մեկը Հյուսիսային և Հարավային Կորեաներն են, որոնք մինչև 1948 թ. բաժանումը մի պետություն էին: Հարավային Կորեան հիմնված է մասնավոր սեփականության և

շուկայական հարաբերությունների վրա: Յուսուսային Կորեան ավտորիտար, ռազմականացված և վարչահրամայական մի պետություն է: Չնայած էթնիկ մշակույթի և պատմական անցյալի ընդհանրությանը, այս պետությունները բևեռապես հակադիր համակարգեր են՝ պայմանավորված իրենց տնտեսական ու քաղաքական հաստատությունների տարբերություններով:

Նույն կերպ հեղինակները քննարկում և ի ցույց են դնում աշխարհագրական, անտեղյակության, արդիականացման և այլ տեսությունների սահմանափակ ներուժը՝ բացատրելու աշխարհի տարբեր պետությունների հաջողության և ձախողման գաղտնիքները:

Այդ դեպքում, ինչն է աշխատում

Որևէ պետության հաջողությունն ու ձախողումը մեծապես պայմանավորված է տվյալ հասարակության քաղաքական հաստատություններով: Հաստատությունները՝ **քաղաքականության մեջ խթանները կարգավորող կանոններն են:** Վերջիններս որոշում են, թե ինչպես է ձևավորվում կառավարությունը, և թե դրա որ հատվածն ինչ լիազորություն ունի: Քաղաքական հաստատությունները կանխորոշում են, թե հասարակությունում ով ունի իշխանություն, և ինչ նպատակների համար այն կարող է գործադրվել: **Հասարակության մեջ իշխանությունը լայնորեն բաշխող և այն սահմանափակող քաղաքական հաստատությունները բազմավար (pluralistic) են:** Մինչդեռ կորզող քաղաքական հաստատությունները իշխանությունը կենտրոնացնում են նեղ վերնախավի ձեռքում և այդ իշխանության կիրառումը գրեթե չեն սահմանափակում:

Հետևաբար, տնտեսական հաստատություններն այս վերնախավի կողմից այնպես են կազմակերպվում, որ **հասարակության մնացած մասից ռեսուրսներ կորզվեն:**

Պետությունները ձախողվում են, երբ ունեն կորզող տնտեսական հաստատություններ և դրանց օժանդակող կորզող քաղաքական հաստատություններ, **որոնք դժվարացնում կամ նույնիսկ անհնար են դարձնում տնտեսական աճը:**

Հաջող ելքը պատմականորեն կանխորոշված չէ, այլ պատահական է: Հաստատությունների զարգացման ուղին կախված է նրանից, թե պատմական կարևոր պահերին հակամարտող ուժերից որ մեկը կհասնի հաջողության, որ խմբերը կհաջողեն ձևավորել արդյունավետ համագործակցություն, և թե որ առաջնորդներն ի վիճակի կլինեն հանգամանքներն օգտագործել իրենց օգտին:

Միայն բազմավար ու ներառական հաստատություններ ունենալը բավարար չէ: Անհրաժեշտ է նաև, որ լինի **բավարար չափով կենտրոնացված և հզոր պետական համակարգ, որը կկանխի քաոսն ու ազդեցիկ ուժերի կողմից իշխանության յուրացումը:**

Օրինակ, Արևմտյան Աֆրիկայի Սոմալի պետությունը բաժանված է խիստ հակադրվող համայնքների, որոնցից ոչ մեկը չի կարող գերակայել մյուսի նկատմամբ: Մեկի իշխանությունը սահմանափակվում է մյուսի զենքով: **Իշխանության այսպիսի բաշխումը բերում է ոչ թե ներառական տնտեսական հաստատությունների, այլ՝ քաոսի:**

Թե՛ բացարձակատիրությունը, թե՛ քաղաքական կենտրոնացման պակասը (կամ վերջինիս

թուլությունը) տնտեսության զարգացման՝ տարբեր բևեռներում գտնվող խոչընդոտներն են: **Բավարար չափով կենտրոնացված և բազմավար քաղաքական հաստատությունները ներառական քաղաքական հաստատություններ են: Այս պայմաններից մեկի բացակայության դեպքում քաղաքական հաստատությունները կորզող են:**

Վախ՝ ստեղծարար ոչնչացումից

Իշխող խմբավորումները, որպես կանոն, վախենում են տեխնոլոգիական առաջընթացով պայմանավորված **ստեղծարար ոչնչացումից (creative destruction)**: Նոր, տնտեսապես ակտիվ խավը վաղ թե ուշ հավակնելու է իշխանության իր մասնաբաժնին:

Ավստրո-Յունգարական կայսրությունում, օրինակ, վախ կար նույնիսկ+ երկաթուղուց և գործարաններից: **Քաղաքներում կառուցվող գործարանների թիվը պետք է սահմանափակել, քանի որ դրանց շուրջ կուտակվում են բանվորները՝ ապագա հեղափոխական զանգվածը:** Երկաթուղին նույնպես չարիք է՝ շարժունության միջոցով (գյուղից՝ քաղաք) այդ կուտակմանը նպաստող: Այդ պատճառով էր, օրինակ, որ 1802-ին արգելվեց Վիեննայում նոր գործարանների կառուցումը: Արդյունաբերականացման հիմքը կազմող նոր սարքավորումների ներկրումն ու կիրառումը արգելվեց մինչև 1811-ը: Երբ հյուսիսային երկաթուղի կառուցելու ծրագիրը դրվեց կայսեր Ֆրանց II-ի առջև, նա պատասխանեց. «Ոչ, ոչ: Սրա հետ գործ չունեմ, այսպես կարող է հեղափոխություն գալ երկիր»:

Ֆրանց II-ի պես ռուս ցար Նիկոլայն էլ էր վախենում, որ արդի արդյունաբերական տնտեսության բերած ստեղծարար ոչնչացումը կխաթարի քաղաքական ստատուս-քվոն Ռուսաստանում: Օրինակ, հանրային կարգն ապահովելու պատասխանատու, Մոսկվայի գեներալ-նահանգապետ Ա. Ա. Ջակրևսկին Նիկոլային գրում է. **«Յանգստություն ու բարոքություն պահպանելու համար, որն այս պահին վայելում է միայն Ռուսաստանը, կառավարությունը պետք է արգելի տնանկների և մուրացիկների խմբվելը, որոնք հեշտորեն կմիանան որևէ շարժման և կխանգարեն հասարակական ու անհատական հանգիստը»:**

Նրա առաջարկը ներկայացվեց Նիկոլայի նախարարներին, և 1849-ին ընդունվեց նոր օրենք, որը խիստ սահմանափակեց Մոսկվայի որևէ մասում բացվելիք գործարանների քանակը: Օրենքն արգելում էր բացել բամբակ կամ բուրդ մանելու նոր արտադրամասեր ու մետաղաձուլարաններ: Արտադրության այլ ոլորտները, ինչպիսիք էին տեքստիլը և ներկի արտադրությունը, նոր գործարաններ բացելու համար պետք է դիմում ներկայացնեին գեներալ-նահանգապետին:

Մինչև 1842-ը Ռուսաստանում գործում էր միայն Յարկոյե Սելո երկաթուղին, որն ուներ 17 մղոն երկարություն և Սանկտ Պետերբուրգը միացնում էր կայսերական կալվածքների հետ: Ֆինանսների մինիստր Կանկրինի պնդմամբ, երկաթուղու զարգացումը կբերեր սոցիալապես վտանգավոր շարժունակության:

Անգլիայում ստեղծարար ոչնչացման հանդեպ վախի դրսևորումներից էր լուդիթների շարժումը. **1753-ին լուդիթներն այրեցին անգլիացի գյուտարար Ջոն Թեյի տունը, որը 1733-ին ստեղծել էր «թռչող մաքրիչը»,** ինչը մանածագործության ոլորտում մեքենայացման առաջին կարևոր

քայլերից էր:

Այսպիսով, տնտեսական աճի գործընթացը և ներառական հաստատությունները խախտում են ստատուս քվոն, ձևավորում են նոր, տնտեսապես կայացած խավեր, որոնք էլ կարող են հավակնել իշխանության իրենց մասնաբաժնին: **Ներառական տնտեսական և քաղաքական հաստատությունների հանդեպ դիմադրության ակունքներում հենց այս փոփոխության ու կորուստների հանդեպ վախն է:**

Աձը՝ կորզող հաստատությունների ներքո

Նույնիսկ կորզող տնտեսական հաստատությունների պայմաններում հնարավոր է աճ ապահովել, երբ.

- **Վերնախավը ռեսուրսներն ուղղում է** իր կողմից վերահսկվող և բարձր արտադրողականություն ունեցող ոլորտներ:
- Կամ՝ երբ հաստատությունները հնարավորություն են տալիս, որպեսզի առաջանան **որոշ չափով ներառական տնտեսական հաստատություններ:**

Օրինակ, 17-18-րդ դարերի **Բարբադոսը, Կուբան, Յայիթին և Ճապոնիան** ստրուկներին դաժանորեն շահագործելու շնորհիվ շաքար էին արտադրում և վաճառում համաշխարհային շուկաներում:

Մեկ այլ օրինակ է **Խորհրդային Միության տնտեսական աճը և արդյունաբերականացումը՝ սկսած 1928-ի առաջին հնգամյա ծրագրից մինչև 1970-ականները:** Խորհրդային Միությանը հաջողվեց տնտեսապես արագ աճել, քանի որ պետական իշխանությունը **ռեսուրսները գյուղատնտեսության ոլորտից արդյունաբերության ոլորտ էր փոխանցում:** Սակայն հասնելով իր սահմանին՝ այդ աճը կանգ առավ 1970-ականներին, քանի որ տնտեսության մեծ հատվածում **տեխնոլոգիական փոփոխություն գրեթե չնկատվեց: Զարգացան միայն ռազմարդյունաբերությունը և տիեզերքի նվաճման ու միջուկային ոլորտները:**

Կորզող հաստատությունները չեն կարող ապահովել հարատև տեխնոլոգիական փոփոխություններ երկու պատճառով՝ **տնտեսական խթանների (շարժառիթների) պակասի և վերնախավի դիմադրության:** Խորհրդային համակարգը փակուղի մտավ նորարարության պակասից և հետագա զարգացումն ապահովող տնտեսական խթանների բացակայությունից: Ինչ-որ պահից սկսած **հաստատությունները կխոչընդոտեն աճը՝ զգուշանալով ստեղծարար ոչնչացումից:**

Ներառական ինստիտուտներ. դեղատոմսեր չկան

Ներառական ինստիտուտներ ձևավորելու **դեղատոմսեր չկան:** Շատ բան կախված է նախընթաց գոյություն ունեցող քաղաքական հաստատություններից, դրանց մեջ ներառականության տարրերից, լայն զանգվածների ներգրավումից՝ շարժումների և լայն կոալիցիաների ստեղծման համար: Այս հարցում **դետերմինիզմ չի գործում, և կանխորոշված չէ**

ոչինչ: Կանխատեսումներ անելը ևս դժվար է:

Չկա ինստիտուցիոնալ զարգացման պարզ, կուտակային գործընթաց: Պատմական որոշակի շրջանում ձևավորված ներառական հաստատությունները կարող են հետընթաց ապրել՝ կարծրանալ, վերածվել կորզող հաստատությունների (հեղինակները բերում են Վենետիկի աճի և անկման օրինակը):

Ներառական հաստատությունների զարգացմանը կարող են նպաստել.

- Հաստատություններում գոյություն ունեցող ներառական տարրերը,
- Եղած ռեժիմի դեմ պայքարի հանգեցնող լայն կոալիցիաները,
- **Պատմության պատահական ընթացքը և անձի կայացրած որոշումները:**

Ներառական լինելու համար տնտեսական ինստիտուտները պետք է ապահովեն

- Մասնավոր սեփականության անձեռնմխելիություն,
- Տնտեսական գործունեության համար հավասար պայմաններ ստեղծող անաչառ իրավական համակարգ,
- Հանրային ծառայություններ (որոնք ապահովում են այնպիսի միջավայր, որտեղ մարդիկ կարող են փոխանակում կատարել և պայմանագրեր կնքել),
- Նոր ձեռնարկություն ստեղծելու հնարավորություն,
- Մասնագիտությունն ինքնուրույն ընտրելու հնարավորություն:

Նշվածների ցանկում **մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը կենտրոնական դեր է խաղում**, քանի որ միայն այդ իրավունքի կրողը ցանկություն կունենա ներդրում անել և ավելացնել արտադրողականությունը:

Քննադատական հայացք

Պետությունների ձախողման հակոտնյան՝ հաջողությունը, այս գրքում նույնացվում է տնտեսական աճի հետ. հաջողակ են այն պետությունները, որ կայուն տնտեսական աճ են ապահովում: **Հաջողության այլ չափումներն անտեսված են.** անվտանգության խնդիրների լուծումը, մարդու իրավունքների ապահովումը, սոցիալական արդարության ու հավասարության խթանումը, վերջապես՝ հասարակության և բնության ներդաշնակությունն ու մարդու երջանկության պայմանները: Այն, որ տնտեսապես հաջողակ երկրները կարող են ձախողվել նշվածներից որևէ մեկում կամ մի քանիսում, հատուկ քննարկման առարկա չի դառնում:

Գիրքը խիստ արևմտակենտրոն է. հատկապես ԱՄՆ-ն դիտարկվում է որպես ներառական ինստիտուտներ ունեցող օրինակելի մի համակարգ: Մինչդեռ խնդրահարույց է թե՛ ներառականության չափելիությունը (որտե՞ղ են անցնում ներառականի և ոչ ներառականի սահմանները, ինչպե՞ս գնահատել դա), թե՛ արևմտյան զարգացած երկրների ինստիտուտների ներառականության ակնհայտ բացերի անտեսումը:

Սկանդինավյան երկրներն, օրինակ, որոնց կենսակերպն ու տնտեսական աճի հավասարակշռումը՝ սոցիալական հավասարության ապահովման թիրախներով, էականորեն տարբերվում են ԱՄՆ համանման պայմաններից, գրքում գրեթե չեն հիշատակվում: Գրեթե անտեսված են նաև գրքի առանցքային գաղափարներին ոչ համահունչ օրինակները՝ ասիական

տարբեր երկրները, որտեղ տնտեսական աճը պայմանավորված չի եղել ներառական քաղաքական ինստիտուտներով:


Խնդրահարույց են նաև «ինստիտուտ» եզրի կիրառության իմաստային նրբերանգները: Հազվագյուտ մեկնաբանություններից մեկում, ինչպես տեսանք, ինստիտուտը նույնացվում է խաղի կանոնների՝ որոշակի կարգավորումների հետ: Սակայն ինստիտուտներին բնորոշ է նաև ժամանակի մեջ տևականությունը, դերերի ու կարգավիճակների, սանկցիաների ու խրախուսանքների համակարգեր ունենալը, կայուն վարքաձևերն ու դրանց համապատասխան (ամրապնդող) սոցիալական նորմերը: Հաճախ այն, ինչ գրքում դիտարկվում է որպես ինստիտուտ, **կարելի է պարզապես կոչել իրավական կարգավորում, մշակութային կամ սոցիալական պրակտիկա:** Այդ իրավական կանոններին ու պրակտիկաներին հաճախ պակասում է **որոշակիությունը, տևականությունը, կանխատեսելիությունն ու այլ «ծանրակշիռ հանգամանքները»՝ իրապես ինստիտուտ համարվելու համար:**

Քննարկելով ու մերժելով պետությունների վերելքը բացատրող տարբեր տեսություններ՝ հեղինակներն անտեսում են հնարավոր պարզ լուծումներից մեկը. **այնտեղ, որտեղ չի աշխատում առանձին վերցրած որևէ տեսություն, միգուցե տեսությունների համադրությունը կարող է ինչ-որ բան բացատրել:** Այո, առանձին վերցրած աշխարհագրական կամ մշակութային տեսությունները միշտ էլ կիսատ են ինչ-որ բան բացատրում: Ձախողումը չի կարող միայն վատ կլիմայի կամ միայն «վատ» մշակութային արժեքների կամ միայն կառավարող խմբերի անտեղյակությամբ պայմանավորված լինել: Իսկ միգուցե այս բոլոր գործոնների միաժամանակյա գործողությունն է ձախողման հանգեցրել:

Ինստիտուտների դերի գերարժևորումը շեղում է այն հիմնարար ու պարզ հարցադրումից, թե այդ ինստիտուտների ներառականության հիմքում ինչն է ընկած: Օրինակ, ներառական տնտեսական ինստիտուտները ենթադրում են արդար և կանխատեսելի խաղի կանոններ:

Ի՞նչն է նպաստում այդ կանոնների ձևավորմանն ու պահպանմանը: Հնարավոր է՝ մարդկանց միջև վստահությունը՝ որպես սոցիալական կապիտալի դրսևորում: Հնարավոր է՝ մարդկանց միջև համագործակցության հաջողված պրակտիկաները: Իսկ ի՞նչն է, որ սնում է վստահությունն ու համագործակցությունը:

Հարցադրումների այս երկար շարքն, ի վերջո, մեզ մոտեցնում է **ինստիտուտների հիմքում ընկած ժողովրդական կյանքի անշոշափելի կողմերին՝ կենսակերպի, միջավայրային գործոնների, հավատալիքների, կրոնի, սովորույթների, արժեքների ու գաղափարների անտեսանելի ցանցին:** Ինստիտուտը ոչ սկզբնապատճառ է, ոչ էլ տրված իրողություն: Այն սոցիալական կառուցվածք է, որը հասկանալու համար ավելի լայն հայացքի կարիք ունենք:



ԿԱՊԻՏԱԼԻՉՄ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Միլթոն Ֆրիդմեն

Գիրք & Միտք #2 | Կապիտալիզմ և ազատություն
Աշոտ Տերտերյան և Ավետիք Մեջլումյան

Կապիտալիզմը՝ պետության զարգացման գրավական

Աշոտ Տերտերյան

Իրավաբան

Ամերիկացի տնտեսագետ, Նոբելյան մրցանակակիր Միլթոն Ֆրիդմենը աշխարհի ամենաձանաչելի տնտեսագետներից մեկն է: Ֆրիդմենը Չիկագոյի տնտեսագիտական դպրոցի և ազատական տնտեսագիտության առանցքային ներկայացուցիչներից է:

Նրա ամենահայտնի աշխատությունը 1962 թվականին հրատարակված «Կապիտալիզմ և ազատություն» գիրքն է: Գիրքը գրված է հրապարակախոսական ոճով և հանրամատչելի է. դրանով այն կարող է ընկալելի լինել նաև տնտեսագիտական կրթություն չունեցող մարդկանց համար:

«Կապիտալիզմ և ազատություն»-ը լույս է տեսել մի ժամանակաշրջանում, երբ ԱՄՆ-ում տարածվում էին ձախական գաղափարները, որոնց հիման վրա աճում էին նաև պետական ծախսերը և միջամտությունը տնտեսության մեջ: 1950-ականների վերջի և 1960-ականների սկզբի Ամերիկան բավական տարբերվում էր 20-րդ դարի սկզբի Ամերիկայից՝ իր կառավարության մեծությամբ, ծախսերի աճով և ազատությունների նվազմամբ:

Այս ամենը դրդեց Միլթոն Ֆրիդմենին գրքի միջոցով փորձելու զգուշացնել տնտեսության մեջ պետության միջամտության աճի բացասական հետևանքների մասին և ցույց տալու, որ դա կրեթի մարդկանց ազատության նվազման և ավելի վատ տնտեսական հետևանքների:

Ֆրիդմենը փորձում է հիմնավորել, որ ազատ հասարակարգի անհրաժեշտ նախապայմաններից մեկը ազատ շուկայական կապիտալիզմն է: Գրքի գլխավոր թեման մրցակցային կապիտալիզմի դերն է քաղաքական ազատությունների մեջ, և պետության դերը ազատ հասարակարգում:

Ըստ Միլթոն Ֆրիդմենի, ազատության գլխավոր սպառնալիքը իշխանության կենտրոնացումն է:

Նա նշում է, որ պետությունը անհրաժեշտ է մարդկանց ազատությունը պաշտպանելու համար, և միևնույն ժամանակ այն կարող է սպառնալ նրանց ազատությանը:

Ինչպե՞ս կարող ենք օգտվել պետության պաշտպանած ազատությունից և միևնույն ժամանակ խուսափել ազատության նկատմամբ սպառնալիքներից: Երկու ձև կա:

Առաջինը, այսպես ասած, պետության կողմից ղեկավարվող ոլորտների սահմանափակումն է պաշտպանության գործառույթով (ներքին և արտաքին ոտնձգողներից) և օրենքի կիրառումն ապահովելու գործառույթով:

Պետությունը պետք է ապահովի օրենքի կիրառումը, դատական իշխանությունը, խրախուսի շուկայական մրցակցությունը: Պետությունը պետք է նաև օգնի մեզ իրականացնելու այնպիսի ծրագրեր, որոնք միայնակ կամ առանց պետության օգնության իրականացնելը դժվար է կամ անհնար:

Պետության նման սահմանափակումն անհրաժեշտ է, որպեսզի մասնավոր հատվածը հնարավորություն ունենա լինելու հակակշիռ՝ պետության փորձերին՝ իշխանությունը կենտրոնացնելու իր ձեռքում և սպառնալու ազատությանը:

2-րդ ձևն այն է, որ պետության իշխանությունը պիտի տարաբաշխվի՝ ավելի լավ է իշխանությունը լինի համայնքում, քան մարզում, մարզում, քան մայրաքաղաքում:

Իշխանության տարաբաշխման նշանակությունը կայանում է նրանում, որ այդ կերպ մենք կարող ենք խուսափել մենաշնորհային իշխանության հարկադրանքից: Օրինակ, երբ մեր համայնքում իշխանության կայացրած որոշումները մեզ դուր չեն գալիս, մենք կարող ենք տեղափոխվել այլ համայնք, որտեղ այլ իշխանություն է և այլ կարգավորումներ: Բայց եթե իշխանությունն ամբողջությամբ մայրաքաղաքում է, ապա մենք փախչելու տեղ չունենք. ամեն տեղ էլ կգործեն մայրաքաղաքի որոշումները:

Իշխանությունից նման կերպ խուսափելը բերում է իշխանության հակակշռման:

Ֆրիդմենը առաջ է մղում նաև այն գաղափարը, համաձայն որի՝ իշխանության կենտրոնացումը կառավարության ձեռքում կարող է օգտագործվել երկակի: Եթե առկա է իշխանություն, ապա այդ իշխանությունը կարող է կիրառվել ինչպես բարիքի համար, այնպես էլ չարիքի:

Չկա երաշխիք, որ, օրինակ, եկամտի վերաբաշխման լիազորությունը պետությունը չի կիրառի նաև վատ նպատակով՝ գիտակցելով դրա մասին, թե ոչ: Օրինակ, հարստության վերաբաշխման նպատակով բարձր եկամուտ ունեցողների հարկումը շատ բարձր հարկով՝ կբերի տնտեսությունների սնանկացման և փակման:

Չեղինակը մի կարևոր գաղափար է ընդգծում, համաձայն որի՝ կառավարությունը երբեք չի կարող կրկնել անհատական գործողության բազմազանությունը: Կառավարությունը կարող է միայն ընդհանուր չափանիշներ սահմանել, ինչը կբերի միօրինակության, իսկ դա էլ իր հերթին առաջընթացը կփոխարինի լծացմամբ, որովհետև մարդու՝ փորձարարություն անելու հնարավորությունը կզսպվի:

Իսկ մարդու անհատական գործողության բազամազանությունն ապահովող առավել արդյունավետ կարգն ազատ մրցակցային կապիտալիզմն է. դրանով այն հանդիսանում է տնտեսության և հասարակության զարգացմանն առավել նպաստող համակարգ:

Ըստ Ֆրիդմենի, շուկայի առանձնահատկությունն այն է, որ այն ապահովում է միակարծություն՝ առանց միօրինակության՝ դրանով ապահովելով գործուն ներկայացուցչության արտահայտում:

Որքան շատ հարցեր են թողնված ազատ շուկայի կարգավորմանը, այնքան քիչ անհրաժեշտություն կա քաղաքական համաձայնության, իսկ որքան շատ կա քաղաքական համաձայնության կարիք, այնքան դժվար է ազատ հասարակությունը պահել:

Այս յուրահատկության շնորհիվ, ազատ շուկայական կապիտալիզմը նվազեցնում է պետական լծակներին տիրելու գայթակղությունը և իշխանության կողմից բնակչությանը սիրաշահելու անհրաժեշտությունը: Սա օգնում է քաղաքական իշխանության կենտրոնացումից խուսափել, որն էլ իր հերթին նպաստում է ազատությանը:

Վերոնշյալ գաղափարները հիմնավորելու համար Ֆրիդմենն անդրադառնում է մի շարք հասարակական և տնտեսական խնդիրների՝ պետության միջամտության և ազատ զարգացման տեսակետից, օրինակ՝ հարկային, կրթական, առողջապահական, համայնքային քաղաքականությունները, աղքատության հաղթահարման առավել արդյունավետ կապիտալիստական մեթոդները, և այլն:

Միլթոն Ֆրիդմենը, կողմնակից լինելով առավել ազատ տնտեսական հարաբերությունների, քան Քեյնսականները, միաժամանակ կողմ է տնտեսության մեջ պետության ավելի մեծ դերի, քան, օրինակ, Ավստրիական տնտեսագիտական դպրոցի ներկայացուցիչները (որոնց առավել ծայրահեղ հեղինակները նույնիսկ համարում են, որ պետությունը չպիտի միջամտի դատական համակարգին կամ հակամրցակցային օրենսդրություն կիրառի):

Մի շարք գնահատականներով, «Կապիտալիզմ և ազատություն» գիրքը ճանաչվել է 20-րդ դարի լավագույն 100 ոչ գեղարվեստական գրքերից մեկը:

Նաև այս գրքի ազդեցությամբ իրականացվեցին խորքային տնտեսական բարեփոխումներ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, նախկին կոմունիստական ճամբարի մի շարք երկրներում:

Գրքում արծարծված որոշ գաղափարներ, օրինակ, համահարթ հարկումը, կիրառվել են մի շարք պետությունների կողմից, այդ թվում՝ Չայաստանի, Էստոնիայի, Բուլղարիայի, Ռումինիայի: Վաուչերային կրթական համակարգը կիրառվել է Չիլիի, Ֆրանսիայի, Իռլանդիայի, Կոլումբիայի և այլ երկրների կողմից:

Չայաստանի հասարակությունը, ունենալով կոմունիստական անցյալ, ազդվելով հակաարևմտյան քարոզչությունից, ինչպես նաև՝ ձախական գաղափարախոսությունից, մեծամասամբ զգուշավոր և երբեմն թշնամական վերաբերմունք ունի մրցակցային կապիտալիզմի նկատմամբ: Շատերն այն համարում են սոցիալական անարդարության, տնտեսության քանդման և պետության թուլացման պատճառ:

Պետք է նկատել սակայն, որ մրցակցային կապիտալիզմը Հայաստանում գործում է ընդամենը մի քանի տասնամյակ, և այն էլ սահմանափակված ձևով, ինչը խոչընդոտել է դրա բոլոր դրական արդյունքների ավելի արագ ստացմանը:

Այս համատեքստում կարևոր է, որպեսզի գրքին հնարավորինս լայն զանգվածներ ծանոթանան և պատկերացնեն մրցակցային կապիտալիզմի և պետության միջև իրական կապը, որն իր հիմնական արդյունքով դրական է:

Համաշխարհային պատմությունն ապացուցել է, որ մրցակցային կապիտալիզմը բերում է աղքատության հաղթահարման և պետության հզորացման: Այս պարագայում բացառություն չի կարող լինել նաև Հայաստանը, որտեղ իրական մրցակցային կապիտալիզմի ապահովումը ևս կրերի ընդհանուր բարեկեցության աճի և պետության վերելքի:

Լիբերալի հավատամքն՝ ընդդեմ պատերնալիզմի

Ավետիք Մեջլումյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Միլթոն Ֆրիդմենը (1912 – 2006) տնտեսագիտության նորդասական ուղղության Չիկագոյի դպրոցի ներկայացուցիչ էր, 1976-ին՝ Նոբելյան մրցանակի դափնեկիր՝ տնտեսագիտության ասպարեզում: Եղել է ԱՄՆ նախագահ Ռոնալդ Ռեյգանի և ՄեծԲրիտանիայի վարչապետ Մարգարետ Թետչերի խորհրդականը:

«Կապիտալիզմ և ազատություն» գիրքը լույս է տեսել 1962-ին, Չիկագոյի համալսարանի հրատարակությամբ՝ մինչ օրս բազմակի վերահրատարակվելով և թարգմանվելով տասնյակ լեզուներով:

Ազատ շուկայի ջատագովությունը Ֆրիդմենի համար պարզապես հերթական ուսումնասիրությունը չէ, այլ՝ կյանքի գործ և հավատամք, որ նաև անձնական արժեքների վրա է հիմնված: 1982-ին գրքի վերահրատարակության նախաբանում նա գրում է.

«...նման գրքերը թույլ են տալիս հարցերը բաց պահել այնքան, մինչև հանգամանքների բերումով փոփոխությունների անհրաժեշտություն առաջանա: Մասնավոր և հատկապես պետության գործերում իշխում է իներցիան կամ, այլ կերպ ասած, ստատուս քվոյի բռնապետությունը: Միայն ձգնաժամը (իրական կամ մտացածին) կարող է փոփոխություններ առաջ բերել: Ժ.հենց դա էլ մեր հիմնական գործառույթն է՝ մշակել այլընտրանքներ գոյություն ունեցող քաղաքականությանը, դրանք կենդանի և պատրաստ պահել այնքան, մինչև քաղաքականապես անհնարինը կդառնա քաղաքականապես անխուսափելի»:

Շուկայի և ազատության կապը

Գիրքն առաջին հերթին արժեքավոր է շուկայի և ազատության փոխադարձ կապերի հիմնավորմամբ:

Մի կողմից, տնտեսական հարաբերությունների ազատությունն ինքնին, լայն իմաստով, ազատության բաղադրիչ է: Շուկան ազատության անմիջական բաղադրիչ է՝ ինքնին նպատակ:

Մյուս կողմից, տնտեսական ազատությունը քաղաքական ազատության հասնելու անհրաժեշտ միջոց է. շուկայական հարաբերությունները նպաստում են քաղաքական ազատությանը: Շուկան տնտեսական իշխանությունը տարանջատում է քաղաքական իշխանությունից՝ մեկը մյուսին հակակշիռ դարձնելով: Իհարկե, պետք է ընդունել, որ կապիտալիզմը քաղաքական ազատության անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է:

Ազատությունը պահպանելու համար հարկավոր է ապակենտրոնացնել իշխանությունը: Տնտեսական ուժը պետք է սահմանափակի և զսպի քաղաքական իշխանությունը, այլ ոչ թե զորացնի այն: Դրանք պետք է գտնվեն տարբեր ձեռքերում:

Ազատ հասարակության առանձնահատկություններից է նաև այն, որ մարդն իրավունք ունի բացեիբաց քարոզել հասարակության կառուցվածքի արմատական փոփոխություններ, եթե, իհարկե, նրա քարոզչությունը սահմանափակվում է համոզելով և չի վերածվում ուժի կիրառման կամ հարկադրանքի այլ ձևերի: Կապիտալիստական հասարակության քաղաքական ազատության առանձնահատկությունն այն է, որ հասարակության անդամներն, օրինակ, իրավունք ունեն բացեիբաց սոցիալիզմ քարոզել և պայքարել դրան հասնելու համար:

Մինչդեռ սոցիալիստական հասարակության մեջ կապիտալիզմի ջատագովությունը գրեթե անհնար է, քանի որ բոլոր աշխատատեղերը քաղաքական իշխանության ուղղակի հսկողության տակ են: Որևէ բան քարոզելուց առաջ, մարդը նա պետք է կարողանա ապրուստ վաստակել:

Այսպիսով, ազատ շուկան թե՛ աշխատանքից ու ձեռներեցությամբ ստացվող եկամտի, թե՛ նվիրատվությունների ու այլ աղբյուրներից ֆինանսների ներգրավման անհամեմատ լայն հնարավորություններ է տալիս: Դա ապահովում է անհատի բարեկեցության որոշակի մակարդակն ու կամքի ազատ դրսևորումը՝ զերծ սահմանափակումներից ու գրաքննությունից:

Իրապես ազատ կարելի է համարել այնպիսի շուկան, որտեղ փոխանակումն առանց պարտադրանքի է տեղի ունենում: Ազատ մրցակցային կապիտալիզմին բնորոշ պայմաններն են.

- Ձեռնարկությունները մասնավոր են, այսինքն՝ պայմանավորվող վերջնական կողմերը անհատներն են:
- Անհատներն ունեն որևէ գործարքի մեջ մտնելու կամ չմտնելու լիակատար ազատություն, այնպես որ բոլոր գործարքները խիստ կամավոր են:

Չետևաբար, եթե կա պարտադրանք, այդտեղ ազատ շուկայական հարաբերություններ չկան: Չաճախորդին վաճառողի հարկադրանքից պաշտպանում է այլ վաճառողների առկայությունը, որոնց հետ նա կարող է գործարքի մեջ մտնել: Աշխատակցին գործատուի հարկադրանքից պաշտպանում է այլ գործատուի առկայությունը:

Ֆրիդմենի այս դիտարկումներն անչափ կարևոր են՝ կողմնակալ հարձակումներից ազատ շուկան պաշտպանելու համար: Շուկայի քննադատությունների զգալի մասը թիրախավորում են արհեստականորեն ձևավորված մենաշնորհները, քրեական և այլ ապօրինի եղանակներով կապիտալի վերաբաշխումը, տնտեսական հարաբերություններում տարատեսակ խարդախություններն ու իշխանական դիրքի չարաշահումները: Մինչդեռ, իրապես ազատ շուկան նշվածների հետ կապ չունի, ինչն էլ համոզիչ կերպով ցույց է տրվում գրքի էջերում:

Շուկան՝ քվեարկության և ներկայացուցչականության մեխանիզմ

Քաղաքական խողովակներով իրականացվող գործողություններին բնորոշ է զգալի միօրինակությունը (որպես կանոն, դրանք որոշակի պարբերականությամբ կազմակերպվող ընտրություններն են, քաղաքական բանավեճերը, պայքարի այլ ձևերը):

Մինչդեռ շուկայի գլխավոր առավելությունը բազմազանությունն է: Քաղաքական լեզվով ասած՝ շուկան համամասնական ներկայացուցչության համակարգ է: Շուկան նեղացնում է այն խնդիրների շրջանակը, որոնք պետք է լուծել քաղաքական միջոցներով՝ նվազագույնի հասցնելով կառավարության անմիջական մասնակցությունը խաղին:

Յուրաքանչյուր ոք կարող է, այսպես ասած, քվեարկել իր փողկապի գույնի համար. նա պարտավոր չէ անհանգստանալ, թե ինչ գույն է նախընտրում մեծամասնությունը, կամ ենթարկվել նրանց կարծիքին, եթե հանկարծ հայտնվի փոքրամասնության շարքերում: Շուկայի լայն կիրառումը վերացնում է ընդհանուր կարծիքին ենթարկվելու անհրաժեշտությունը՝ շուկայի ենթակայության տակ գտնվող գործունեության բոլոր ոլորտներում: Որքան մեծ է շուկայի գործունեության շրջանակը, այնքան քիչ են քաղաքական որոշումներ պահանջող հարցերը, որոնց վերաբերյալ անհրաժեշտ է ընդհանուր համաձայնություն ձեռք բերել:

Բացի այդ, շուկան անաչառ է. հաց գնողը չգիտի, թե ով է աճեցրել հացահատիկը՝ կոմունիստը թե հանրապետականը, ֆաշիստը, սևամորթը թե սպիտակամորթը: Այն տնտեսական գործունեությունը հստակ տարանջատում է քաղաքական հայացքներից և մարդկանց պաշտպանում խտրականությունից:

Լինելով երդվյալ ազատական՝ Ֆրիդմենը դեմ է ցանկացած բնույթի խտրականության և ձնշման. նա քննադատում է հենց իր ժամանակներին բնորոշ կոմունիստների հետապնդումն ԱՄՆ-ում, չնայած վերջիններիս հետ անհաշտ գաղափարական վեճին:

Պատերնալիզմ և ազատություն

Ֆրիդմենը հիշեցնում է, որ ազատության հասնելն իմաստ ունի միայն իրենք իրենց համար պատասխանատու անձանց համար: Ըստ նրա, հնարավոր չէ խուսափել գործելու ընդունակ և անգործունակ անձանց միջև բաժանարար գիծ տանելու անհրաժեշտությունից: Պատերնալիզմն անխուսափելի է նրանց նկատմամբ, ովքեր, մեր պատկերացմամբ, սեփական արարքների համար պատասխանատվություն չեն կրում:

Պետական գործունեության պատերնալիստական հիմքերն ամենից շատ անհանգստացնում

են լիբերալին, քանի որ դրանք պահանջում են ընդունել «որոշ մարդիկ կարող են որոշում կայացնել մյուսների փոխարեն» սկզբունքը:

Օրինակ, սոցիալական բնակարանաշինությունն արդարացվում է միայն պատերնալիզմի հիմքով, ըստ որի՝ աղքատ ընտանիքները բնակարանի կարիք ավելի շատ ունեն, քան մեկ այլ բանի և ունակ չեն իրենց հատկացված գումարը խելամիտ ծախսել: Լիբերալն այս փաստարկը չի ընդունում, եթե խոսքը վերաբերում է մեծահասակներին:

Սակայն հետևողական լիբերալն անարխիստ չէ. նա ընդունում է պետության հետևյալ կարևոր գործառույթները.

- Տրամադրել միջոցներ, որոնց օգնությամբ կարող ենք փոխել կանոնները:
- Չանդես գալ որպես միջնորդ, երբ կանոնները մեկնաբանելիս տարածայնություններ ենք ունենում:
- Այդ կանոնները պարտադրել այն քչերին, որոնք հակառակ դեպքում չէին մասնակցի խաղին:

Պետության միջամտության կարիքը տարբեր անհատների ազատությունների միջև գոյություն ունեցող հնարավոր կոնֆլիկտները լուծելու անհրաժեշտությամբ է պայմանավորված: Պետությունն է ապահովում կարգ ու կանոնը (բացառվում է մեկ անհատի հարկադրանքը մյուսի նկատմամբ), կամավոր համաձայնագրերի կատարումը, սեփականության իրավունքի մեկնաբանումն ու այդ իրավունքի իրագործումը, դրամավարկային համակարգի գործունեությունը:

Լիցենզավորման «աքցանները»

Երբ օրենսդիրներին փորձում են համոզել, որ մասնագիտական լիցենզիաներ տրամադրելն անհրաժեշտություն է, որպես փաստարկ միշտ բերում են հանրային շահերի պաշտպանությունը: Սակայն այս պահանջը հազվադեպ է գալիս հասարակության այն անդամներից, որոնք իսկապես տուժել են տվյալ մասնագիտության ներկայացուցիչների պատճառով: Չակառակը, լիցենզավորման պահանջը բխում է հենց այդ մասնագիտությունների ներկայացուցիչներից: Արտադրողների ու մասնագետների կազմակերպված խմբերը կարողանում են ավելի մեծ ձնշում գործադրել օրենսդիրների վրա, քան սպառողները:

Լիցենզավորման ինստիտուտի քննադատության շրջանակում Ֆրիդմենն ամենաարմատական դիրքերից է խոսում՝ որպես օրինակ թիրախավորելով առողջապահության ոլորտը: Ըստ նրա, եթե բժիշկը վնաս է հասցնում միայն իր հիվանդին, դա կամավոր համաձայնության և բժշկի ու հիվանդի միջև հարաբերությունների հարց է: Այս պարագայում միջամտելու որևէ պատճառ չկա: Իհարկե, կարող են իրավիճակներ լինել, երբ բժշկի սխալ բուժումը հանգեցրել է համաճարակի՝ վնաս հասցնելով երրորդ կողմին, որն անմիջական կապ չունի պայմանագրային հարաբերությունների մեջ մտած անձանց հետ:

Սակայն լիցենզավորման կողմնակիցների գլխավոր փաստարկը վերը նշվածը չէ, որն ինչ-որ չափով ընդունելի է լիբերալի համար, այլ խիստ պատերնալիստական մի փաստարկ, որն ընդունելը բարդ է: Դրա համաձայն, մարդիկ ունակ չեն ինքնուրույն ընտրել նրանց, ովքեր կարող են իրենց որակյալ ծառայություն մատուցել՝ ջրմուղագործ, բժիշկ կամ վարսահարդար:

Պատերնալիստները հավատում են, որ մեզնից շատերը կոմպետենտ չեն, և մեզ պետք է պաշտպանել մեր սեփական անտեղյակությունից:

Գրանցումը, սերտիֆիկացումը կամ լիցենզավորումը, գրեթե անխուսափելիորեն, գործիք են դառնում արտադրողների որոշակի խմբի ձեռքում, որը ձգտում է մենաշնորհային դիրք գրավել՝ ի հաշիվ հասարակության մյուս անդամների: Նրանք, անշուշտ, ամեն ինչ անելու են, որպեսզի գրանցումը վերածվի սերտիֆիկացման, սերտիֆիկացումը՝ լիցենզավորման:

Ֆրիդմենը համոզված է, որ այն փաստարկը, թե մեր անտեղյակությունը թույլ չի տալիս մեզ դատել մասնագետների որակավորման մասին, կարելի է չեղյալ համարել՝ անհրաժեշտ տեղեկությունը հասանելի դարձնելով: Եթե, տիրապետելով գիտելիքի ամբողջ ծավալին, մենք նախկինի նման ցանկանանք օգտվել առանց հավաստագրի բժշկական պրակտիկայով զբաղվող մարդու ծառայություններից, ապա դա միայն ու միայն մեր անձնական գործն է:

Ի վերջո, որևէ ոլորտ մուտք գործելու տարատեսակ լիցենզիաներն ու արգելքները մարդկանց մեջ առաջացնում են դրանք շրջանցելու դրդապատճառներ, և առողջապահությունն էլ բացառություն չէ: Օրինակ, առաջ են գալիս այլ՝ բժշկության գերակա ուղղություններից տարբերվող անվանումներ կրող, այլընտրանքային բժշկական պրակտիկաներ (նոր, անսովոր անվանումներն օգտագործվում են՝ արգելքները շրջանցելու համար):

Լիցենզավորման հետևանքով բժիշկների թվի սահմանափակումը բերում է նրան, որ բարձր որակավորում ունեցող բժիշկներն իրենց ժամանակի զգալի մասը ծախսում են այնպիսի գործողությունների վրա, որոնք նրանց փոխարեն կարող էին հեշտությամբ անել ուրիշները՝ ավելի ցածր որակավորում ունեցողները: Բժշկական պրակտիկան միայն ընտրյալներին հասանելի դարձնելը նվազեցնում է փորձարկումների ծավալը՝ դանդաղեցնելով տվյալ ոլորտում գիտելիքի աճի տեմպը:

Ֆրիդմենը հանգում է արմատական թվացող, բայց պարզ ու հիմնավոր լուծմանը. լիցենզավորումը, որպես բժշկությամբ զբաղվելու անհրաժեշտ պայման, պետք է վերացվի:

Դպրոցական վաուչերները՝ դպրոցների միջև քվեարկության մեխանիզմ

Կրթության բնագավառում Ֆրիդմենը ջատագովում է դպրոցական վաուչերների գաղափարը: Վաուչերների միջոցով ընտանիքներն ունեն որոշակի ֆիքսված գումարներ, որոնք պետք է ծախսեն պաշտոնապես հաստատված ուսումնական ծրագրերի վրա: Այդ դեպքում ծնողները կարող են ծախսել նաև հավելյալ գումարներ՝ իրենց նախընտրած ուսումնական հաստատությունից կրթական ծառայություններ գնելու համար: Նման ծառայություններ կարող են մատուցել մասնավոր առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպությունները:

Եթե կրթության ոլորտին պետության հատկացված միջոցները տրամադրվեն ծնողներին, անմիջապես կհայտնվեն մի շարք դպրոցներ՝ պատրաստ բավարարելու նոր ի հայտ եկած պահանջարկը: Ծնողները կստանան իրենց վերաբերմունքը տարբեր դպրոցների հանդեպ ուղղակի արտահայտելու ավելի լայն հնարավորություն՝ երեխաներին մի դպրոցից հանելով և մյուսն ուղարկելով: Մրցակցությունը կխթանի դպրոցների զարգացմանը և ուսուցիչների աշխատավարձերի բարձրացմանը՝ ոչ թե ստանդարտ դրույքաչափով, այլ՝ ըստ որակի:

Եկամուտների վերաբաշխում և աղքատության դեմ պայքար

Ֆրիդմենը գտնում է, որ աղքատության դեմ պայքարի շրջանակում աղքատ ֆերմերին պետք է օգնել ոչ թե նրա համար, որ նա ֆերմեր է, այլ որովհետև աղքատ է: Սոցիալական ծրագրերը պետք է օգնեն կարիքավորներին՝ անկախ նրանց մասնագիտությունից կամ զբաղմունքից, տարիքից կամ որոշակի խմբի պատկանելությունից: Այլ կերպ ասած, պետության միջամտությունը պետք է չխաթարի շուկայի գործունեությունը:

Պետական ծրագրերի գլխավոր թերությունն այն է, որ պետական լծակներ կիրառելու միջոցով մարդկանց ստիպում են գործել իրենց շահերին հակառակ, իբրև թե հանուն ընդհանուր նպատակի: Դրանք փոխարինում են մասնակիցների արժեքները կողմնակի մարդկանց արժեքներով, փորձում են մարդկանց ուղղորդել հակառակ իրենց կամքի, խլում են մեկից ու տալիս ուրիշին: Այդ պատճառով նման միջոցառումները հանդիպում են մարդկությանը հայտնի ամենահզոր և ստեղծարար ուժի հակազդեցությանը՝ սեփական շահերն ու արժեքները պաշտպանելու միլիոնավոր մարդկանց ձգտմանը:

Ահա այս պատճառով է նաև, որ Ֆրիդմենը, որպես լիբերալ, խստորեն քննադատում է եկամտի պրոգրեսիվ հարկման համակարգը: Ըստ նրա, դա հարկադրանքի տիպիկ դեպք է՝ մեկից խլելու և մյուսին հատկացնելու նպատակով, ինչն ուղղակիորեն հակասում է անհատի ազատությանը:

Լիբերալի հավատամքը


Լիբերալ փիլիսոփայությունը հիմնված է մարդու արժանապատվության, ազատությունների, իր ունակությունների նկատմամբ հավատի վրա: Հասարակության յուրաքանչյուր անդամ կարող է ապրել, ինչպես ուզում է, ու անել, ինչ ցանկանում է՝ պայմանով, որ չի խանգարի այլոց նույնն անել:

Ազատությունը բացարձակ արժեք է: Եթե հավատում ենք ազատությանը, ապա պետք է հավատանք նաև մարդու՝ սխալներ գործելու ազատությանը: Եթե ինչ-որ մեկը ցանկանում է ապրել այսօրով և իր բոլոր ռեսուրսները ծախսել հաճույքների վրա՝ չմտածելով իր ծերության մասին, ապա պետությունը իրավունք չունի հարկադրելու վերջինիս՝ պարտադիր վճարումներ կատարելու կենսաթոշակային ֆոնդերին:

Լիբերալը հստակ տարբերակում է մտցնում իրավունքների հավասարության ու հնարավորությունների հավասարության միջև՝ մի կողմից և նյութական հավասարության կամ արդյունքների միջև՝ մյուս կողմից:

Մինչդեռ էգալիտարիստը, ըստ Ֆրիդմենի, պաշտպանում է մեկից խլելու և մյուսին հատկացնելու գաղափարը: Սակայն ոչ այն պատճառով, որ այդպես «մյուսը» կկարողանա ավելի արդյունավետ հասնել իր նպատակին, այլ քանի որ այդպես ավելի «արդար» է: Այստեղ հավասարությունը սուր հակասության մեջ է մտնում ազատության հետ, և անհրաժեշտ է ընտրություն անել: Այս իմաստով, հնարավոր չէ միաժամանակ և էգալիտարիստ լինել, և լիբերալ:

Սոցիալական ինստիտուտները գնահատելիս լիբերալներն անհատի կամ ընտանիքի ազատությունն են դիտարկում որպես վերջնանպատակ: Ընդհանուր նպատակների շուրջ համաձայնության հասնելու ընդունելի միջոցներն են ազատ քննարկումը և կամավոր գործակցությունը: Լիբերալի իդեալը միաձայնությունն է, որը ձեռք է բերվել պատասխանատու անհատների միջև ազատ և սպառիչ քննարկումների հիման վրա:



ԱՆԳԵՏ ՈՍՈՒՑԻՉԸ

Ժակ Ռանսիեր

Գիրք & Միտք #3 | Անգետ ուսուցիչը
Միշտ Թաղևոսյան և Ավետիք Մեջլումյան

Սովորեցնելու հետքերով... ինչպես դասավանդել առանց «իմանալու»

Միշտ Թաղևոսյան

Մանկավարժական գիտությունների թեկնածու

Ժակ Ռանսիերի «Անգետ ուսուցիչը» գիրքը մարտահրավեր է նետում կրթության ավանդական հարացույցներին: 1987 թ. հրատարակված այս գիրքը հիմնված է յուրահատուկ պատմահասարակական, գիտական իրողությունների և հեղինակի անձնական դիրքորոշումների վրա և կարևոր ներդրում է կրթության ու մանկավարժության փիլիսոփայության մեջ: Ժակ Ռանսիերը ժամանակակից փիլիսոփայության նշանավոր գործիչ է, ով հիմնվում է սեփական փորձառությունների և մտավոր ճանապարհորդության վրա՝ փորձելով սահմանել դասավանդման և ուսումնառության իր ոչ ստանդարտ մոտեցումը:

Գրքի ստեղծման պատմահասարակական, գիտական, անձնական համատեքստերը

Ռանսիերը Փարիզի համալսարանի փիլիսոփայության պատվավոր պրոֆեսոր է, քաղաքական փիլիսոփայության կենտրոնական դեմքերից մեկը, բազմաթիվ աշխատությունների հեղինակ: Նա հետաքրքրված է եղել 19-րդ դարի բանվորական շարժումներով, որի մեջ էլ ինչ-որ կերպ կարելի է տեսնել հենց այս գրքի ստեղծման նախադրյալները:

Ռանսիերի ինտելեկտուալ ճանապարհորդությունն իրապես կապված է 20-րդ դարավերջի շարժումների հետ: Որպես Միշել Ֆուկոյի և Լուի Ալտյուսերի աշակերտ՝ Ռանսիերի գիրքն արտացոլում է ժամանակի ինտելեկտուալ բանավեճերը, որոնք նշանավորվում էին ուժային կառույցների և հիերարխիկ հարաբերությունների քննադատական վերագնահատմամբ:

Դասավանդելով Փարիզի արվարձաններում՝ Ռանսիերը դիմակայել է հասարակական

անհավասարություններին և կրթական անհավասարությանը: Այս փորձառությունները խթանել են նրան մտածելու ինտելեկտի, բանականության հնարավորությունների հավասարության և ինքնուսուցման ներուժի վերաբերյալ: Գիրքը, հետևաբար, արձագանք է հասարակական-քաղաքական մթնոլորտին և արտացոլում է Ռանսիերի անձնական պայքարը կրթական համակարգում:

Գրքի հերոսի մասին

Գրքի հերոսը պատմական կերպար Ժոզեֆ Ժաքոթոն է (1770 թ. մարտի 4 – 1840 թ. հուլիսի 30), ով Ֆրանսիացի ուսուցիչ և կրթական փիլիսոփա էր, **«ինտելեկտուալ էմանսիպացիայի» մեթոդի ստեղծողը:**

Նրա մեթոդը ոչ միայն ընդունվել է Բելգիայի մի քանի կրթական հաստատություններում, այլև որոշակի հավանության է արժանացել Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում և Ռուսաստանում: Այն հիմնված էր երեք սկզբունքի վրա.

- Բոլոր մարդիկ ունեն հավասար բանականություն/ինտելեկտ (**մարդիկ տարբերվում են միայն դրանք կիրառելու ցանկություն/կամք դրսևորելու մեջ**),
- Ամեն մարդ Աստուծոց ստացել է ինքն իրեն ուսուցանելու կարողությունը,
- Ամեն ինչ ամեն ինչի մեջ է (everything is in everything):

Մանկավարժական ակնարկ

«Անգետ ուսուցիչը» գրքում Ժակ Ռանսիերն առաջարկում է փոխակերպող մանկավարժության մոտեցում, որով մարտահրավեր է նետում ուսուցման և դասավանդման ավանդական պատկերացումներին:

Ռանսիերի մանկավարժության մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում ինտելեկտի հավասարության հայեցակարգը, մի հասկացություն, որը հիմնովին կասկածի տակ է դնում անհատների միջև մտավոր կարողությունների ենթադրյալ հիերարխիան: Նա պնդում է, որ յուրաքանչյուր անհատ ունի հասկանալու և սովորելու բնածին կարողություն՝ մարտահրավեր նետելով ավանդական կրթական կառույցներին, որոնք հստակ դերեր են սահմանում ուսուցիչների և սովորողների համար: Նա պնդում է, որ ինտելեկտը հավասարապես բաշխվում է բոլոր անհատների միջև, իսկ հասարակության ինտելեկտուալ անհավասարության ավանդական պատկերացումները թերագնահատում կամ «նսեմացնում են» ինքնուսուցման ներուժը:

Ռանսիերը ջատագովում է ուսուցիչ-աշակերտ դինամիկայի փոփոխությունը՝ խթանելով այն գաղափարը, որ սովորողները կարող են պատասխանատվություն ստանձնել իրենց կրթության համար: Սա մարտահրավեր է նետում ուսուցչի ավանդական դերին՝ որպես գիտելիքի միակ աղբյուրի և առաջարկում է վերանայել դասարանում հաստատված, առկա կառուցվածքային մոտեցումը (ուսուցիչը՝ թելադրող, աշակերտը՝ կատարող): Առաջարկվող մոտեցման մեջ Ռանսիերն առանձնացնում է «բթացման» և «ազատագրման»՝ միմյանց հակադրվող երկու մոտեցում:

«Ուսուցանելու և սովորելու գործողության մեջ երկու կամք կա և երկու խելք: Բթացում կկոչենք դրանց համընկնումը: Բթացում կա այնտեղ, որտեղ մի խելքը ենթարկված է մեկ այլ խելքի: Ազատագրում կկոչենք այս երկու առնչությունների ճանաչված ու կիրառված տարբերությունը՝ խելքի գործողությունը, որ միայն ինքն իրեն է հնազանդվում, մինչ կամքը ենթարկվում է մեկ ուրիշ կամքի:

....Ով ուսուցանում է առանց ազատագրելու՝ բթացնում է: Իսկ ով ազատագրում է, պարտավոր չէ մտահոգվել, թե ազատագրվողը ինչ պիտի սովորի: Նա կսովորի ինչ կուզի, գուցե՝ ոչինչ:»

Այստեղ է, որ նա առաջ է քաշում **«հակասուկրատեսականության» սկզբունքը**, որով մարտահրավեր է նետում բոլորին հայտնի սուկրատեսյան մեթոդի էությանը՝ հիմնավորելով ամեն ինչ իմացող ուսուցչի ու ոչինչ չիմացող աշակերտների փոխհարաբերությունների փոփոխության անհրաժեշտությունը:

«Ուրեմն, ժաքթոյի մտքի ողջ աշխատանքը ցույց տալն է, թե Սուկրատի կերպարը ազատագրողի կերպար չէ, այլ բթացնողի՝ գերազանցապես, ով կազմակերպում է բեմադրություն, որտեղ աշակերտն ինքը պետք է առձակատվի սեփական խոսքի բացերին, փակուղներին: Ժաքթոն ցույց է տալիս, որ հենց դա է ամենաբթացնող մեթոդը, եթե բթացնող ասելով հասկանում ենք մեթոդը, որը խոսեցնում է մեկին, որպեսզի նրան եզրակացնել տա, թե այն, ինչն ինքը ասում է, անհիմն է և ինքը երբեք չէր իմանա իր գլխում եղածի անհիմն լինելու մասին, եթե ուրիշ մեկը ցույց չտար ծանապարհը՝ իրեն ապացուցելու համար իր սեփական թերությունը:»

Ռանսիերը ներկայացնում է էմանսիպացիայի հայեցակարգը ինքնուսուցման միջոցով՝ ընդգծելով այն գաղափարը, որ սովորողները կարող են կառուցել ու կառավարել իրենց կրթությունը:

Քննադատաբար մեկնաբանելով Ռանսիերի գաղափարները՝ ոմանք պնդում են, որ ինքնուսուցման հայեցակարգը չի կարող համընդհանուր կիրառելի լինել: Գործնականում մարտահրավերներ կարող են առաջանալ այն առարկաներում, որոնք պահանջում են կոնկրետ մասնագիտական առաջնորդություն ուսուցչի կողմից, և ոչ բոլոր ուսանողները կարող են ունենալ ինքնակարգապահության, ինքնուսուցման նույն մակարդակը: Բացի այդ, դասավանդման ավանդական մեթոդների մերժումը կարող է դիտվել որպես կրթության մեջ ընդգրկված բարդությունների չափից ավելի պարզեցում:

Ավելին, Ռանսիերը քննադատում է կրթության մեջ **«անկարող լինելու», պատժելու ու խրատելու դիսկուրսը**՝ հանդես գալով քննադատական մտածողությանը խոչընդոտող և անհավասարությունները հավերժացնող պրակտիկաների դեմ:

Նա պնդում է, որ **ավանդական կրթությունը հաճախ պիտակավորում է անհատներին որպես անկարող կամ ոչ խելացի՝ սահմանափակելով նրանց ինտելեկտուալ աճի ներուժը:** Գիրքը խրախուսում է մանկավարժական մոտեցումների վերագնահատումը՝ առաջ քաշելով ավելի ներառական և հավասար գործելակերպերը, որոնք ճանաչում են յուրաքանչյուր անհատի ինտելեկտը:

Չնարավոր ազդեցություն՝ սոցիալ-քաղաքական, գիտական, այլ

«Անգետ ուսուցիչը» գիրքը տարբեր ոլորտներում լայնածավալ ազդեցության ներուժ ունի: Սոցիալ-քաղաքական առումով Ռանսիերի գաղափարները մարտահրավեր են նետում կրթության ոլորտում առկա «ուժային» կառույցներին: Գիրքն առաջարկում է վերագնահատել կրթական հաստատությունների կառուցվածքն ու դերը՝ ընդգծելով ավելի ներառական և արդար պրակտիկաների անհրաժեշտությունը:

Ռանսիերի աշխատանքը նպաստում է կրթության և մանկավարժության վերաբերյալ մեկ այլ դիսկուրսի: Այն ուղիներ է բացում ուսուցման այլընտրանքային մեթոդների և ուսուցման հոգեբանության վերաբերյալ հետազոտությունների համար: Գիրքը խթանել է կրթության մեջ ինքնուսուցման և աշակերտի ինքնավարության դերի մասին քննարկումները:

Ռանսիերի գաղափարներն ազդեցություն ունեն ավելի լայն հասարակական և մշակութային համատեքստերի վրա: Վիճարկվում է այն ենթադրությունը, թե ֆորմալ կրթությունն ինտելեկտուալ աճի միակ ձանապարհն է և կոչ է արվում վերանայել հասարակության արժեքներն ու առաջնահերթությունները:

Ժամանակակից հայկական իրականության համատեքստում, որտեղ կրթական համակարգերը բախվում են մարտահրավերների և անհավասարությունների հետ, Ռանսիերի գաղափարները կարող են բովանդակալից քննարկումներ առաջացնել:

Ուսուցիչը պետք է հաղթահարվի. այսպես խոսեց Ժաքոթոն

Ավետիք Մեջլումյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Ժակ Ռանսիերի «Անգետ ուսուցիչը» դժվար է հստակ ժանրի դասել: Թերևս այն ծավալուն մի էսսե է, որտեղ հեղինակի ուղերձները հմտորեն միախառնվում ու միահյուսվում են ժոզեֆ Ժաքոթոյի գաղափարներին՝ ընթերցողի մոտ շփոթմունք առաջացնելով առ այն, թե ով է «խոսում» տեքստի տվյալ պահին: Կարելի է ասել, թե Ռանսիերն է խոսում Ժաքոթոյի միջոցով և հակառակը:

Ժաքոթոն պատմական մի կերպար է, որի կենսագրությունը Ջեյ Լոնդոնի և մյուս արկածախնդիր հոգիների ձակատագրի սովոր արտահայտումներից է. «19-ամյակը նշել էր 1789-ին: Այն ժամանակ հռետորաբանություն էր դասավանդում Դիժոնում և պատրաստվում էր փաստաբանի մասնագիտության: 1792 թ. հրետանավոր էրԱպահրահանգիչ՝ Վառոդի բաժանմունքում, Պատերազմի նախարարի քարտուղար, Պոլիտեխնիկ ինստիտուտի տնօրենի տեղակալ: Փարիզից

Դիժոն վերադառնալով՝ դասավանդել էր վերլուծաբանություն, գաղափարաբանություն և մեռած լեզուներ, մաքուր ու անդրանցական (տրանսցենդենտալ) մաթեմատիկա, իրավաբանություն: 1815-ի մարտին համերկրացիների հարգանքը պատգամավոր էր դարձրել նրան՝ ակամա»:

1818 թ. ժաքթոն, քաղաքական պատճառներով, ստիպված էր մեկնել Լուվեն՝ Բելգիա, որտեղ կես դրույքով ֆրանսիական գրականության պրոֆեսորի պաշտոն ստացավ: Ամբողջապես անգետ հոլանդերենից՝ նա ստիպված էր դասավանդել ուսանողներին, որոնք չգիտեին ֆրանսերեն: Ֆենելոնի երկլեզու գիրքը՝ «Տելեմաքոսը» թարգմանչի միջոցով փոխանցեց ուսանողներին և հանձնարարեց սովորել ֆրանսերեն տեքստը՝ թարգմանության օգնությամբ: Ոչ մի բացատրություն չէր տվել նրանց լեզվի տարրերի վերաբերյալ, չէր բացատրել ուղղագրությունն ու խոնարհումները: Եվ դասընթացի ավարտին ուսանողները ֆրանսերենով գրի առան իրենց մտորումները կարդացածի մասին՝ նույնքան հաջող, որքան կարող էին ֆրանսիացիներից շատերը:

Ժաքթոն հասկացավ, որ «...բացատրողն է, որ ունի կարիքն անկարողի, այլ ոչ թե հակառակը, նա է, որ կազմավորում է անկարողին՝ որպես այդպիսին: Որևիցե մեկին որևիցե բան բացատրել՝ ասել է թե, նախևառաջ, ապացուցել նրան, որ նա ինքնուրույն չի կարող հասկանալ»:

Հակասությունն ավելի է սրվում, քանի որ բացատրողը նաև իշխանություն բանեցնելու հնարավորություն ունի: Ուսուցիչն է որոշում՝ հասկացել է արդյոք երեխան թե ոչ՝ դնելով ստորադաս-վերադաս հարաբերությունների հիմքերը:

Ժաքթոնի / Ռանսիերի հավատամքն այն է, որ մարդը կարող է մենակ սովորել, երբ ցանկանա, առանց բացատրող ուսուցչի, իր սեփական ցանկության կամ իրավիճակի ճնշման պարտադրանքով: Ուսուցչի դերը կամք բանեցնել է՝ սովորողին պարտադրելը, որպեսզի նա օգտագործի իր սեփական խելքը: Դրա համար ամենևին կարիք չկա, որ ուսուցիչն ինչ-որ կոնկրետ բան իմանա: Հակառակը, նա կարող է լինել անգետ և սովորեցնել իր չիմացածը, եթե հավատում է, որ աշակերտը կարող է դա և ստիպում է նրան գործի դնել իր ունակությունը: Սովորողի մոտ իր կարողությունների նկատմամբ վստահության ձևավորումն ու ինքնուրույն՝ առանց ուսուցչի քայլերը ազատագրման ակտ է:

Եթե ուսուցիչն անգետ է, այդ դեպքում ինչպե՞ս է սովորեցնում նա: Շատ պարզ՝ համեմատությունների և առնչությունների միջոցով: Պետք է մի բան սովորել և դրան առնչել մնացյալ ամեն ինչ:

«Կարող ես ճանաչել այդտեղ Օ տառը, որ աշակերտներիցս մեկը՝ արհեստով փականագործ, շրջանակ է անվանում, L տառը, որին անկյունաչափ է անվանում: Պատմիր ինձ յուրաքանչյուր տառի, ձևի մասին, ինչպես որ կնկարագրեիր մի անծանոթ առարկա կամ վայր: Չասեն, թե չես կարող: Փականագործը, որ Օ տառը կլորակ է կոչում և L-ն՝ անկյունաչափ, արդեն մտածում է առնչությունների միջոցով»:

«Միշտ էլ կա մի բան, որ անգետը գիտի և որը կարող է համեմատության եզր ծառայել, որին հնարավոր է առնչել՝ ճանաչելու մի նոր բան: Վկան՝ այն փականագործը, որն աչքերն է չռում, երբ

նրան ասվում է, թե կարող է կարդալ: Ախր, անգամ տառերը չգիտի: Դե թո՛ղ նեղություն քաշի և աչք զցի օրացույցի վրա: Մի՞թե չգիտի ամիսների կարգը և չի կարող կռահել. հունվար, փետրվար, մարտ+ Լա հաշվել գիտի մի քիչ: Ո՞վ է նրան խանգարում հանգիստ հաշվել՝ հետևելով եղած գծերին, ճանաչելով նրանում այն գիրը, որ ինքը գիտի: Լա գիտի, որ իր անունը Գիյոմ է և որ հունվարի 16-ն իր ծննդյան օրն է: Լա կիմանա գտնել բառը: Գիտի, որ փետրվարը 28 օր ունի: Հստակ տեսնում է, որ մի սյունակն ավելի կարճ է, քան մյուսները, հետևաբար՝ կճանաչի 28-ը: Եվ այդպես շարունակ: Միշտ էլ մի բան կգտնվի, որ ուսուցիչը հանձնարարի նրան գտնել, ինչի շուրջ էլ կարող է նրան հարցում անել ու ձշտել նրա խելքի աշխատանքը»:

Գիտուն ուսուցիչը, որ իմանում է պատասխաններն ու ձշմարտությունը, իր հարցերով ուղղորդում է աշակերտին, սակայն խիստ չափավոր. այնքան, որ նա մտածի, բայց ոչ այնքան, որ լիովին ինքնուրույն մտածի: Սա Սոկրատեսի մեթոդն է՝ կենսունակ՝ դարերի խորքից մինչև մեր օրերը, որ ոչ այլ ինչ է, քան կրկեսի կենդանավարի մեթոդ, կազմակերպված բեմադրություն. «... Լա զարմանում է շոշափումից, հետ է շրջվում, տեսնում իր առաջնորդին, զարմանքը փոխակերպվում է հիացմունքի, և այդ հիացմունքը բթացնում է նրան: Աշակերտը զգում է, որ մեն-մենակ թողնված՝ նա չէր հաղթահարի այդ ուղին»:

Ռանսիերն, իհարկե, չի կարող շրջանցել անհավասարության ակնհայտ փաստերը: Լա բերում է բոլորիս քաջ հայտնի և այդքան չարչրկված օրինակը. եթե միևնույն ընտանիքից երկու երեխա տարբեր հաջողությունների են հասնում, ինչո՞վ կարելի է բացատրել դա: Ռանսիերի համար համոզիչ են թվում տարատեսակ պատճառներ՝ եղբայրների ուշադրության, կամքի, կյանքի հանգամանքների տարբերությունները, սակայն ոչ ինտելեկտի անհավասարությունը: Ըստ Ռանսիերի, երկու տեսակ միտք չկա և մտավոր ընդունակության աստիճանակարգ չկա: Կա անհավասարություն խելքի դրսևորումներում՝ նայած որքան մեծ կամ փոքր էներգիա է կամքը հաղորդում խելքին՝ բացահայտելու և համակցելու համար նոր հարաբերություններ:

Ինտելեկտը գործում է այնտեղ, որտեղ կարիքներն ու գոյության հանգամանքներն են այդպես պահանջում: Որտեղ սուր անհրաժեշտություն չկա, ինտելեկտը նախընտրում է ծուլությունն ու դադարը, փախուստը՝ ձիգ գործադրելուց, մինչ այն պահը, երբ որևէ այլ կամք (ուսուցչի կամ սրտացավ մեկի) նրան չհարկադրի գործել:

Ռանսիերի համար մարդը կամք է, խելքով սպասարկվող: Անհավասարության պատճառներն ընկած են մարդկանց կամքերի՝ անհավասար չափով հրամայական լինելու մեջ: Դրա պատճառով են առկա ուշադրության տարբերությունները, և, որպես հետևանք, մտավոր կատարողականությունների անհավասարությունը:

Կամային գործոնի այսչափ կարևորումը Ռանսիերի փիլիսոփայական համակարգի ամենաթույլ կետն է թերևս: «Անգետ ուսուցիչը» ոգեշունչ ընդվզում է ընդդեմ մարդկությանն ուղեկցող այն քարացած պատկերացման, թե մարդիկ հավասար խելք/ինտելեկտ չունեն, թե կան երկաթի ցեղի մարդիկ՝ կոչված միայն ֆիզիկական աշխատանքի և ոսկու ցեղի մարդիկ՝ մտավոր աշխատանքի ունակ: Այս արհեստական տարանջատման դեմ ջերմեռանդ պայքարը ստիպում է, որ մի նոր

փոփոխական հայտնվի կամ դուրս գա սովերից՝ կամքը: Այն, ինչ չի բացատրվում խելքի տարբերությամբ, այժմ հիմնավորվում է կամքերի կամ դրանց գործադրման տարբերությամբ:

Սակայն միթե՞ կամքերի տարբերության բացատրությունը հաղթահարում է անհատների ու դասակարգերի անհավասարությունը: Ինչպես խելքը, այնպես էլ կամքը տրված մի բան է՝ ի ծնե: Թույլ կամ ցածրակարգ խելքի խարանը ջնջվում է, սակայն դրա տեղում արդյո՞ք նոր խարան չի հայտնվում. մարդիկ անհավասար են, քանի որ մեկն ուժեղ կամքի տեր է, մյուսը՝ թույլ:

Սովորելու կամքի բացակայության և ծուլության հանգամանքից Ռանսիերը բխեցնում է ողջ հասարակական կարգի և սոցիալական անհավասարության իր բացատրությունը: Հասարակական հարաբերություններն առաջին հերթին փոխանակման հարաբերություններ են, որտեղ յուրաքանչյուրը գերազանցություն է ստանում իր «դավանած» ստորադասության դիմաց: Որոշ անհատներ իրենց տեղը զիջում են նրանց, ում իրենցից վերադաս են համարում՝ չցանկանալով (կամ չհավատալով, որ կարող են) ստանձնել կամք և խելք գործադրելու պատասխանատվություն: Վերադասներն էլ վերցնում են հասարակության պայծառ ուղեղների այդ պայմանական դերերը: Երկու կողմն էլ պայմանականության պատրանքի մեջ են, փոխադարձաբար միմյանց ենթակա ու միմյանց սնող՝ ձշմարտությունն ընդունելու իրենց անկարողությամբ:

«Չի գտնվի բարձր մի միտք, որ չգտնի ավելի բարձր մեկ ուրիշին՝ նրան նսեմացնելու համար, և չի գտնվի ցածր մի միտք, որ չգտնի ավելի ցածր մեկ ուրիշին՝ նրան արհամարհելու համար: Լուվենի պրոֆեսորական տիտղոսը չնչին բան է Փարիզում: Եվ Փարիզի արհեստավորը գիտի, թե իրենից որքան ստորակա են գավառի արհեստավորները, որոնք էլ, իրենց հերթին, գիտեն, թե որքան հետամնաց են գյուղացիները»:

«Դեռ այսօր էլ ինչն է մտածողին ստիպում արհամարհել բանվորի խելքը, եթե ոչ բանվորի արհամարհանքը գյուղացու նկատմամբ, գյուղացունը՝ իր կնոջ, այս կնոջը՝ հարևանի կնոջ, և այսպես՝ անվերջ: Հասարակական անբանականությունն իր բանածնը կազմված է գտնում նրանում, որը կարելի է կոչել վերադաս ստորադասների պարադոքս. այդտեղ յուրաքանչյուրը ենթարկված է նրան, ում նա ստորադաս է համարում, ենթարկված՝ զանգվածի օրենքին, նրանից տարբերվելու իր իսկ հավակնությամբ»:


Իսկ հնարավոր է արդյոք, որ Ժաքոթոյի՝ առանց բացատրող ուսուցչի սովորելու և այդ կերպ ազատագրվելու մեթոդը, համընդհանուր կիրառություն գտնի: Ռանսիերի պատասխանը հստակ է. «...համընդհանուր ուսուցումը չէ և չի կարող լինել հասարակական մեթոդ: Նա չի կարող տարածվել հասարակական հաստատությունների մեջ և միջոցով:

Հասարակության ամեն մի հաստատություն բացատրություն է գործողության մեջ, անհավասարության բեմականացում: Նրա սկզբունքը միշտ է և լինելու է հակադրական այն սկզբունքի նկատմամբ, որը հիմնված է հավասարության և բացատրությունների մերժման վրա:

Համընդհանուր ուսուցումը կարող է հասցեագրվել միայն անհատներին, բայց ոչ երբեք հասարակություններին»:

Գրքի վերջաբանում Ռանսիերը մի հետաքրքիր դրվագ է պատմում: Ժաքոթոյի շիրմաքարին՝ Պեր-Լաշեզում, նրա աշակերտները փորագրել էին տվել մտավոր ազատագրման հավատամքը. «*Ես հավատում եմ, որ Աստված մարդու հոգին ստեղծել է ունակ կրթվելու մենակ, առանց ուսուցչի*»: Մի քանի ամիս անց գրությունը պղծվել էր:

Չավատամք բառը լավագույնս է բնորոշում նաև Ռանսիերի փիլիսոփայական համակարգը: Անշուշտ, «Անգետ ուսուցիչը» խելքի հավասարության ապացույցների ու փաստերի կուռ շարադրանք է, հակառակը՝ իր ոճավորմամբ բավական հեռու է դրանից: Այն մարտնչող հավատ է՝ առ մարդկանց ինտելեկտուալ հավասարությունը, ընդվզում՝ հասարակական կարգի ցավալի ու անբնական իրողությունների դեմ: Այս գիրքը կոչ է՝ հավատալու խելքերի հավասարությանը, որովհետև «...*հակառակի փաստերը ևս բացակայում են*»:



ԲՈՂՈՔԱԿԱՆ ԷԹԻԿԱՆ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՉՄԻ ՈՊԻՆ

Մաքս Վեբեր

Գիրք & Միտք #4 | Բողոքական էթիկան և կապիտալիզմի ոգին
Վահրամ Սողոմոնյան և Ավետիք Մեջլումյան

Ի՞նչ կապ ունի կրոնական էթիկան տնտեսական վարքագծի հետ

Վահրամ Սողոմոնյան

Գրքի թարգմանիչ, քաղաքագետ

Մաքս Վեբերի «Բողոքական էթիկան և կապիտալիզմի ոգին» աշխատությունը հայերեն լեզվով թարգմանելու գաղափարը ծագել է 2014 թվականին, երբ «Քաղաքական դիսկուրս» հանդեսը հանձն առավ հասարակագիտական գրականության շարքի հրատարակումը: Գերմանացի սոցիոլոգի այս գիրքը, նրա մեկ այլ՝ «Տնտեսություն և հասարակություն» խոշորածավալ գործի կողքին, համարվում է սոցիոլոգիական հիմնարար աշխատանքներից մեկը:

Գրքի առաջին և երկրորդ մասերը լույս են տեսել համապատասխանաբար 1904 և 1905 թվականներին, իսկ գրքի նախաբանը գրվել է 1920 թվականին հրատարակված «Կրոնի սոցիոլոգիա» հոդվածների ժողովածուի համար:

Աշխատանքը հագեցած է ծավալուն աղբյուրների ցանկով, արժեքավոր մեջբերումներով, վիճակագրական և այլ պատմական տվյալներով: Տեքստում հանդիպող լատիներեն և այլ օտար բառերին զուգահեռ ներկայացված են դրանց հայերեն համարժեքները: Հասկացությունների զգալի մասը ծանոթագրվել է հեղինակի կողմից:

Դավանանքով պայմանավորված էթիկայի և տնտեսական վարքագծի միջև առկա կապի բացահայտմամբ կապիտալիզմի «ոգու» զարգացումն ուսումնասիրող այս բազմաշերտ աշխատանքը վերլուծում է բողոքական շարժման՝ այսպես կոչված «արթնացման շրջանի» տարբեր հոսանքներն ու ծալքերը: Հեղինակը յուրահատուկ բժախնդրությամբ վեր է հանում Վերածննդի, բողոքականության, Լուսավորության և կապիտալիզմի սկզբնավորման պատմական փոխառնչությունները՝

կենտրոնանալով՝ մի կողմից ձեռնարկատիրական գործունեության, մյուս կողմից՝ ձգնաժամության աշխարհայացքային և դավանաբանական ընկալումների վրա: Այս ամենը դիտարկվում է կյանքի բոլոր ոլորտների ռացիոնալացման միտումների համատեքստում:

Յենց նախաբանում Մաքս Վեբերն Արևմուտքի առանձնահատուկ պատմական զարգացման հետ է կապում գիտության, արվեստի, իրավունքի և կառավարման կարգավորված բնույթը: Կապիտալիզմի ձևավորման ընթացքում փողի վաստակման, շահույթի ձգտման և կուտակման նոր էթիկայի՝ անգամ աննշան թվացող մանրամասները չեն վրիպել նրա ուշադրությունից:

Գրքում շոշափվող հարցերն առիթ են տալիս նաև մտածելու այն մասին, թե ինչու հայկական միջավայրում ձևավորված առևտրական կապիտալն ու բուրժուազիան, որոնք սերտորեն փոխկապակցված էին կղերական կառույցների հետ, ունեցան իրենց առանձնահատուկ զարգացման ուղին, ինչը որոշակիորեն տարբերվում էր Արևմուտքին հատուկ արտադրահարաբերությունների ձևավորման ու կապիտալի կուտակման գործընթացից: Աշխարհի գրեթե բոլոր նշանակալի կենտրոններում գաղութներ ստեղծած հայ առևտրական կապիտալի կապը եկեղեցական հաստատությունների, կաթոլիկ ու բողոքական հոսանքների հետ և վերջիններիս ազդեցությունը հետաքրքիր համեմատության եզրեր են ուրվագծում Վեբերի մեկնաբանությունների հետ: Այս համատեքստում հիշատակման արժանի է հայ պատմաբան Լեոյի «խոջայական կապիտալ» աշխատության մեջ ձևակերպված հետևյալ բնութագրումը.

«Ինչ բացատրություն էլ սակայն, եթե կարողանանք գտնել այս ասիական բնորոշ կապիտալիստական տեսարանի առիթով, փաստը կմնա փաստ, և այդ կլինի այն, որ Ասիան ու Եվրոպան ոտքի տակ տված խոջայական կապիտալը միայն կծծի հավաքող ու դիզող էր, լուր դեղին ոսկու տեսքով կերակրվող, առանց այլ տեսակ ձգտումների ու սպասելիքների: Այսպիսի իրականություն էր դարձնել ու անշարժացրել արաքսյան միջավայրը: Եվ որպեսզի խոջայական կապիտալը դուրս գար իր կծծիության, կարելի է ասել՝ տնտեսության խեղդարանից, պետք կլիներ հանել նրան այդ միջավայրից»:

Ձեռնարկատիրական գործունեության և աշխատանքի կազմակերպման յուրահատուկ օրինաչափությունների վերլուծությունը, անշուշտ, չի կարող սպառնից կերպով բացատրել կապիտալիստական կուտակման հեղափոխական շրջանը: Այդուհանդերձ, այն ստեղծում է մշակույթի, տնտեսական հարաբերությունների և կրոնի համադրման մի յուրահատուկ հարթակ:

Վեբերի ուշադրության կենտրոնում են հայտնվել թե՛ Ռեֆորմացիայի ազդեցությունը տնտեսական վարքի վրա, թե՛ բողոքականության ճյուղավորման արդյունքում ի հայտ եկած տարբեր հարանվանությունների, աղանդների և համայնքների աշխարհընկալումներն ու շարժառիթները, որոնք քիչ են ուսումնասիրված մեր իրականության մեջ: Նա մանրամասնորեն անդրադառնում է լուսերականության, կալվինականության, պիետիզմի, մեթոդիզմի, պուրիտանության, մկրտական շարժումների և այլ կրոնական ուղղությունների տնտեսական կյանքին, այսկողմյան և այնկողմյան

աշխարհների ընկալումներին և դրանցով պայմանավորված վարքականոնների տարբերություններին:

Չեղինակը նկարագրում է նաև մասնագիտության՝ որպես «կոչում» վերափոխման և ստանդարտների ու մասնագիտական պարտքի արմատավորումը: Միաժամանակ նա համեստորեն զսպում է իր պնդումների բացարձակացման և իդեալականացման սպասելիքները՝ նշելով, որ իր նպատակը համեմատական վերլուծությունն է եղել:

Ճգնակեցությունն ու կոչված լինելու զգացումը՝ կապիտալիզմի ոգու հիմնասյուներ

Ավետիք Մեջլումյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Մաքս Վեբերը (1864 – 1920), գերմանացի սոցիոլոգ է, փիլիսոփա և քաղաքական տնտեսագետ:

Նրա անունը հաճախ է հիշատակվում Էմիլ Դյուրկեյմի և Կարլ Մարքսի անունների հետ՝ որպես սոցիոլոգիայի հիմնադիրներից մեկը: Վեբերի այլ հայտնի աշխատություններն են՝ «Չամաշխարհային կրոնների տնտեսական էթիկան», «Տնտեսություն և հասարակություն», «Քաղաք», «Սոցիոլոգիական հիմնական հասկացություններ»:

Վեբերը հասկացող կամ ըմբռնող սոցիոլոգիայի հիմնադիրն ու ջատագովն է. կարևոր է հասկանալ այն սուբյեկտիվ իմաստներն ու նպատակները, որոնք անհատները դնում են իրենց գործողությունների հիմքում: Միայն այդպես՝ անհատների սոցիալական գործողությունները մեկնաբանելով և դրանց նպատակները հասկանալով կարելի է ուսումնասիրել հասարակությունը:

Վեբերն առանձնացնում է սոցիալական գործողության չորս տեսակ, որոնց ճանաչողական նշանակությունն ակտուալ է մինչ օրս.

- Նպատակառացիոնալ (երբ առարկաները և մարդիկ սեփական ռացիոնալ նպատակներին հասնելու միջոցներ են),
- Արժեքային-ռացիոնալ (երբ գործողությունը կատարվում է հանուն ինչ-որ արժեքի, անկախ իր հետևանքներից),
- Ավանդական (պայմանավորված ավանդույթով կամ սովորույթով),
- Աֆեկտիվ (զգացմունքներով պայմանավորված):

Ռացիոնալ Արևմուտքը

Բողոքականության և տնտեսական վարքի միջև կապերի բացահայտման իր հետազոտությունը Վեբերը մեկնարկում է միայն Արևմուտքին ներհատուկ ռացիոնալության նկարագրությամբ: Նա նշում է, որ թեև հնագույն քաղաքակրթություններում եղել են աշխարհի գիտական ճանաչողության պրակտիկաներ և փորձառություն, սակայն միայն Արևմուտքում գոյություն ունի գիտություն՝ դասական

իմաստով, քանի որ մյուսներին պակասում էր մաթեմատիկական հիմնավորումը և ռացիոնալ փորձը:

Ասվածը բնորոշ է ոչ միայն գիտությանը: Ասիական պետական ուսմունքին, օրինակ, պակասում էին համակարգվածությունն ու ռացիոնալ հասկացությունները: Այլ երկրների իրավական ուսմունքի համար պակասում էին խիստ իրավական սխեմաներն ու մտածողության կաղապարները, որոնք Եվրոպայում զարգացել էին հռոմեական իրավունքի հիման վրա: Ռացիոնալ դրոյթներով կառուցված սահմանադրություն, պառլամենտ, ռացիոնալ օրենքներով կառավարում. սրանք բնորոշ էին առավելապես Արևմուտքին:

Տպագրական արվեստ կար, օրինակ, Չինաստանում, սակայն կենսունակ գրականություն, պարբերական մամուլ և ամսագրեր առաջացան միայն Արևմուտքում: Եվ հենց Արևմուտքում տպագրությունը դարձավ հասարակական, քաղաքական, տնտեսական կյանքի վրա ազդեցության հզոր լծակ:

Ռացիոնալ տնտեսվարում

Ռացիոնալությունը ներթափանցել է Արևմուտքի կյանքի բոլոր ոլորտները՝ այդ թվում՝ տնտեսական վարքի մեջ:

Վաստակելու և շահույթի ձգտումը, նշում է Վեբերը, միշտ էլ բնորոշ է եղել տարբեր դարաշրջանների ու սոցիալական խմբերի: Ամենուրեք, հնագույն բոլոր երկրներում (Չինաստան, Յնդկաստան, Բաբելոն, Եգիպտոս) եղել են կապիտալիստական ձեռնարկումներ, սակայն դրանք հիմնականում իռացիոնալ-սպեկուլյատիվ էին (արկածախնդիր) կամ բնութագրվում էին բռնի ձեռքբերումներով:

Միայն Արևմուտքում է զարգացել ազատ աշխատանքի ռացիոնալ կապիտալիստական կազմակերպումը, ինչին նպաստել են հետևյալ երկու կարևոր տարրը.

- Տնային տնտեսության և ձեռնարկության տարանջատումը,
- Դրա հետ սերտորեն կապված ռացիոնալ հաշվապահական հաշվառման զարգացումը:

Եթե ավանդական տնտեսվարման հիմքում կարող էին ընկած լինել ընդունված սովորույթները, իներցիոն կանոններն ու մոտավոր գնահատականները, ապա կապիտալիզմի զարգացումը մեծապես պայմանավորված էր ռացիոնալ, ժզգրիտ հաշվարկով և գնահատմամբ:

Վեբերը կապիտալիստական է համարում տնտեսության այնպիսի վարումը, որը հիմնված է փոխանակման հնարավորության օգտագործման շնորհիվ շահույթ ստանալու ակնկալիքների վրա, այսինքն՝ գործունեություն ծավալելու խաղաղ հնարավորությունների վրա: Դրանում էլ առանցքային նշանակություն ուներ բուրժուական գործարանային կապիտալիզմի առաջացումը՝ ազատ աշխատանքի իր ռացիոնալ կազմակերպմամբ:

Մի քիչ վիճակագրություն. բողոքականներ և կաթոլիկներ

Վեբերը բերում է 1895 թ. մի վիճակագրություն, ըստ որի, Բադենի բնակչության 37 տոկոսը բողոքական էին, 61 տոկոսը՝ կաթոլիկ, 1,5 տոկոսը՝ հրեա: Սակայն ժողովրդական դպրոցներից զատ, ոչ պարտադիր դպրոցներում սովորողների ներգրավվածության հետևյալ պատկերն էր.

- Վարժարաններում 43%-ը բողոքական էին, 46%-ը՝ կաթոլիկ, 9,5%-ը՝ հրեա:

- Միջնակարգ վարժարաններում 69%-ը բողոքական էին, 31%-ը՝ կաթոլիկ, 9%-ը՝ հրեա:

- Ավագ դպրոցներում 49%-ը բողոքական էին, 40%-ը՝ կաթոլիկ, 11%-ը՝ հրեա:

Այսպիսով, նշված կրթական հաստատություններում միջինում սովորողների 48%-ը բողոքական էին, 42%-ը՝ կաթոլիկ, 10%-ը՝ հրեա: Այսպիսով, բողոքականներն ու հրեաները բնակչության մեջ իրենց տեսակարար կշիռն էականորեն գերազանցող ներկայացվածություն ունեին կրթության մեջ:

Բողոքականներն, ըստ Վեբերի, տնտեսական ռացիոնալիզմի առանձնահատուկ հակվածություն են ցուցաբերել, ինչն այդ նույն կերպով չի նկատվել կաթոլիկների մոտ: Ակնհայտ էր աշխատավորության վերին ուսյալ շերտերի, բարձրակարգ տեխնիկական և առևտրական անձնակազմի՝ առավելապես բողոքական լինելը: Կաթոլիկները հիմնականում արհեստավորներ էին, մինչդեռ բողոքականները գնում են ֆաբրիկաներ՝ ղեկավար դիրքերը համարելու: Յստակ տարբերություն կար նաև այն հարցում, թե ինչ տիպի մասնագիտություններ են ընտրում այս երկու դավանանքները. կաթոլիկները՝ հումանիտար, բողոքականները՝ տեխնիկական:

Վիճակագրությանն այս անդրադարձով Վեբերը հիմնավորում է, որ անհրաժեշտ է հետազոտել սովյալ դավանանքի այն յուրահատուկ տարրերը, որոնք պայմանավորել են վերոնշյալ իրողությունները:

Սակայն նա նաև զգուշացնում է, որ դավանանքային պատկանելությունը ոչ միայն տնտեսական երևույթների պատճառ է, այլ որոշ չափով՝ նման երևույթների հետևանք: Նկարագրված տնտեսական գործառույթներին մասնակցելու նախադրյալներ են մասամբ կապիտալի սեփականությունը և ծախսատար դաստիարակությունը՝ ժառանգված հարստությունը և բարեկեցությունը:

Այլ կերպ ասած, հակադարձ պատճառահետևանքային կապը ևս տեղ ունի. ոչ միայն բողոքականությունն է պայմանավորել կապիտալի սեփականությունը և բարձր կրթական ու սոցիալական աստիճանակարգումը, այլ երբեմն հակառակ ազդեցությունն էլ է նկատվել: Օրինակ, 16-րդ դարում հարուստ քաղաքների բնակչությունն աստիճանաբար շրջվել է դեպի բողոքականություն:

Վերջապես, իր ուսումնասիրության մեկնարկին Վեբերը զգուշացնում է, որ պետք չէ պաշտպանել մի այնպիսի խենթ թեզ, թե իբր կապիտալիստական ոգին կարող էր առաջանալ միայն Ռեֆորմացիայի ազդեցությամբ կամ այն, որ կապիտալիզմը որպես տնտեսական համակարգ՝ ռեֆորմացիայի արդյունք է: Ըստ նրա, նման տեսակետը պետք է մերժել, քանի որ կապիտալիստական գործառնությունների որոշ կարևոր ձևեր Ռեֆորմացիայից ավելի հին են:

Կապիտալիզմի ոգին

Կապիտալիզմի ոգու առանցքային հատկանիշները ցույց տալու համար Մաքս Վեբերը հղում է կատարում Բենջամին Ֆրանկլինի քարոզին, որից առանձնացնում է երկու հիմնարար տարր.

- Վարկունակ, բարեխիղճ մարդու կատարելատիպը,
- Սեփական կապիտալի մեծացման պարտականության գաղափարը:

Սակայն Ֆրանկլինի բարոյական դրույթներն օգտապաշտական հիմնավորում ունեն. ազնվությունը շահավետ է, քանի որ այն վարկ է բերում: Եթե թվացյալ ազնվությունը նույն արդյունքն է տալիս, ապա դա ևս ընդունելի առաքինություն է: Ճշտապահությունը, աշխատասիրությունը, չափավորությունը՝

նույնպես:

Վերերը նշում է, որ այդ էթիկայի բարձրագույն բարիքը փող և ավելի շատ փող վաստակելն է՝ խուսափելով անկաշկանդ վայելքից, գրկելով բոլոր երջանկապաշտական կամ հաճույքապաշտական (հեղոնիստական) տեսակետներից:

Վերերի համար կապիտալիզմի ոգին «...այն մտածելակերպն է, որին հատուկ է մասնագիտության մեջ լեզվատիր շահույթի սիստեմատիկ և ռացիոնալ ձգտումը»:

Այս առումով պետք է տարբերել կապիտալիզմի ոգին կրող, նոր սերնդի ձեռներեցներին՝ ավանդական տնտեսվարում ունեցող ձեռներեցներից: «Յների» էթոսի հիմքում ընկած էին ավանդական ապրելակերպը, շահույթի ավանդական չափը, աշխատանքի ավանդական ծավալը, գործավարության և աշխատողների ու ավանդական հաճախորդների շրջանակի հետ վերաբերմունքի ավանդական ձևերը, հաճախորդների ներգրավման ու սպառման եղանակները:

Այս հովվերգական վիճակը սկսեց փլուզվել դաժան մրցակցային պայքարի արդյունքում: Կապիտալիզմի ոգու ձևավորումն ու վերելքը զուգակցվում էր նախկին շքեղ ու հանգիստ կենսակերպի փոփոխությամբ. այն իր տեղը զիջում էր կոշտ սթափությանը: Աձում են գործարարից պահանջվող աշխատանքի լարվածությունն ու արտադրողականությունը, ինչն անհամատեղելի է հարմարավետ կյանքը վայելելու հետ: Այս էթիկական հատկանիշները համարժեք չէին անցյալի ավանդականության հատկանիշներին: Շահույթը ներդրվում էր արտադրության մեջ. նպատակը ոչ թե սպառելն էր, այլ՝ շահույթ ստանալը:

Վերերը հակադրվում է Մարքսի մատերիալիստական մոտեցմանը՝ ցույց տալով, որ այնտեղ, որտեղ կապիտալիստական ոգին առաջանում է, այն ձեռք է բերում իր ազդեցության համար անհրաժեշտ դրամական միջոցներ, բայց հակառակը երբեք չի լինում: Այլ կերպ՝ որտեղ ձևավորվում է կապիտալիզմի ոգին, հայտնվում են կապիտալն ու հավելյալ շահույթը: Հակառակը (Մարքսի մոտեցումը) չի աշխատում. մատերիալիստական հենքը բավարար և անհրաժեշտ պայման չէ կապիտալիզմի ոգու ձևավորման համար:

Նախասահմանվածության և ընտրյալության ուսմունքը

Կապիտալիզմի ոգու վերելքին մեծապես նպաստել է ձգնավորական բողոքականության կրող կալվինականությունը, հատկապես այն տեսքով, որ այն ձեռք է բերել 17-րդ դարում արևմտաեվրոպական տարածքներում:

Կալվինականության գլխավոր դոգման ընտրյալության մասին ուսմունքն է: Կալվինի համար անվիճելի փաստ է, որ մարդկանց միայն փոքր մասն է կոչված երանության: Մեր անհատական ճակատագրի իմաստը շրջապատված է մութ գաղտնիքներով, որոնք բացահայտելն անհնար և անթույլատրելի է: Մարդկանց մի մասը հասնում է երանության, իսկ մյուսները մնում են անիծված: Բոլորովին անքննելի որոշումներով յուրաքանչյուրին բաժին է հասել իր ճակատագիրը: Աստծո ողորմածությունը չեն կարող կորցնել նրանք, ում նկատմամբ նա բարեհաճ է և չեն կարող արժանանալ նրանք, ում նա մերժում է:

Այս ուսմունքի գլխավոր ազդեցությունն առանձին անհատի ներքին միայնության չլսված զգացումն էր: Նա պետք է միայնակ անցներ իր ճանապարհը՝ հավերժությունից իր համար կանխորոշված

ձակատագրին ընդառաջ: Ոչ ոք չէր կարող օգնել նրան՝ ոչ քարոզիչը (միայն ընտրյալը կարող է աստծո խոսքը հասկանալ), ոչ էլ սուրբ խորհուրդները, որոնք ևս միջոց չէին՝ աստծո ողորմածությունը նվաճելու համար:

Եկեղեցու և սուրբ խորհրդի միջոցով փրկության վերացումը ամենաորոշիչ տարբերությունն էր կաթոլիկությունից: Սա աշխարհի ապակախարդման մեծ կրոնապատմական գործընթացի եզրափակումն էր, որ մի կողմ նետեց փրկության մոգական միջոցները:

Զարգացած կալվինականության տարածքներում անհետացավ նաև անհատական խոստովանությունը: Մեղքի զգացական գիտակցության պարբերական լիցքաթափման միջոցը չեզոքացվեց:

Ի հակադրություն կալվինականության, «...կաթոլիկի համար ...հոգևորականը մի կախարդ էր ... Նրան կարելի էր դիմել զղջման և ապաշխարության պատրաստ լինելու դեպքում, իսկ նա տալիս էր քավություն, փրկության հույս, ներման վստահություն և դրանով իսկ թեթևացնում այն ահռելի լարվածությունից, որ կալվինականի ձակատագրի անբաժանելի և ոչնչով չմեղմացվող մասն էր:

Կալվինականին ծանոթ չէր կարեկցական ու մարդկային մխիթարությունը ... Կալվինականության աստվածն իր հետևորդներից պահանջում էր ոչ թե առանձին «լավ արարքներ», այլ համակարգային մոտեցման վերածած սրբանմանություն»:

Ճգնակեցությունը, մասնագիտական կոչումն ու աշխատանքը

Այլևս փրկությունը մոգական միջոցները չէին կամ մեղքերի թողությունը կամ բարեպաշտ արարքները, այլ՝ բնությունից սերված մարդու կենսաոճից միանշանակորեն տարբերվող փոխակերպումը: Ճգնավորությունն այլևս ավելցուկային գործ չէր, այլ աշխատանք, որը կարող էր կատարել յուրաքանչյուր ոք, ով ուզում էր ձեռք բերել սեփական ընտրյալության համոզվածությունը:

Բնական կյանքից տարբերվող այդ առանձնահատուկ կյանքն արդեն տեղի էր ունենում ոչ թե աշխարհից դուրս՝ վանական համայնքային կառույցներում, այլ՝ աշխարհի և դրա կարգերի ներսում: Քրիստոնեական ճգնավորությունը, որ սկզբում ձգտում էր փախուստի դիմել աշխարհիկ կյանքից դեպի միանձնություն, այժմ արդեն եկեղեցական տիրապետություն էր հաստատել այն աշխարհի նկատմամբ, որից հրաժարվել էր: Սա մեր իմացած ավանդական, աշխարհից փախչող ճգնավորությունը չէ: Սա արդեն ճգնավորություն է աշխարհի մեջ. սթափ, արթուն, գիտակից ու ռացիոնալ կյանքը:

«Մասնագիտություն», «կոչում» հասկացությունները հենց բողոքականությունն է բերում ասպարեզ՝ ոչ թե որպես ներքին աշխարհի հոգևոր ճգնավորություն, այլ՝ աշխարհիկ պարտականությունների կատարում:

Աշխարհը գոյություն ունի միայն այն բանի համար, որ ծառայի աստծո ինքնամեծարմանը, ընտրյալ քրիստոնյան գոյություն ունի միայն այն բանի համար, որ աստծո պատվիրանների կիրառման միջոցով փառավորի աստծուն: Սակայն աստված ցանկանում է քրիստոնյայի սոցիալական գործունեությունը, որպեսզի կյանքի սոցիալական պատկերը համապատասխանի իր պատվիրաններին և նպատակին: Դրան ծառայում է հենց մասնագիտական աշխատանքը:

Ըստ Վեբերի, «Կալվինականության մեջ մերձավորի հանդեպ սերը ստանում է առարկայական,

անանձնական բնույթ՝ որպես շրջապատող հասարակական տիեզերքի ռացիոնալ ձևավորմանն ուղղված ծառայություն»։ Այդ աշխատանքն աստծուն փառավորող և աստվածահաճո աշխատանք է։

Մասնագիտական անխոնջ աշխատանքը միայն կարող է վերացնել սեփական ընտրյալության վերաբերյալ կասկածներն ու ամրապնդել նախասահմանության համոզմունքը. «Աշխարհիկ մասնագիտական աշխատանքը կրոնական վախերով պայմանավորված հուզմունքը հաղթահարելու միջոց է»։

Կալվինականն ինքն է ստեղծում (իր աշխատանքով ու գործունեությամբ) իր համոզվածությունը՝ սեփական ընտրյալության / երանության հարցում։ Աստված օգնում է նրան, ով ինքն է իրեն օգնում։

Վայելքների և սպառման կաշկանդումը

Մասնագիտական կոչման գաղափարի ամենահետևողական հիմնավորումը տվել է կալվինականության հողի վրա ի հայտ եկած անգլիական պուրիտանությունը, հատկապես՝ Ռիչարդ Բաքսթերը։ Ըստ նրա, դատապարտման է արժանի սեփականության վրա հանգստանալը, հարստությունը վայելելը՝ դրանից բխող անգործության և վավաշոտության հետևանքներով։ Որպեսզի երկրի վրա մարդը համոզվի իր փրկության մեջ, պետք է կատարի իրեն ուղարկողի գործերը։ Սակայն աստված պահանջում է ոչ թե պարզապես աշխատանք, այլ մասնագիտական ռացիոնալ աշխատանք։

Առաջին և ամենածանր մեղքը ժամանակի վատնումն է՝ հաճույքներն ու ժամանցը, դատարկախոսությունը, պերճանքը և անգամ երկար քնելը։ Գայթակղությունների և անմաքուր կյանքի դեմ լավագույն կանխարգելիչ միջոցը աշխատանքն է։

Աշխարհիկ բողոքական ձգնավորությունն իր ամբողջ ծանրությամբ ընդդիմանում էր սեփականության անկաշկանդ վայելքին և զսպում էր սպառումը, հատկապես՝ պերճանքի առարկաների սպառումը։ Ճգնավորությունը սեփականատերերից չէր ակնկալում ինքնակեղեքում, այլ պահանջում էր սեփականության օգտագործում անհրաժեշտ և գործնականում օգտակար նպատակների համար։ Ճգնավորությունը հավասարապես պայքարում էր ինչպես անկարգապահության, այնպես էլ զուտ բնագոյալին ընչաքաղցության դեմ։

Ճգնավորական խնայողության պարտադրանքի գլխավոր արդյունքն է դառնում կապիտալի ձևավորումը։ Սպառողական օգտագործման խոչընդոտները նպաստում են, որ ձեռք բերվածը՝ որպես ներդրումային կապիտալ, արտադրողական կիրառում գտնի։

Աշխատանքային պարտականության կատարման միջոցով աստծո թագավորությանը հասնելու ձգտումը և խստապահանջ ձգնավորությունը եկեղեցին պարտադրում էր նաև ունեզուրկ խավերին, ինչն էլ նպաստում էր աշխատանքի արտադրողականությանը։ Աշխատանքն ու ձեռնարկատիրական ջանքը համարվում էին աստծո առաջ ունեցած պարտականություն։

Վերերը նշում է, որ հաղթանակած կապիտալիզմն այլևս չունի ձգնավորության ոգու հենարանի կարիքն այն պահից սկսած, երբ այն ձեռք բերեց մեխանիկական հիմք (արտադրության մեքենայացում)։ «Այսօրվա կապիտալիստական տնտեսակարգը մի ահռելի տիեզերք է։ Այստեղ ծնվում է յուրաքանչյուր անհատ և դա նրան տրվում է որպես անփոփոխելի կառույց, որտեղ նա պարտավոր է ապրել։ Մերօրյա կապիտալիզմը դաստիարակում և ստեղծում է իրեն անհրաժեշտ տնտեսական սուբյեկտներին՝ գործարարներին և աշխատողներին»։

Քննադատական հայացք

Վեբերի ուշագրավ տեսության քննադատության պակաս երբեք չի եղել: Քննադատները մատնանշել են պատմական փաստեր, որոնք առերևույթ հակասում էին առաջ քաշված մոտեցմանը:

Տարածված տեսակետներից է, օրինակ, այն, որ կապիտալիզմի առաջընթացը Յուլիանիայում և Անգլիայում 16-17-րդ դարերում, ոչ թե պայմանավորված է դրանց՝ բողոքական երկրներ լինելու հանգամանքով, այլ բարձր տնտեսական ակտիվությամբ և աշխարհագրական մեծ հայտնագործություններով: Քննադատության մեջ հաճախ է բերվում կաթոլիկ Ֆրանսիայի օրինակը, որը շատ արագ հետևել է Յուլիանիայի և Անգլիայի զարգացմանը: Կամ՝ Իտալիայի օրինակը, որտեղ դեռ 14-րդ դարից էր սկսել զարգանալ կապիտալիզմը: Ասիական երկրներում ևս կապիտալիզմը զարգացել է առանց քրիստոնեության:

Այնուամենայնիվ, Մաքս Վեբերի արժեքավոր այս աշխատության գլխավոր բացը մեթոդաբանական է: Վեբերի ուսումնասիրության գլխավոր մեթոդը՝ կրոնական տեքստերի (հիմնականում՝ բողոքական աստվածաբանների և կրոնական գործիչների հեղինակությամբ) վերլուծությունն առերևույթ հակասում է հենց Վեբերի առաջ քաշած մեկ այլ հայեցակետի՝ հասկացող կամ ըմբռնող սոցիոլոգիային: Ըմբռնողական սոցիոլոգիայի նպատակն է՝ հասկանալ այն սուբյեկտիվ իմաստներն ու նպատակները, որոնք անհատները դնում են իրենց գործողությունների հիմքում: Վեբերի ճանաչողական հայեցակարգում հասարակական կյանքի ուսումնասիրությունն այլ կերպ դժվար է պատկերացնել:

Մինչդեռ քննարկվող այս աշխատությունը բավական հեռու է անհատների սոցիալական գործողությունների իմաստները հասկանալու նպատակադրումից: Վեբերը մանրակրկիտ դիտարկում ու քննարկում է տեքստեր. դավանաբանական մեկնություններ, կրոնական քարոզներ, և այլն: Սակայն հասկացման շղթայի մեջ մի կարևոր օղակ է պակասում. ինչպիսի՞ն է եղել գործող անհատների՝ քննարկվող տեքստերի ընկալումն ու մեկնաբանությունը: Կապիտալիզմի ոգու կրող նոր խավերը, ջերմեռանդ ու ասկետիկ ձեռներեցներն այս գրքում լուռ են. նրանց ձայնն ու կերպարն անշոշափելի է:

Ուսումնասիրության հիմքում կարծես այն ենթադրությունն է ընկած, թե կրոնական տեքստերը մարդկանց տնտեսական վարքը վերափոխելու և բարոյական դրույթներն ուղղակի գործողության մեջ դնելու մի անդիմադրելի գործարարն ունեն: Թվում է՝ դրանք կյանքի կոչող սոցիալական սուբյեկտներն օժտված չեն կամքով և մեկնաբանության ունակությամբ:

Չնարավոր է՝ աշխատության մեջ սոցիալական սուբյեկտների՝ անհատների կիրառած իմաստների ու նպատակների ուսումնասիրությունը տեղ չի գտել պարզապես էմպիրիկ փաստերի սղության պատճառով: Սակայն մեթոդական հակասությունը չի նվազեցնում Մաքս Վեբերի ուսումնասիրության արժեքը, հատկապես այն ազդեցությունը, որ այն ունեցել է նոր գիտական հետազոտություններ խթանելու և հարցեր առաջադրելու առումով:



ԻՆՉ Է ՊՈՊՈՒԼԻՉՍԸ

Յան-Վերներ Մյուլլեր

Գիրք & Միտք #5 | Ինչ է պոպուլիզմը
Էդգար Վարդանյան և Ավետիք Մեջլումյան

Պոպուլիզմը՝ «ժողովուրդ» հասկացությունը մանիպուլացնող հակապլյուրալիզմն է

Էդգար Վարդանյան

Անկախ հետազոտող, քաղաքագետ

Յան-Վերներ Մյուլլերի «Ինչ է պոպուլիզմը» գիրքը «պարտադիր է կարդալու համար» շարքից է: Այն պետք է որ հետաքրքրի բոլոր նրանց, ովքեր հաճախ են լսում, առավել ևս, օգտագործում պոպուլիզմ բառը: Իսկ այդպիսիք այսօր բազմաթիվ են ողջ աշխարհում, այդ թվում, նաև Հայաստանում:

Պատահական չէ, որ 2017-ին Քեմբրիջի բառարանը պոպուլիզմը տարվա բառ էր հռչակել: Բայց խնդիրն այն է, որ, ինչպես նշում են հետազոտողները, այդ բառը շատ տարբեր կերպ է օգտագործվում, ինչի արդյունքում էլ վերջինիս բովանդակության շուրջ խառնաշփոթ է տիրում: Այս գրքում պոպուլիզմը կիրառվում է այն բովանդակությամբ, որով այն հիմնականում ներկայացված է Եվրոպայի սոցիալ-քաղաքական կյանքում, մեդիայում և ժամանակակից ակադեմիական շրջանակներում:

Գրքի հեղինակը նշում է, որ շատ հաճախ պոպուլիզմ բառն օգտագործվում է որպես դեմագոգիա (ժողովրդահաճություն) բառի հոմանիշ, ինչը չի բացահայտում պոպուլիզմ կոչվող ժամանակակից երևույթը: Ավելին, Մյուլլերը պնդում է, որ պոպուլիզմը, օրինակ, տեղ չունենալու աթենյան դեմոկրատիայում, որում տարածված էր հենց դեմագոգիան:

Եվ ուրեմն՝ ի՞նչ է պոպուլիզմը: Չկա պոպուլիզմի հստակ մեկ սահմանում: Սակայն ակադեմիական գրականությունում տարածված է հոլանդացի քաղաքագետ Քաս Մուդեի սահմանումը, ըստ որի, պոպուլիզմը նեղ գաղափարախոսություն է, որը հասարակական-քաղաքական կյանքը դիտարկում է որպես երկու սուբյեկտների՝ անփոփոխ կամք ունեցող բարոյական ժողովրդի և բարոյազուրկ էլիտաների միջև պայքար: Ըստ պոպուլիստների, քաղաքականության միակ նպատակն է ժողովրդի

բարոյական անփոփոխ կամքի արտացոլումը:

Յան-Վերներ Մյուլլերը գրեթե նույն սահմանումն է տալիս, բացառությամբ նրա, որ վերջինս պոպուլիզմը չի որակում որպես «նեղ» գաղափարախոսություն: Նա պոպուլիզմը դիտարկում է որպես «քաղաքականության բարոյական երևակայություն»: Սակայն, ըստ իս, խոսքը նույն նեղ գաղափարախոսության մասին է, քանզի գործ ունենք քաղաքականության վերաբերյալ որոշակի պատկերացման հետև և այդ պատկերացումները չեն ենթադրում քաղաքականության բոլոր ասպեկտների վերաբերյալ մոտեցումների առկայություն:

«Նեղ» գաղափարախոսություն ասելով՝ պետք է հասկանանք հետևյալը. դա գաղափարախոսության այնպիսի տեսակ է, որում չկան սեփական մոտեցումներ հասարակական-քաղաքական կյանքի մի շարք կարևորագույն հարցերի մասին, ինչպիսիք են, օրինակ, հարկահանության համակարգը, պետության մասնակցությունը տնտեսությունում, սոցիալական աջակցության համակարգը, և այլն: «Նեղ» գաղափարախոսությունը, այսպես ասած, «նստում է» քաղաքական գաղափարախոսական սպեկտրի որևէ հատվածի վրա: Այսպիսով, կարող ենք խոսել ձախ և աջ պոպուլիզմի մասին, իսկ ավելի հաճախ՝ ծայրահեղ ձախ կամ ծայրահեղ աջ պոպուլիզմի մասին:

Պոպուլիզմի կարևորագույն հատկանիշն է պլյուրալիզմի (բազմազանության, բազմակարծության) ժխտումը: Պոպուլիստի տրամաբանությունը հետևյալն է. եթե ժողովուրդը միշտ ճիշտ է և եթե ժողովուրդը միասնական կամք ունի, ապա ինչի համար է պետք բազմակարծությունը / բազմազանությունը: Պոպուլիստական հայեցակարգի մեջ տարբեր մոտեցումների առկայությունը, բազմազանությունը նշանակում է ժողովրդի կամքին հակառակ մոտեցումների առկայություն: Պոպուլիստական տրամաբանությունն այն է, որ եթե բացի այն մեկ ճշմարիտից (որը ժողովրդի կամքն է) այլ մոտեցումներ կյանքի կոչվեն, դա կնշանակի, որ ժողովրդի կամքը խաթարված է, որ ժողովրդի շահերին դեմ գնացող քաղաքականություն է իրականացվում: Իսկ քաղաքականությունը, ըստ պոպուլիստի, ոչ այլ ինչ է, քան ժողովրդի միասնական կամքի արտահայտման գործընթաց:

Բնականաբար, պոպուլիստը հայտարարում է կամ հասկացնել է տալիս, որ գոյություն ունեցող մեկ անփոփոխ ճշմարտությունը հենց միայն ինքն է արտահայտում: Սակայն նա միշտ ասում է, որ այդ ճշմարտությունը ժողովրդի կամքն է: Եվ այստեղ պետք է խոսել այն մասին, թե ինչ է ժողովուրդը, ըստ պոպուլիզմի: Առանց այս հարցի պարզաբանման, կարծում եմ, պոպուլիզմի մասին պատկերացումներն առնվազն թերի կլինեն:

Յան-Վերներ Մյուլլերն ասում է, որ պոպուլիստական մոտեցումն այն է, որ բոլոր նրանք, որոնք չեն կիսում պոպուլիստական կուսակցության գաղափարները, ժողովուրդ չեն: Այսինքն, պոպուլիստների համար ժողովուրդն արհեստական կոնստրուկտ է, ժողովուրդը քաղաքացիների ամբողջությունը չէ: Նրանք, օրինակ, երեք միլիոնանոց ժողովրդի միայն, ենթադրենք, տասը հազար մարդու աջակցությունն ունենալով կարող են ասել, որ հենց այդ մարդիկ են ժողովուրդը, որ ժողովուրդն իրենց հետ է: Սա, իհարկե, չի նշանակում, որ նրանք հրաժարվում են հանդես գալ ողջ ժողովրդի անունից: Նրանք հասկացնել են տալիս, որ բոլոր նրանք, որոնք չեն սատարում իրենց, ուղղակի դեռ չեն հասկացել, թե որն է ճիշտ ուղին:

Պոպուլիզմը լիբերալ-դեմոկրատիայի ստվերն է՝ նշում է Մյուլլերը: Նա նաև պնդում է, որ պոպուլիզմը չի լրացնում լիբերալ- դեմոկրատիայի բացերը, ինչպես ոմանք են ասում, քանի որ պոպուլիստներին իրականում չի հետաքրքրում ո՛չ ազատականությունը, ո՛չ էլ ժողովրդավարությունը: Իրականում պոպուլիստներն ուղիղ դեմոկրատիայի մեխանիզմներին են դիմում միայն նրա համար, որպեսզի իրենց առաջարկած, իրենց ձեռնտու լուծումները ներկայացնեն որպես ժողովրդի կամքից բխող, որպես միակ ճշմարտություն:

Իշխանական լծակներ ձեռք բերելով՝ պոպուլիստները փորձում են այնպես անել, որ հավասար հնարավորություններ չլինեն տարբեր տեսակետներ, մոտեցումներ գեներացնելու և հնչեցնելու համար: Իսկ հանրաքվեներն ու ընտրությունները նրանք օգտագործում են սեփական իշխանությունը, սեփական քաղաքականությունը լեգիտիմացնելու համար: Այնպես չէ, որ պոպուլիստները հրաժարվում են դեմոկրատական ինստիտուտներից, սակայն նրանք բովանդակազրկում են վերջիններս:

Այդ պատճառով է, որ պոպուլիզմը դիտարկվում է որպես լիբերալ-դեմոկրատիայի գոյությանը սպառնացող հիմնական ժամանակակից մարտահրավերներից մեկը: Պոպուլիստները, ի տարբերություն, օրինակ, տարատեսակ ֆունդամենտալիստների, չեն հայտարարում, որ իրենք դեմոկրատիայի դեմ են և իրավական շրջանակներից դուրս իրենց չեն դնում: Նրանք հաճույքով օգտվում են դեմոկրատական ինստիտուտներից, որպեսզի թողնելով ձևը՝ վերացնեն վերջիններիս բովանդակությունը:

Այսօր կա բանավեժ առ այն, թե ինչպես պետք է դեմոկրատական պետությունները և դեմոկրատական հանրությունները պայքարեն այս երևույթի դեմ: Մյուլլերն առաջարկում է պայքարել պոպուլիզմի դեմ առանց գրաքննությանը դիմելու, առանց պոպուլիստներին քաղաքականությունից դուրս մղելու:

Չամաձայն լինելով այդ սկզբունքի հետ, կարծում եմ՝ պետությունը պետք է նաև պատժիչ մեխանիզմներ կիրառի պոպուլիզմ որոշակի կոնկրետ դրսևորումների նկատմամբ: Օրինակ, պոպուլիստները, հատկապես ծայրահեղ աջ, ծայրահեղ ազգայնական պոպուլիստները, հաճախ են դիմում ատելության խոսքի կիրառմանը: Իսկ ատելության խոսքը, շատ եվրոպական երկրներում, այդ թվում, Չայաստանում՝ քրեականացված է: Ուստի ատելության խոսքի դեմ արդյունավետ պայքարն էապես կարող է կրճատել պոպուլիստների տարածքը:

Պոպուլիզմի ծուղակը. ժողովուրդ vs. հասարակություն

Ավետիք Մեջլումյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Պոպուլիզմը դեմագոգիան չէ

«Պոպուլիզմ» բառի լայնածավալ և անհարկի կիրառության պակաս ակնհայտորեն չկա:

Բանավիճող յուրաքանչյուր կողմ սեփական իմաստն է ներարկում այս հասկացության մեջ, ինչի պատճառով այն դառնում է բովանդակագուրկ: Պոպուլիստ պիտակը վերածվել է ընդդիմախոսին լռեցնելու գործիքի, ինչից հաճախ օգտվում են հենց իրենք՝ պոպուլիստները:

Յան-Վերներ Մյուլլերի աշխատությունն արժեքավոր է նրանով, որ առաջարկում է հասկացության մեկնաբանության լավ հիմնավորված մի շրջանակ: Դրանից դուրս են մնում, օրինակ, պոպուլիզմի հետ սխալմամբ նույնականացվող դեմագոգիան և նմանատիպ այլ ֆենոմեններ:

Մյուլլերի մոտեցման շրջանակում դեմագոգիան (ամբոխավարություն, ամբոխահաճություն) կարծես այդքան էլ արժեքավոր շրջանակ չէ՝ քաղաքական կյանքը նկարագրելու համար: Ինչ-որ իմաստով, քաղաքական գործիչների ու կուսակցությունների մեծ մասը դեմագոգ է: Նրանք բարդ խնդիրներին պարզ (բայց չաշխատող) լուծումներ են խոստանում, հաճոյանում ու սիրաշահում են ժողովրդին, հաճախ անպատասխանատու կոչեր են հնչեցնում, քանի դեռ ընդդիմության մեջ են: Յուրաքանչյուրը փորձում է հղում անել ժողովրդին, մեծ թվով մարդկանց համար ընկալելի բաներ ասել, հաղորդակից լինել հասարակ մարդկանց ապրումներին ու մտածումներին:

Դժվար է տարբերակել, թե այդ բոլոր գործիչներից ու քաղաքական խմբերից որն է իրականում պատասխանատու կամ անպատասխանատու, անկեղծ կամ կեղծավոր: Հնարավոր է, որ դեմագոգ թվացող ուժերն իրապես արտահայտում են հասարակական որոշակի խավերի կարիքներն ու շահերը: Հետևաբար, դեմագոգիայի մեղադրանքը դժվար է հիմնավորել, փաստարկել: Այն օգտակար սխեմա չէ՝ քաղաքական դաշտի դերակատարներին դասակարգելու համար: Այլ հարց է պոպուլիզմը, որն իրական վտանգ է սպառնում ժողովրդավարական կարգին և որի ուսումնասիրությունը պահանջված է:

Պոպուլիզմի առանցքային հատկանիշները

Մյուլլերի հայեցակարգն առաջ է քաշում պոպուլիզմին բնորոշ մի շարք առանցքային հատկանիշներ.

- Պոպուլիստների աշխարհում էլիտաները բարոյագուրկ են, կոռումպացված և դավադիր, իսկ նրանց հակադրվող ժողովուրդը՝ բարոյական ու համասեռ հանրույթ, որ չի կարող սխալվել:

Պոպուլիստներն անմեղ ու քրտնաջան աշխատող մարդկանց հակադրում են կոռումպացված էլիտային, որին միայն իր շահերն են հետաքրքրում: Յուրաքանչյուր պոպուլիստ փորձում է միավորել իր ժողովրդին, այսինքն՝ միակ իրական ժողովրդին: Բնականաբար, այդպիսի ժողովուրդը հորինվածք է:

- Պոպուլիստները հակապլյուրալիստ են. ըստ նրանց, բազմազանությունն ու բազմակարծությունը վտանգավոր են, քանի որ մասերի են բաժանում անարատ և համախմբված ժողովրդին:

Պոպուլիստները երազում են հոլիզմի՝ ամբողջապաշտության մասին: Հանրույթն այլևս պետք է բաժանումների չենթարկվի: Քանի որ իրական ժողովուրդը միասնական է, այդ ժողովրդի բոլոր մասնիկները միասին կարող են ունենալ մեկ իսկական ներկայացուցիչ:

- Դեմ չլինելով ժողովրդավարությանն ու քաղաքական ներկայացուցչությանը՝ պոպուլիստները պնդում են, որ միայն իրենք են ժողովրդի լեգիտիմ ներկայացուցիչները:

Դրա համար կարելի է արանքից հանել բարդ կուսակցական կազմակերպություններին՝ որպես միջնորդների: Եթե նախկինում կուսակցությունները լեգիտիմ միջնորդ էին՝ պլյուրալիստական

հասարակության և քաղաքական համակարգի միջև, ապա պոպուլիստների համար դրանք անհարկի տարանջատում ու լարվածություն ստեղծող մարմիններ են:

Թվերը խաբում են, կարևորը ժողովրդի ոգին է

Ըստ պոպուլիստների, ընտրության ժամանակ գրանցված թվերը դեռ ոչ մի բանի մասին չեն վկայում: Երբ պոպուլիստ գործիչը պարտվում է ընտրություններում, նա միշտ հղում է անում այն բանին, որ ինչ-որ մի տեղ կա մի իսկական, մաքուր ժողովուրդ, որը դեռ համախմբված չէ, հնարավոր է՝ մոլորված է և դրա համար իր ձայնը չի բարձրացրել:

Ենթադրյալ իսկական ժողովուրդը՝ լուռ, չհամախմբված կամ մոլորված, հակադրվում է ընտրությունների արդյունքներին: Չաշվարկված քվեաթերթիկները կարևոր չեն, կարևորը ժողովրդի ծպտյալ ինքնությունն ու կամքն է, որի արտահայտման աստղային ժամը դեռ կգա: Ստացվում է, որ պոպուլիստները ժողովրդի ինչ-որ անտեսանելի, խորհրդավոր էությունն են ներկայացնում, ոչ թե նրա կամքը՝ արտահայտված թվերով և այլ էմպիրիկ փաստերով:

Պոպուլիստների այդ մեկնաբանությամբ ժողովուրդը դուրս է դրվում ժողովրդավարական, քաղաքական գործընթացներից և հակադրվում է դրանց իրական արդյունքներին: Իսկ այդ անհամապատասխանությունն էլ բացատրվում է էլիտաների՝ ժողովրդին շփոթեցնող դավադրություններով:

Մինչդեռ իրական ժողովրդավարների համար ներկայացուցչությունը միշտ վարկածային է: Նրանք ընդունում են, որ ժամանակի ինչ-որ պահի ունենալով ժողովրդի, ենթադրենք, 54%-ը, կարող են այն կորցնել՝ հաջորդ ընտրություններում ավելի քիչ ձայն ստանալով: Ընդ որում, նույնիսկ այդ բավական բարձր 54%-ն ամբողջ ժողովրդի կամքի արտահայտումը չէ, այլ՝ մեծամասնության, որը հաջորդ պահին կարող է մտափոխվել, կասկածել իր իսկ կատարած ընտրության նպատակահարմարությանը:

Ճիշտը մեկն է

Միասնական ժողովրդի հայեցակետից բխում է, որ կա մեկ որոշակի ընդհանուր բարիք և քաղաքական գործիչի կամ կուսակցության խնդիրն է՝ անշեղորեն իրագործել այդ քաղաքականությունը: Այդ առումով հատկանշական է Յունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանի հետևյալ միտքը, որ մեջբերում է Մյուլլերը՝ գրքի էջերում. «Տնտեսությունը վերականգնելու համար տեսություններ պետք չեն: Պետք են պինդ, վստահելի տղերք՝ մի երեսուն հոգի, որոնք կանեն այն, ինչ բոլորս էլ գիտենք, որ պետք է անել»:

Օրբանի մոտեցումը տեղ չի թողնում կասկածի և բանավեճի համար. այն հղում է անում բոլորի կողմից ընդունելի և ակնհայտ ճշմարտության գոյությանը: Ժողովուրդը, իբր, խոսում է մեկ լեզվով և տալիս է իմպերատիվ մանդատ, որը քաղաքական գործիչներին թելադրում է, թե ինչ պետք է անել:

Պոպուլիստները խոսում են այնպես, կարծես ժողովուրդը կարող է մշակել և ունենալ միասնական դատողություն, միասնական կամք և միասնական մանդատ: Պոպուլիստական կառավարության որևէ գործողություն չի կարող հարցականի տակ դրվել, քանի որ դրա հենքը ժողովրդի կամքն է:

Եթե նույնիսկ իշխանության մեջ գտնվող պոպուլիստներն ունեն ձախողումներ, ապա դրանք հիմնականում մեղսագրվում են կուլիսային (արտաքին կամ ներքին) էլիտաներին: Չտաքքիր է, որ իշխանություն վերցրած պոպուլիստները հաճախ իրենց պահում են որպես այդ էլիտաների դավադրությունների և սաբոտաժի զոհեր: Տպավորություն է, որ գործող կառավարություն լինելով, նրանք դեռ իրական իշխանություն չունեն և ստիպված են անընդհատ պայքար տանել էլիտաների դեմ՝ դիմելով ժողովրդի աջակցությանը և վերջինիս լարվածության մեջ պահելով:

Ի՞նչն է սնում պոպուլիզմը

Մյուսները նշում է, որ պոպուլիզմին 1970-ականներից սկսած նպաստել են ներգաղթը, նահանջը բարեկեցությունից, եվրաճգնաժամը: Պոպուլիզմը ծաղկում է, երբ գերիշխող են դառնում ժողովրդի ինքնության և ինքնիշխանության՝ վտանգված լինելու մտավախությունները:

Թրամփի 2016-ի հաղթարշավին նպաստեց այն տարածված մտահոգությունը, որ ԱՄՆ-ն վերածվում է ,մեծամասնական փոքրամասնությանե երկրի: Մտավախություն կար (և կա), որ իսկական ժողովրդի (սպիտակամորթ և բողոքական) ավանդական կերպարը կվերանա: Բացի այդ, ամերիկացիների մի ստվար հատվածի տնտեսական շահերը ներկայացված չէին Վաշինգտոնում:

Պոպուլիզմի հիմքերից է նաև այն զգացումը, որ տեխնոկրատ և լիբերալ փորձագետներն անարձագանք են թողնում ժողովրդի ձայնը և հեռացել են նրանից: Անտեսված խավերը պոպուլիստ առաջնորդների մեջ են տեսնում իրենց շահերի անկեղծ ու անշահախնդիր արտահայտողներին:

Պոպուլիզմը սնուցող աղբյուրներ են նաև մարդկանց հակազդեցությունն անզուսպ կապիտալիզմին (որտեղ ուժեղները միշտ հաղթում են) և փոքրամասնությունների իրավունքների ընդլայնմանը: Շատ մարդիկ վախենում են նեոլիբերալ փաթեթավորմամբ ժողովրդավարությունից, որը կապում են անհատապաշտության, մատերիալիզմի և աթեիզմի հետ:

Սնվելով այս վախերից ու դժգոհությունից՝ պոպուլիզմը, ձևականորեն հավատարմություն ցուցաբերելով ժողովրդավարական ընթացակարգերի ու արժեքների հանդեպ, իրականում փորձում է խարխիլել դրանք: Ժողովրդավարությանը սպառնացող վտանգները ոչ թե դրսից են՝ այլ գաղափարախոսությունների կամ ծայրահեղական համակարգերի կողմից, այլ՝ ներսից՝ պոպուլիզմի ձևով, որն այլասերում է ժողովրդավարությունը:

Քննադատական հայացք

Մյուսների տեսական սխեման զերծ չէ որոշ բացերից, կամ, ավելի ճշգրիտ ձևակերպմամբ, այն որոշ հարցեր անպատասխան է թողնում:

Խնդիրներից մեկը պոպուլիստական հռետորաբանության չափելիությանն է վերաբերում: Ինչպե՞ս նույնականացնել պոպուլիստական դիսկուրսը: Քանի՞ դատողությունն է բավարար՝ պոպուլիստ կոչվելու համար: Մեկ-երկու անգամ, ենթադրենք, հանրահավաքների ժամանակ հնչեցրած զգայական կոչերը բավարար են արդյոք, որպեսզի տվյալ գործչին համարենք պոպուլիստ: Ի՞նչ եթե այդ ելույթը ոչ թե հանրահավաքում է հնչել, այլ՝ ուրիշ միջավայրում, օրինակ՝ կուսակցության համագումարի, կառավարության նիստի կամ պառլամենտում ընդդիմախոսի հետ բանավեժի

ժամանակ: Արդյո՞ք անմիջական լսարանն ու միջավայրը պոպուլիստական տեքստը ձևավորող համատեքստն են թե ոչ: Պոպուլիզմի գնահատմանն առնչվող այս հարցերը բավարար չափով քննարկված չեն գրքում:

Սրան ուղղակիորեն առնչվող մյուս դժվարությունն ,ո՞վ է ասումն հարցի պատասխանը գտնելն է: Ենթադրենք, քաղաքական ուժն աշխատանքի բաժանում է կատարել և, համաձայն դրա, պոպուլիստական կարգախոսներ են հնչեցնում կուսակցության միայն և միայն որոշակի գործիչներ, մինչդեռ կուսակցական վերնախավն ու առաջնորդը հանրայնորեն զերծ են մնում նման հռետորաբանությունից: Այդ դեպքում որքանո՞վ է արդարացի ամբողջ քաղաքական ուժին պոպուլիստ կոչելը: Չէ որ միշտ կարելի է այն արդարացումը բերել, թե պոպուլիստական տեքստերը տվյալ անհատների անձնական կարծիքն ու նախաձեռնությունն են: Առաջնորդները մաքուր են մնում, մինչ նրանց փոխարեն հանրային կարծիքի ձևավորման սևագործ աշխատանքը կատարում են կուսակցական ընկերները, հավատարիմ լրագրողներն ու հանրային այլ դեմքերը: Դժվար է որսալ ուրիշների միջոցով խոսող պոպուլիստ գործիչներին:

Վերջապես, պոպուլիստների կառավարմանը բնորոշ՝ հեղինակի կողմից առանձնացված գծերը՝ զանգվածային կլիենտալիզմ, պետության զավթում կամ յուրացում, հարձակում սահմանադրության, անկախ դատարանների և իշխանության այլ հակակշիռների վրա, բնորոշ են քաղաքական տարբեր դավանանք ունեցող ուժերի ևս: Իրապես ժողովրդավարական ուժերն էլ, իշխանության գալուց հետո, զերծ չեն նշված գայթակղություններից: Ամուր հիմնավորումներ և պատմական փաստեր չեն բերվում առ այն, որ թվարկվածները հենց և միայն իշխանություն ստացած պոպուլիստների վարքին են բնորոշ: Սրանք այն արգելված պտուղներն են, որոնց ձգտում է ցանկացած իշխանություն, եթե չունի բավարար հակակշիռներ: Սա արդեն իշխանության չար բնույթն է, ոչ պոպուլիզմի:

Պոպուլիզմը հարմարված ամբողջատիրությունն է

Ժամանակակից պոպուլիզմն ամբողջատիրության ձևափոխված և հմուտ հարմարված տարբերակն է: Իրապես ամբողջատիրական ռեժիմները ժամանակակից աշխարհում գոյատևման սուղ հնարավորություններ ունեն: Թե՛ միջազգային հարաբերությունների համակարգը (զսպումների, խրախուսանքների ու պատիժների իր զինանոցով), թե՛ հասարակությունների ընդհանուր զարգացումն ու մշակութային փոխանակումը, դժվարացնում է դրանց գործառումը: Սակայն ամբողջապաշտությունը՝ որպես կիրք, ոչ մի տեղ չի անհետանում: Այն իր արտահայտումն է գտնում միասնական ու անաղարտ ժողովրդի անունից խոսող պոպուլիստների կերպարով:

Յյուսիսային Կորեայի առաջնորդ Կիմ Չեն Ընը պոպուլիստ լինելու կարիք չունի: Եթե չկան ազատ և մրցակցային ընտրություններ, հետևաբար, ժողովրդին սիրաշահելու և նրան զգայական կոչեր հղելու անհրաժեշտություն էլ չկա: Չենց ժողովրդավարությունն է ,ստիպումն, որ ամբողջապաշտական հակումներ ունեցողները դժկամությամբ ընդունեն խաղի կանոնները: Նրանք կիրառում են ժողովրդավարության բառապաշարն ու գործիքները, իրականում, սակայն, այլակարծությունը վերացնելու համար:

Պոպուլիստներին նյարդայնացնում է ,ուրիշը, որ դուրս է ,իսկականե ժողովրդի հավաքական կերպարից: Երբ այդ ուրիշները՝ տարբերվողները շատ են և ձայն ունեն, վտանգվում է պոպուլիզմի

հիմքը. հավատն առ այն, թե իբր կա ժողովրդի մի խորհրդավոր էություն՝ Միաձայն, Միադեմ և Միահամուռ:

Հարկավոր է պոպուլիզմից խլել նրա հենարանը՝ ժողովրդին: Ժողովուրդը միշտ էլ ամբողջական է հանդես գալու, դա անխուսափելի է: Հենց այդ բառն օգտագործեցինք, մեր աչքի առաջ է հառնելու տղամարդու կամ կնոջ մի կերպար, որ այնքան նման է մեր հարևանին կամ ազգականին: Նրա մտքերն ու դիմագծերը շատ համոզիչ են թվալու, շատ պայծառ ու իմաստուն: Եվ զարմանքով անդրադառնալու ենք, որ ով չի տեղավորվում այդ կերպարի մեջ, այնքան էլ ժողովուրդ չէ, ճիշտ ժողովուրդ չէ: Մեր կերտած պայծառ ժողովուրդը խժռելու է իր պայծառ զավակներին՝ անհատապես:

Հասարակություն vs. ժողովուրդ

Ուրեմն, ժողովրդից հրաժարվել է պետք: Բառից, իհարկե: Ինչո՞վ է վատ հասարակությունը:

Եթե ժողովուրդն արտակարգ մի կուռք է՝ իմաստուն էությամբ ու միահամուռ կամքով, ապա հասարակությունը բավական համեստ է: Հասարակությունը հասարակ է:

Հասարակությունը սխալական անհատներն են: Ո՛չ ամբողջություն, ո՛չ հավաքական կամք կամ բնավորություն: Հիմա ունեն այս հատկություններն ու քաղաքական նախասիրությունները, հաջորդ պահին՝ այլ:

Ժողովուրդն ինքն է, հասարակությունը՝ նրանք:

Ժողովուրդն անսխալ է և միակ ճշտիե կրող, հասարակությունը՝ բազմաթիվ սխալների ու բազմաթիվ ճշմարտությունների մեկտեղում:

Ժողովրդի անունից խոսում են՝ ով ուզի և ինչպես ուզի: Կարևորը՝ ժողովրդին հղում անելն է:

Հասարակության անդամը խոսում է իր անունից և ոչ մեկի միջնորդը չէ:

Պոպուլիզմի կազմաքանդումը լեզվի միջոցով է հնարավոր: Երբ անհատներին հասարակություն կկոչենք և հանգիստ կթողնենք ժողովրդին, վերջինիս փրկության միջնորդներն ասպարեզից դուրս կգան:



ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ. ԱՐԱԳՆ ՈՒ ԴԱՆԴԱՂԸ

Դանիել Քանեման

*Գիրք & Միտք #6 | Մտածողություն. արագն ու դանդաղը
Լևոն Բարաջանյան և Ավետիք Մեջլումյան*

Դանիել Քանեմանի՝ մտածողության երկու ռեժիմների տեսությունը

Լևոն Բարաջանյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Յուրաքանչյուրս մեր գործնական, անձնական և հասարակական կյանքում ձգտում ենք մեր որոշումներում և մտածողության մեջ լինել հնարավորինս ռացիոնալ. որոշումներ կայացնելիս հիմնվել մտածողության որոշակի կանոնավորության և փաստերի վրա: Սակայն, մեր կյանքի փորձով հետհայաց նկատում ենք, որ ռացիոնալ լինելն այդքան էլ դյուրին չէ: Նախ, մեր գիտելիքներն իրականության մասին օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով սահմանափակ են, հաճախ մեզ անձանոթ են տրամաբանական մտածողության կանոնավորության օրենքները: Սակայն, անգամ այն դեպքերում, երբ մեր գիտելիքները հնարավորինս կազմավորված են փաստերի հիման վրա և մենք ծանոթ ենք տրամաբանական մտածողության կանոնավորությանը, ճանաչողական-հոգեբանական պատճառներով դժվարանում ենք լինել ռացիոնալ և կատարել ռացիոնալ եզրահանգումներ: Ինչո՞ւ: Ահա այս հարցի պատասխանը կարելի է գտնել տնտեսագիտության ոլորտի նոբելյան մրցանակակիր Դանիել Քանեմանի հանրահռչակ «Մտածողություն. արագն ու դանդաղը» գրքում:

Այս գիրքն այն մասին է, թե ինչպես է աշխատում մարդկային մտածողությունը, ճանաչողական-հոգեբանական ինչ գործոններ են մարդկանց խանգարում լինել ռացիոնալ իրենց դատողություններում և որոշումների կայացման ընթացքում, որոնք են ճանաչողական խաբկանքների և աղճատումների հանգեցնող հոգեբանական պատճառները, և, հնարավորության դեպքում, ինչպես կարելի է լինել ավելի ռացիոնալ դատողություններում ու որոշումներում:

Ըստ Քանեմանի, մարդկային մտածողության լաբիրինթոսում մտածողության երկու ռեժիմների բարդ փոխհարաբերություններն ուղղորդում են մեր առօրյա կյանքը, ձևավորում են մեր դատողությունները, կայացնում են որոշումներ և եզրահանգումներ: Այդ երկու ռեժիմները Քանեմանը

պայմանականորեն կոչում է Համակարգ 1 և Համակարգ 2:

Ընթերցողի մոտ մոլորությունները կանխելու համար՝ հեղինակը բազմիցս նշում է, որ այս երկուսը հորինված կերպարներ են. դրանք գոյություն չունեն մեր գլխուղեղում կամ մեկ այլ տեղ, այլ պարզապես մեր մտածողության ռեժիմները նկարագրող հասկացություններ են, որոնցից յուրաքանչյուրին բնորոշ են որոշակի առանձնահատկություններ: Ավելի հասկանալի լինելու համար՝ համանմանություն անցկացնենք վազքի հետ: Պայմանականորեն կարելի է նկարագրել վարքի երկու ռեժիմ՝ արագ և դանդաղ: Արագ վազքի ռեժիմի դեպքում մարդու օրգանիզմում տեղի են ունենում որոշակի փոփոխություններ. արագանում է սրտի աշխատանքը, մեծանում է արյան ծնշումը, ինտենսիվանում է քրտնարտադրությունը, արագանում է շնչառությունը, և այլն: Նման կերպ կարելի է նկարագրել նաև վազքի դանդաղ ռեժիմը: Նույն կերպ էլ Համակարգ 1 և Համակարգ 2 կամ համապատասխանաբար «Արագ» և «Դանդաղ» մտածողության ռեժիմներն ունեն իրենց բնութագրական հատկությունները:

Քանենմանը մտածողության ռեժիմների սահմանման այս եզրույթաբանությունը փոխառել է հոգեբաններ Քիթ Ստանովիչից և Ռիչարդ Ուեսթից, որոնք այդ երկու համակարգերը սահմանում են հետևյալ կերպ.

- Համակարգ 1-ը գործում է ինքնաբերաբար և արագ, քիչ ջանք կամ գրեթե առանց ջանք գործադրելու և առանց կամային վերահսկման:
- Համակարգ 2-ը ուշադրությունը տեղափոխում է ջանք պահանջող մտավոր գործունեության վրա՝ ներառյալ բարդ հաշվարկները: Համակարգ 2-ի գործողությունները հաճախ զուգորդվում են գործունեության սուբյեկտիվ փորձառությամբ, ընտրությամբ և կենտրոնացմամբ:

Ըստ Քանենմանի, Համակարգ 1-ն ունակ է կատարել հետևյալ ինքնավար գործողությունները

- Որոշել, թե երկու առարկաներից որն է ավելի մոտ տեղակայված,
 - Տեղորոշել պատահական ձայնի աղբյուրը,
 - Զգալ դիմացինի ձայնում առկա թշնամանքը,
 - Պատասխանել $2 + 2 = ?$ հարցին,
 - Հասկանալ պարզ նախադասությունները,
- և այլն:

Եթե նկատեցիք, նշված բոլոր մտավոր գործողություններն իրականացնելու համար ձեզնից առանձնապես ջանք չի պահանջվում, այլ կերպ՝ դրանք ծագում են ինքնաբերաբար, Համակարգ 1-ի գործունեության արդյունքում: Մտածողության այդ ռեժիմով օժտված են նաև կենդանիները: Մինչդեռ այլ է Համակարգ 2-ի դեպքում: Համակարգ 2-ի գործողությունները պահանջում են ջանք և կենտրոնացում, ինչպես, օրինակ, հետևյալ դեպքերում.

- Պատրաստվել վազքի մեկնարկն ազդարարող ատրճանակի ձայնը լսելուն,
- Փորփրել հիշողությունը՝ անակնկալ ձայնը ճանաչելու համար,
- Փորձել բնական տեմպից ավելի արագ քայլել,
- Թելադրել Ձեր հեռախոսահամարը մեկ ուրիշին,

- Չամենատել երկու լվացքի մեքենաներն ըստ արժողության,
- Ստուգել բարդ տրամաբանական փաստարկի վավերականությունը,
և այլն:

Այս բոլոր դեպքերում, որպեսզի գործողությունը լինի արդյունավետ, մարդը պետք է որոշակի մտավոր ջանք գործադրի և կենտրոնացնի ուշադրությունը: Եթե Չամակարգ 1-ի գործառույթները տեղի են ունենում ինքնավար կերպով, ապա Չամակարգ 2-ի գործառույթներն իրականանում են ջանադիր կերպով: Այսպես, եթե մարդաշատ սենյակում մենք ձայն լսենք, ապա Չամակարգ 1-ի ակտիվացման շնորհիվ կարող ենք տեղորոշել ձայնի աղբյուրը, սակայն որպեսզի առանց նայելու փորձենք պարզել, թե կոնկրետ ով է տվյալ ձայնի հեղինակը, մեզ անհրաժեշտ կլինի ակտիվացնել մեր Չամակարգ 2-ը:

« $2+2=?$ » հավասարումը հեշտությամբ կարող ենք լուծել Չամակարգ 1-ի ակտիվացման շնորհիվ, քանի որ այդ հավասարման լուծումը մեզանից ջանք և կենտրոնացում չի պահանջի, սակայն « $17*24=?$ » հավասարման լուծման համար մենք արդեն կարիք կունենանք որոշակի մտավոր ջանք գործադրելու և կենտրոնացման, և արդեն պետք է ակտիվացնենք մեր Չամակարգ 2-ը:

Ինչպես հեղինակն ինքն է նկատում՝ այլ կերպ այս երկու համակարգերը կարելի էր կոչել «Ինքնավար համակարգ» և «Ջանադիր համակարգ»: Սակայն զուտ օպտիմալության համար Քանենմանը նախընտրում է օգտագործել համապատասխանաբար՝ Չամակարգ 1 և Չամակարգ 2 անվանումները:

Սովորաբար առօրյա կյանքում այս մտավոր երկու ռեժիմները գործում են ներդաշնակ և փոխլրացնող կերպով: Չամակարգ 1-ը տպավորությունների, կանխազգացումների և զգացողությունների տեսքով առաջարկություններ է գեներացնում Չամակարգ 2-ի համար, իսկ վերջինս դրանք հաստատում է՝ մեր տպավորություններն ու կանխազգացումները վերածելով համոզմունքների, իսկ ազդակները՝ կամային գործողությունների: Երկու մտավոր ռեժիմների ներդաշնակ աշխատանքն ապահովում է մարդու նորմալ կենսագործունեությունը: Սակայն, երբեմն Չամակարգ 1-ի կանխազգացումները, տպավորությունները, զգացողությունները կարող են իրականության ճշմարիտ արտացոլանքը չլինել: Այդ դեպքերում անհրաժեշտ է ակտիվացնել Չամակարգ 2-ը՝ ստուգելու համար Չամակարգ 1-ի առաջարկությունների՝ իրականությանը համապատասխանությունը կամ այդ առաջարկությունների հիման վրա ձևավորված մեր որոշումների ռացիոնալությունը: Խնդիրներն առաջանում են այն ժամանակ, երբ մենք կանգնած ենք կարևոր որոշումներ կայացնելու կամ ինչ-որ կարևոր հարցի վերաբերյալ համոզմունքներ ձևավորելու խնդրի առջև:

Չամակարգ 2-ը, ըստ Քանենմանի բնութագրության, չափազանց ծույլ է, քանի որ դրա ակտիվացման համար ջանք և ուշադրություն է պահանջվում, ինչը մեր ուղեղի համար էներգատար աշխատանք է: Չամակարգ 2 մտածողության ռեժիմը պարզապես ծուլանում է, և մենք թույլ ենք տալիս Չամակարգ 1-ի տպավորություններին, կանխազգացումներին և զգացողություններին վերածվել չիմնավորված համոզմունքների, եզրահանգումների և որոշումների: Չամակարգ 1-ի ինքնաբուխ և անվերահսկելի գործունեության արդյունքում ի հայտ են գալիս ճանաչողական կամ կոգնիտիվ խաբկանքները, որոնք աղճատում են իրականության մասին մեր պատկերացումները, հանգեցնում են ոչ ռացիոնալ

եզրահանգումների և որոշումների կայացման:

Քանենմանի «Մտածողություն. արագն ու դանդաղը» գրքում հանգամանալից կերպով ներկայացված են Համակարգ 1-ի կողմից Համակարգ 2-ին «մոլորեցնող» ճանաչողական այդ աղճատումները, ինչպես օրինակ՝ խարսխման էֆեկտը, լուսապսակի էֆեկտը, ըմբռնման պատրանքը, հասանելիության էվրիստիկան, հիմնավորության պատրանքը, հապճեպ եզրահանգումների մեխանիզմը, և այլն: Քանենմանը պնդում է, որ մենք մեզ նույնականացնում ենք Համակարգ 2-ի հետ, այսինքն՝ երբ մենք մեր մասին մտածում ենք, մեզ թվում է, թե մեր մտածողությունն ու որոշումները բխում են մեր դանդաղ, ջանադիր և կշռադատված մտածողության ռեժիմից: Սակայն գիտափորձերի, հոգեբանական, տնտեսագիտական և վարքաբանական տարբեր տեսությունների համեմատության, իր անձնական և գործնական կյանքից ներկայացված պատմությունների օրինակների միջոցով Քանենմանը ցույց է տալիս, թե որքան մեծ և որոշիչ է Համակարգ 1-ի ինքնավար և ակտիվ գործունեության արդյունքում ի հայտ եկած ճանաչողական աղճատումների ազդեցությունը մեր մտածողության և որոշումների կայացման վրա:

Քանենմանը, սակայն, չի բավարարվում միայն մարդկային մտածողությունը և որոշումների կայացման գործընթացը նկարագրելով, այլև ներկայացնում է առաջարկներ ինչպես հանրային քաղաքականության ոլորտում, այնպես էլ անձնական և գործնական կյանքում որոշումների կայացման «ռացիոնալացման» վերաբերյալ (թեև պետք է նկատել, որ նա այդքան էլ լավատես չէ այդ հարցում): Այս համատեքստում Քանենմանը հակադրում է որոշումներ կայացնող մարդու երկու մոդել՝ Էկոններ և Հումաններ: Էկոնը մարդու տեսական մոդել է, որի վրա գերազանցապես հիմնվում են տնտեսագետները՝ տնտեսագիտական տեսությունների մշակման և կանխատեսումների իրականացման գործում: «Ավանդական» տնտեսագիտության սուբյեկտ Էկոնը ռացիոնալ է իր որոշումներում, այսինքն՝ հիմնվելով հասանելի տեղեկատվության վրա՝ որոշումներ է կայացնում իր օգուտը հնարավորինս մեծացնելու սկզբունքով: Էկոնները տեսականորեն չեն ենթարկվում ճանաչողական կողմնակալությունների, հույզերի և սոցիալական հանգամանքների ազդեցությանը: Այլ կերպ ասած՝ Էկոնների որոշումները կանխատեսելի են և ենթարկվում են որոշակի տրամաբանության:

Քանենմանը, սակայն, կարծում է, որ մարդու տեսական այս մոդելում բացակայում է Համակարգ 1 մտածողության ռեժիմը: Նա «ավանդական» տնտեսագիտության՝ մարդու այս մոդելին հակադրում է հոգեբանության և վարքաբանության ուսումնասիրության առարկա հանդիսացող «Հուման» մոդելը, որը բացի Համակարգ 2-ից ունի նաև Համակարգ 1: Ըստ Քանենմանի՝ աշխարհի մասին Հումանների պատկերացումը սահմանափակված է տվյալ պահին հասանելի տեղեկատվությամբ (գրքում այս ֆենոմենը կոչվում է WYSIATI), ուստի նրանց վարքը չի կարող լինել այնքան կանխատեսելի ու տրամաբանական, որքան Էկոնների վարքն է: Քանի որ Հումաններն ունեն Համակարգ 1, նրանք ենթակա են ճանաչողական աղճատումների ազդեցությանը, ուստի իրենց մտածողության և որոշումների կայացման մեջ ռացիոնալ չեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրական կյանքում մարդիկ ոչ թե Էկոններ, այլ Հումաններ են՝ Քանենմանն առաջարկում է հանրային քաղաքականություն մշակողներին առաջնորդվել ազատական պատերնալիստական մոտեցումներով, համաձայն որի՝ կառավարությունները պետք է նպաստեն (սակայն չսահմանափակեն կամ չպարտադրեն) անհատի՝ ռացիոնալ որոշումների

կայացմանը: Ջուտ ազատական մոտեցումը ելնում է այն կանխադրույթից, որ մարդիկ Էկոններ՝ ռացիոնալ էակներ են, և կառավարությունները չպետք է միջամտեն հասարակության շուկայական կյանքին, քանի որ ազատ և ռացիոնալ Էկոնները լավագույնս են գիտակցում, թե ինչն է իրենց համար նախընտրելի և լավ, ուստի կարող են իրենց համար լավագույն որոշումները կայացնել: Մինչդեռ երբ մարդուն դիտարկում ենք որպես Չուման, ապա այս դեպքում մարդը, ենթակա լինելով Չումակարգ 1-ի աշխատանքի հետևանքով ծագող ճանաչողական կողմնակալությունների ազդեցությանը, շատ հաճախ չի կարող ինքնուրույն ընտրել և որոշել, թե որ որոշումներն են իր համար լավագույնը: Ուստի կառավարությունները պետք է օգնեն մարդկանց՝ կայացնելու «ձիշտ» որոշումներ, պետք է պաշտպանեն նրանց՝ իրենց իսկ ճանաչողական կողմնակալություններից:

Ասվածի մասնավոր օրինակ կարող են լինել այն դեպքերը, երբ բանկերը տրամադրվող վարկային պայմանագրերի կարևոր կետերը գրում են փոքր տառաչափով՝ քաջ գիտակցելով, որ հաճախ մարդիկ պարզապես դրանք չեն կարդա: Եթե մարդիկ իրապես Էկոն լինեին, ապա նրանք ջանադրաբար կկարդային վարկային պայմանագրերի բոլոր կարևոր կետերը, սակայն քանի որ մարդիկ Չումաններ են, հաճախ ջանք չեն գործադրում պայմանագրի բոլոր կարևոր կետերը կարդալու համար և, ճանաչողական կողմնակալություններին ենթարկվելով, պարզապես ստորագրում են այդ պայմանագրերը: Ըստ ազատական պատերնալիստական մոտեցման, կառավարությունները պետք է գիտակցեն, որ մարդիկ Չումաններ են, և այնպիսի օրենքներ ու տնտեսական խաղի կանոններ սահմանեն, որ կազմակերպություններին հարկադրեն պայմանագրերը կազմել այնպես, որ դրանք մոլորեցնող չլինեն ճանաչողական կողմնակալությունների ենթակա Չումանների համար: Այս մոտեցումը կիրառելի է նաև տնտեսական և քաղաքական կյանքի այլ դեպքերի նկատմամբ ևս, ինչպես օրինակ՝ կուտակային կենսաթոշակային համակարգերին միանալու, օրգանների դոնոր դառնալու, կեղծ տեղեկատվության տարածումը կանխելու և այլ դեպքերի համար:

Կարելի է վստահաբար պնդել, որ Քանեմանի գիրքն անհրաժեշտ ընթերցանության աշխատանք է բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրված են մարդկային մտածողության, ռացիոնալ որոշումների կայացման, ճանաչողական աղճատումների, հանրային քաղաքականության արդյունավետ մշակման և պարզապես ինքնակատարելագործման խնդիրներով:

Ինչպես է ծուլությունը պայմանավորում մեր մտածողությունը

Ավետիք Մեջլումյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Դանիել Քանեմանը (1934 – 2024) հրեական ծագմամբ ամերիկացի տնտեսագետ և հոգեբան է, ով 2002-ին արժանացել է Նոբելյան մրցանակի՝ վարքագծային տնտեսագիտության ոլորտում իր աշխատանքների, հատկապես՝ անորոշության պայմաններում որոշումների կայացման վերաբերյալ հետազոտությունների համար: Դասավանդել է Երուսաղեմի հրեական համալսարանում, այնուհետև՝

Պրինսիպների, Յարվարդի, Բերքլիի և այլ համալսարաններում: Համագործակցել է բազմաթիվ հեղինակների (այդ թվում՝ իր քննադատների) հետ՝ համատեղ հետազոտությունների շրջանակներում:

«Մտածողություն. արագն ու դանդաղը» գիրքը հրատարակվել է 2011-ին և անմիջապես դարձել բեսթսելլեր: Գրքի հիմքը դարձած, տարբեր տարիներին իրականացված հետազոտությունների մեջ մեծ է Քանեմանի գործընկեր և բարեկամ Ամոս Տվերսկիի ներդրումը՝ որպես համահեղինակ:

Ծուլությունը՝ մտածողության ռեժիմների տարբերակիչ գործոն

Գրքի առանցքը մտածողության երկու համակարգերի գործառնման և փոխառնչության նկարագրությունն է՝ հիմնված բազմաթիվ գիտափորձերի վրա.

- Համակարգ 1-ը գործում է ինքնաբերաբար և արագ, քիչ ջանք կամ գրեթե առանց ջանք գործադրելու և առանց կամային վերահսկողության:
- Համակարգ 2-ն ուշադրությունը տեղափոխում է ջանք պահանջող մտավոր գործունեության վրա՝ ներառյալ բարդ հաշվարկները:

Թեև մենք մեզ նույնացնում ենք Համակարգ 2-ի հետ (գիտակից, բանական ես-ի, որն ունի համոզմունքներ, ընտրության հնարավորություն և որոշում է՝ ինչ անել), սակայն մեր բազմաթիվ գործողությունների շարժիչ ուժը Համակարգ 1-ն է: Այն առանց ավելորդ ջանքերի ստեղծում է տպավորություններ ու զգացողություններ, որոնց վրա հիմնվում է Համակարգ 2-ը՝ համոզմունքներ ձևավորելիս ու նպատակային գործողությունների կատարելիս:

Ինչո՞ւ է այդպես: Որովհետև ծուլությունը մարդկանց բնության կարևոր հատկանիշներից է: Մտավոր ջանքը դժվար է և էներգատար, հաճախ՝ տհաճ: Ուստի Համակարգ 2-ը հետևում է նվազագույն ջանքի կանոնին. երբ կան նույն նպատակին հասնելու մի քանի ուղիներ, մարդիկ ընտրում են ամենաքիչ ջանք պահանջողը: Համակարգ 1-ն ինքնաբերաբար աշխատում է, իսկ Համակարգ 2-ը ջանք խնայող կարգավիճակում է և իր հնարավորությունների միայն փոքր մասն է գործածում:

Լեզուն կարևոր է

Գրքում քննարկվում են կոգնիտիվ աղճատումների տեսակները: Դրանցից մեկն, օրինակ, շրջանակման էֆեկտն է. միևնույն միտքն այնպիսի տարբերվող ձևակերպումներով արտահայտելը, որն ազդում է որոշակի տպավորությունների և համոզմունքների ձևավորման վրա: Օրինակ, «Վիրահատությունից հետո առաջին ամսում ողջ մնալու ցուցանիշը 90% է» և «Վիրահատությունից հետո առաջին ամսում մահացության ցուցանիշը 10% է» դատողությունները միևնույն միտքն են արտահայտում: Սակայն առաջինի դեպքում շեշտադրված է դրական, իսկ երկրորդի դեպքում՝ բացասական ելքը:

Որքան էլ զարմանալի է, ձևակերպման շեշտադրումներն ազդում են անգամ մասնագետների՝ բժիշկների որոշումների վրա: Փորձերը ցույց են տվել, որ առաջին ձևակերպումը լսելու կամ կիրառելու դեպքում բժիշկների 84%-ն է ընտրում վիրահատությունը՝ որպես բուժման միջոց, իսկ երկրորդ ձևակերպման դեպքում՝ միայն 50%-ը:

Դժվար հարցերի փոխարինում՝ հեշտ հարցերով

Ըստ Քանենմանի, երբ հարցը բարդ է, և հմտություն պահանջող լուծում հասանելի չէ, ինտուիցիան, միևնույն է, փորձում է լուծում առաջարկել: Պատասխանն անմիջապես ծագում է մտքում, սակայն այն ի սկզբանե տրված հարցի պատասխանը չէ: Գրքում բերված օրինակներից մեկում հարցը, որ ծառացել էր ներդրումների մասնագետի առջև («Արժի՞ արդյոք ձեռք բերել «Ֆորդ»-ի բաժնետոմսեր») բարդ էր, բայց ավելի հեշտ ու շաղկապված հարցի («Յավանո՞ւմ եմ արդյոք «Ֆորդ»-ի ավտոմեքենաները») պատասխանը արագորեն ծագել էր մտքում ու որոշել իրավիճակի ելքը:

«Ֆորդ»-ի բաժնետոմսեր գնելու հարցը վճռելիս ոչ թե Յամակարգ 2-ն է վերլուծել բաժնետոմսերի եկամտաբերությունը, հուսալիությունն ու այլ ֆինանսական ցուցանիշները, այլ՝ ակտիվացել է Յամակարգ 1-ը, որը տվել է նենգափոխված, սակայն հեշտ հարցի («Յավանո՞ւմ եմ արդյոք «Ֆորդ»-ի ավտոմեքենաները») պատասխանը: Այսպիսով, ռիսկեր պարունակող գնումը կարող է իրականացվել ոչ միայն բարդ հաշվարկների ու վերլուծության (ինչպես ենթադրվում է, որ պետք է լինի), այլ՝ առօրեական համակրանք-հակակրանքի բախման արդյունքում:

Քանենմանը հարցերի նենգափոխման այս երևույթն անվանում է ինտուիտիվ էվրիստիկաներ (ծագում է էվրիկա բառից): Բարդ հարցի բախվելիս մենք հաճախ պատասխանում ենք մեկ ուրիշ՝ ավելի դյուրին հարցի՝ որպես կանոն չնկատելով հարցերի փոխարինումը: Կրկին դեր է խաղում Յամակարգ 2-ի ծուլությունն ու նվազագույն ջանք գործադրելու ձգտումը:

Ռացիոնալությունը՝ որպես համոզմունքների ներդաշնակություն

Քանենմանը նշում է, որ առօրյա լեզվում մենք մարդկանց ողջամիտ ենք անվանում, եթե հնարավոր է նրանց հետ քննարկել որևէ բան և եթե նրանց համոզմունքներն ընդհանուր առմամբ համապատասխանում են իրականությանը: Ռացիոնալ բառը զուգորդվում է ավելի շատ կշռադատության և խելամտության, հաշվարկի և պակաս տաքարյունության հետ: Սակայն տնտեսագետների և որոշման ընդունման ոլորտի մասնագետների համար ռացիոնալ ածականը միանգամայն այլ նշանակություն ունի:

Ըստ Քանենմանի, ռացիոնալության ստուգման միակ ձևը ոչ թե անձի համոզմունքների և նախընտրությունների ողջամտությունն է, այլ դրանց ներքին համապատասխանությունը: Ռացիոնալ անձը կարող է հավատալ ուրվականների գոյությանը, եթե նրա այլ համոզմունքները չեն հակասում այդ հավատին:

Ռացիոնալ անձը կարող է ավելի շատ նախընտրել, որ իրեն ատեն, քան սիրեն, քանի դեռ նրա նախընտրությունների միջև բախում չկա: Ռացիոնալությունն, այսպիսով, տրամաբանական կապակցվածություն է (անկախ ողջամտության աստիճանից):

Այստեղ կարևոր է հստակեցնել, որ Յամակարգ 2-ը ռացիոնալության մարմնացում չէ: Միշտ չէ, որ մենք ճիշտ ու տրամաբանված ենք մտածում: Յամակարգ 2-ն ընդունում ու ռացիոնալացնում է (հիմնավորումներ է փնտրում, «արդարացնում») Յամակարգ 1-ի զգացողությունները: Յամակարգ 2-ի վերահսկողության միակ միջոցը մտածողական գործընթացը դանդաղեցնելն է և պատասխանի ինքնուրույն կառուցումը (ինչն էլ դժվար է վերը քննարկված ծուլության պատճառով):

Գրքում առաջ քաշված հիմնական գաղափարներից մեկն այն է, որ մարդիկ ոչ միշտ են ռացիոնալ, կամ, եթե ավելի ճշգրիտ լինենք՝ հիմնականում ռացիոնալ չեն: Նրանք հաճախ օգնության կարիք ունեն ավելի ճշգրիտ դատողություններ անելու և որակյալ ընտրություններ կատարելու հարցում:

Միլթոն Ֆրիդմանը, օրինակ, ով Չիկագոյի տնտեսագիտության դպրոցի երևելի ներկայացուցիչներից էր, անհատին դիտարկում էր որպես ռացիոնալ սուբյեկտ, որն ազատ է և ում պետք չէ պաշտպանել իր իսկ ընտրությունից: Մարդիկ պետք է կրեն սեփական անձի մասին հոգ տանելու պատասխանատվությունը: Պետությունը պետք է չմիջամտի, քանի դեռ անձի ընտրությունները վնասակար չեն ուրիշների համար:

Սակայն վարքաբանական տնտեսագետներն ավելի բարդ են համարում կյանքը: Նրանց առաջ քաշած համեմատաբար նոր մոտեցումներից է առաջին հայացքից հակասական թվացող մի հիբրիդ՝ «ազատական պատերնալիզմը»: Այս տեսության շրջանակներում պետությունը և կազմակերպությունները կարող են «հրել» (խթանել, աջակցել, դրդել, նպաստել) մարդկանց՝ կայացնելու այնպիսի որոշումներ, որոնք նրանց շահերից են բխում:

Օրինակ, կենսաթոշակային պլանին միանալու լռելյայն տարբերակն այդպիսի «հրում» է: Կենսաթոշակի համար վճարումներ կատարելուց հրաժարվելը հնարավոր է անձի ջանադիր գործողության՝ համապատասխան հայտարարությունը ստորագրելու արդյունքում: Քանի որ մարդիկ հիմնականում հակված են ջանք խնայելուն, նրանց բացարձակ մեծամասնությունը պարզապես կծուլանա ուսումնասիրել կենսաթոշակային համակարգից հրաժարվելու հարցը և հատուկ ջանք էլ չի գործադրի՝ դրանից դուրս գալու համար: Ազատական պատերնալիզմի նկատմամբ ներկայումս հետաքրքրություն են ցուցաբերում Մեծ Բրիտանիայի և Չարավային Կորեայի կառավարությունները:

Չեղարկություններ՝ կրթության և կոգնիտիվ կարողությունները զարգացնելու համար

Քանեմանի՝ թե վերը բերված, թե գրքում առկա այլ դիտարկումներն արժեքավոր են հատկապես կրթության և ուսումնառության կազմակերպման գործում:

Սովորեցնողի, մենթորի խնդիրներից մեկը պետք է լինի հետևելը, որպեսզի սովորողները պատասխանեն հենց դրված հարցերին և ոչ թե փոխարինեն դրանք հեշտ կամ դուրեկան հարցերով: Իրապես դրված հարցերին պատասխանելը սովորելու մշակույթի առանցքային տարրերից է: Երբ սովորողը ստիպված է պատասխանելու առաջադրված հարցերին, զրկվում է խուսանավելու հնարավորությունից և մտածողությունը հասցեական ու ջանադիր եղանակով է գործադրում: Միտքը զարգանում է իրական խնդիրները լուծելով, ոչ թե դրանց փոխարինած դյուրին հարցերը քննարկելով:

Իհարկե, Չամակարգ 1-ը հեշտությամբ կրթելի չէ: Բայց հնարավոր է զարգացնել սխալվելու բարձր հավանականություն պարունակող իրավիճակների ճանաչման կարողությունը: Դա ավելի հեշտ է անել անել ուրիշների սխալները ճանաչելու միջոցով: Միշտ ցավոտ ու դժվար է ընդունել սեփական սխալները, մինչդեռ այլոց մտածողական սայթաքումները մարդիկ հետաքրքրությամբ են մատնացույց անում: Ինչպես Քանեմանն է նշում, ավելի հեշտ է ճանաչել ականադաշտը, երբ ինքդ չես քայլում այնտեղ և դիտում ես ուրիշների թափառումները: Իսկապես, մեր մտածողությունը նման է ականապատ դաշտի, որտեղ ամեն քայլափոխի առկա են կոգնիտիվ աղճատումների ծուղակներ:

Մտածողական սխալների հավանականությունը կարելի է նվազեցնել նաև՝ սովորելով

կազմակերպություններից, որոնց որոշումներն ավելի դանդաղ են կայացվում և ենթարկվում են որոշակի ընթացակարգերի: Կազմակերպությունները հաճախ հատուկ լեզու և բառապաշար են գործածում՝ որոշումների կայացման գործընթացներում: Խնդիրներին հնարավորինս ձգգրիտ ձևակերպումներ են տրվում, և սահմանումների որակը վերահսկվում է: Անհատները ևս կարող են բարդացնել սխալվելու իրենց հնարավորությունը, եթե կիրառեն ավելի ձգգրիտ ձևակերպումներ և չշտապեն որոշումներ կայացնելիս:

Կրթությունը պետք է խթանի մտածելու անսովորի մասին՝ զարմացնելով և նոր բացատրություն գտնելու անհրաժեշտության առջև կանգնեցնելով: Երբ երևոյթների ավանդական մեկնաբանությունները մերժվում-հերքվում են, սովորողներին այլ ելք չի մնում, քան փնտրելու կամ ստեղծելու նոր բացատրություններ: Սովորեցնելու համար անհրաժեշտ է զարմացել: Քանեմանը նշում է, որ անսովոր դեպքերն ազդեցիկ հետևանք են ունենում՝ ստիպելով նոր պատճառահետևանքային կապեր գտնել: Ընդ որում, սովորողներն ավելի հեշտությամբ են ինչ-որ նոր բան սովորում, երբ հենց սեփական վարքում են անակնկալ ու շփոթեցնող բացահայտումներ անում, ոչ թե՛ ուրիշ մարդկանց մոտ:

Այս գրքի ընթերցանության արդյունքում կրթության վերաբերյալ մի անսպասելի հետևության էլ կարելի է հանգել: Կոգնիտիվ դյուրությունը հաճախ վնասում է սովորելուն: Յեղիակը ցույց է տալիս, որ լավ տրամադրությունը թուլացնում է Յամակարգի 2-ի զգոնությունը. երբ ամեն ինչ ապահով ու հեշտ է, կարելի է վերահսկողությունը թուլացնել և մտածողական գործընթացները վստահել Յամակարգ 1-ին: Օրինակ, փորձերից մեկում թեստի դժվարընթեռնելի տառատեսակը նպաստել է, որ ուսանողներն ավելի ուշադիր լինեն, մտավոր ջանք գործադրեն, ինչի շնորհիվ արդյունքներն ավելի բարձր են եղել, քան լավ տառատեսակով տպված թեստերի պարագայում:

Որքան էլ զարմանալի է, ուսումնառության դյուրությունը կարող է խանգարել նոր գիտելիքի ձևավորմանը: Յանգստի ձգտող Յամակարգը 2-ը հակված է ընդունելու Յամակարգ 1-ի տված հեշտ ու ինտուիտիվ պատասխանները, առանց քննելու դրանց ճշմարտացիությունը: Եվ հակառակը, կոգնիտիվ լարումը մոբիլիզացնում է Յամակարգ 2-ը:

Այսպիսով, ուսումնառության ժամանակակից ձևաչափերը, որ խրախուսում են սովորողի ջանքերի խնայումը, առաջին տեղում են դնում գործընթացի գրավչությունն ու մատչելիությունը, հակառակ՝ անցանկալի ազդեցություն կարող են ունենալ: Իրական կրթությունը դժվարության, հետևաբար՝ մտավոր ջանքի տարր պետք է ունենա իր մեջ՝ հենց սովորողի շահերից ելնելով:

Գիրքն արժեքավոր է ոչ միայն իր դրույթներով ու հետաքրքիր փորձերի նկարագրությամբ, այլ՝ որպես սթափության կոչ: Քանեմանի այս գիրքը ոչ թե կոնկրետ ինչ-որ բան է սովորեցնում, այլ՝ անընդհատ հիշեցնում է մեր կոգնիտիվ սխալների մասին՝ դրանով խթանելով կանոնավոր մտածողությունը:



ՀՐԱՊԱՐԱԿՆ ՈՒ ԱՇՏԱՐԱԿԸ

Նիլ Ֆերգյուսոն

Գիրք & Միտք #7 | Հրապարակն ու աշտարակը
Դավիթ Սարգսյան և Ավետիք Մեջլումյան

Ցանցերը՝ պատմության անտեսանելի դերակատարներ

Դավիթ Սարգսյան

«Հրապարակն ու աշտարակը» գրքի թարգմանիչ

Եթե կարծում եք, թե սոցիալական ցանցերը զուտ մեր դարաշրջանին հատուկ երևույթ են, ապա ձեր պատկերացումները գլխիվայր կշրջվեն, երբ կարդաք այս գիրքը: Պարզվում է, որ դրանք միշտ են եղել, ավելին՝ ունեցել են վճռորոշ դեր, պարզապես պատմաբանները, որպես կանոն, պատմությունը դիտարկել են այլ կողմից՝ կենտրոնանալով պետությունների, թագավորների, պատերազմների, հաղթանակների ու պարտությունների վրա:

«Հրապարակն ու աշտարակը» աշխարհահռչակ պատմաբան Նիլ Ֆերգյուսոնի կենսագրության մեջ յուրատեսակ հանգրվան է: Նա ցանցերի նշանակությունը հասկացել էր Յենրի Բիսինջերի կյանքն ու գործունեությունն ուսումնասիրելու ընթացքում: Այս գրքում հեղինակը մարդկության ամբողջ պատմությունն է քննում ցանցերի դիտանկյունից, ինչի արդյունքում բոլորիս հայտնի իրադարձությունները (Ֆրանսիական Մեծ հեղափոխությունից մինչև Դոնալդ Թրամփ, ԱՄՆ ստեղծումից մինչև Հայոց Ցեղասպանություն) հնարավոր է դառնում տեսնել բոլորովին նոր հայացքով, քաղել դասեր, որոնք նախկինում անտեսանելի են եղել:

Գրքի առանցքում ցանցերի ու հիերարխիաների, այսինքն՝ հորիզոնական և ուղղահայաց իշխանությունների (հրապարակի և աշտարակի) միջև մշտական պայքարն է: Այս գիրքը ցույց է տալիս, որ մարդկության պատմության մեջ անհայտ մարդիկ ու այդ մարդկանց միջև անձնական կապերը հաճախ ավելի վճռորոշ դեր են ունեցել և ունեն, քան հայտնի դեմքերն ու դեպքերը, որոնք սովորաբար ցանցային անտեսանելի կապերի արդյունքն ու հետևանքն են:

Ցանցերը հատկապես կարևոր դեր են ունեցել երկու դարաշրջանում: Ըստ Ֆերգյուսոնի, առաջին «ցանցային դարաշրջանը» սկսվել էր Եվրոպայում՝ 15-րդ դարում, երբ ստեղծվեց տպագրահաստոցը:

Այն շարունակվեց մինչև 18-րդ դարի վերջը: Երկրորդը մեր դարաշրջանն է, որը սկսվեց 1970-ականներին ու շարունակվում է առ այսօր: Այս երկու դարաշրջանների միջակայքում՝ 1790-1960 թթ. միտումը հակառակն է եղել. հիերարխիկ ինստիտուտները վերականգնել են իրենց իշխանությունը և հաջողությամբ ձնշել կամ կլանել են ցանցերը: Հիերարխիկ կազմակերպված իշխանության գագաթնակետը 20-րդ դարի կեսին էր՝ տոտալիտար ռեժիմների և տոտալ պատերազմի դարաշրջանը:

Կարևոր դիտարկում. թեև գրքի վերնագրից կարող է տպավորություն ստեղծվել, թե խոսքը հակազիտական դավադրության տեսությունների մասին է, իրականությունը ձիշտ հակառակն է: Ֆերգյուսոնը կոտրում է անհեթեթ կարծրատիպերը՝ բացատրելով, թե իրականում ինչ դեր են ունեցել մասոնական օթյակները, իյումինատները կամ հրեա բանկիրները պատմության ընթացքում. բացատրում ու հիմնավորում է՝ միաժամանակ տալով աղբյուրների հետ աշխատանքի վարպետության դաս:

Գիրքը գիտական բարձրարժեք աշխատություն է, որտեղ հեղինակը հաճախ հանգում է սենսացիոն բացահայտումների՝ իր փաստարկներին տալով ծանրակշիռ հիմնավորումներ: Գիրքը ստիպում է խորհել ու վերաիմաստավորել մարդկության ամբողջ պատմությունը:

Այն չի շրջանցել նաև Հայոց Ցեղասպանությունը: Ֆերգյուսոնը թուրքական մեծ հանցագործությունը վերլուծել է հենց ցանցային դիտանկյունից՝ հանգելով անսպասելի և հատկապես մեզ համար ուշագրավ բացահայտումների: Եվ այո՛, արևմտյան գիտական մտքի վառ ներկայացուցիչ, Օքսֆորդի շրջանավարտ, Հարվարդի ու Ստենֆորդի դասախոս, ամերիկաբնակ, բրիտանացի, պահպանողական, աշխարհահռչակ գիտնական Նիլ Ֆերգյուսոնը Հայոց Ցեղասպանությունն անվանում է Հայոց Ցեղասպանություն:

Թարգմանության վերաբերյալ. գրքում օգտագործված աղբյուրների թվում են Շեքսպիրի, Ստենդալի, Բայրոնի և այլ հեղինակների գեղարվեստական ստեղծագործությունները, որոնցից արված մեջբերումները մենք ոչ թե թարգմանել, այլ վերարտադրել ենք հայերեն՝ մեջբերելով ու ծանոթագրելով նույն հատվածների հայերեն գոյություն ունեցող թարգմանությունները (օրինակ՝ Ջորջ Բայրոն, «Դոն ժուան», թարգմանությունը Հենրիկ Սևանի, Երևան, Սովետական գրող, 1988 թ., էջ 380): Կան որոշ ստեղծագործություններ (օրինակ՝ Աննա Ախմատովայի մի բանաստեղծություն կամ Հենրի Ուոդսվորթ Լոնգֆելդի պոեմից մի հատված), որոնց հայերեն թարգմանություններն առկա չէին: Այդ դեպքում տվյալ ստեղծագործությունները թարգմանել է գրքի թարգմանիչը, կատարելագործել՝ խմբագիրը:

Այսօրինակ աշխատանքները մեզ մոտ սովորաբար ընթերցվում են անգլերեն կամ ռուսերեն, ինչը սահմանափակում է գիտական բարձրորակ արտադրանքի սպառումը Հայաստանում: Գիրքը հայերեն թարգմանվել ու հրատարակվել է «Լույս» հիմնադրամի աջակցությամբ՝ նպատակ ունենալով հայ ընթերցողին հայերեն մատուցել ու հայերեն տարածել գիտական համաշխարհային, ժամանակակից ու բարձրարժեք գրականություն:

Եվ վերջում, «Հրապարակն ու աշտարակը» գիրքը հայերեն գոյություն ունի փոքր, բայց շատ արդյունավետ ցանցի շնորհիվ, որը կոչվում է Newmag հրատարակչություն: Այս գրքից առաջ հրատարակչությունը թարգմանել ու հրատարակել է նաև Ֆերգյուսոնի «Մեծ անկում»-ը, որը ծավալով շատ ավելի փոքր, բայց գիտական նշանակությամբ՝ նույնքան կարևոր աշխատություն է: Այն ևս

միջգիտակարգային հետազոտություն է՝ համաշխարհային պատմական, ֆինանսական, տնտեսական դինամիկայի, ճգնաժամերի ու սպասվող զարգացումների վերաբերյալ:

«Ցանցերը հասկանալու համար ես ստիպված էի գլուխ հանել գրեթե ամեն ինչից: Դառնալ մի փոքր ֆիզիկոս, մաթեմատիկոս, սոցիոլոգ, տնտեսագետ, նույնիսկ մարդաբան ու ինժեներ:

Այնպես որ, այս գիրքը ամենատարբեր ոլորտների հետազոտություն է»:

Նիլ Ֆերգյուսոն

Չտեսնված պատմության (վերա)շարադրանքը՝ Ֆերգյուսոնի «Հրապարակն ու աշտարակը» գրքում

Ավետիք Մեջլումյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Նիլ Ֆերգյուսոնը պատմաբան է և հանրային ինտելեկտուալ, ով ակտիվորեն հանդես է գալիս ելույթներով ու դասախոսություններով: Նա պրոֆեսոր է, արևմտյան առաջնակարգ համալսարանների դասախոս և հետազոտող:

Գիտական աշխատանքների և դասավանդման շրջանակը ներառում է աշխարհի քաղաքական, տնտեսական ու ֆինանսական պատմությունը և բրիտանական ու ամերիկյան կայսերական պատմությունը: Ունի պահպանողականի և բրիտանական կայսրության ջատագովի համբավ: Կենսագրության ուշագրավ դրվագներից մեկն այն է, որ 2024-ին ասպետի կոչման է արժանացել թագավոր Չարլզի կողմից:

Ֆերգյուսոնի «Հրապարակն ու աշտարակը» առաջին հերթին արժեքավոր է որպես պատմության (վերա)շարադրման անսովոր մոտեցում ու դիտանկյուն:

Իր ուսումնասիրության մեկնարկին նա իրավացիորեն նշում է, որ պատմաբանների ուշադրությունից ցանցերը հիմնականում դուրս են մնացել: Ուսումնասիրվում են այն մեծ կառույցները, որոնք արխիվներ են թողել: Սա, այսպես կոչված, պաշտոնական պատմագրությունն է, որ հիմնվում է պաշտոնական գրագրության և կանոնակարգված արխիվի վրա: Դրանցում պատմական իրադարձությունները միայն որոշակի՝ հստակ դիրքի ու շահերի դիտանկյունից են ներկայացվում:

Մյուս ակնհայտությունն այն է, որ իրենց մասին հիշատակություններ հիմնականում թողել են հիերարխիկ՝ աստիճանակարգված համակարգերը: Մինչդեռ ամենամեծ պատմական փոփոխությունները տեղի են ունեցել ոչ պաշտոնապես միավորված մարդկանց խմբերի՝ ցանցերի կողմից, որոնք գրեթե թղթաբանություն չեն թողել: Ֆերգյուսոնը նշում է, որ մի անձի գրագրությունը կարող է ավելի լավ պատկերացում տալ իրադարձությունների մասին, քան ժամանակի պաշտոնական փաստաթղթերը:

Վերոնշյալից ելնելով՝ ուրվագծվում է նրա մեթոդը. պատմել ուրիշ՝ «չերևացող» պատմություն, որ պաշտոնական, արձանագրված պատմությանը զուգահեռ ու աննկատ է հոսել: Պատմել ժամանակակիցների անձնական արխիվների՝ վկայությունների, օրագրերի, նամակագրության ուսումնասիրության միջոցով. այն նյութերի, որոնց ակադեմիական պատմագրությունը վերապահումով կամ քամահրանքով է վերաբերվել:

Թեև գրքում կրկնվող մոտիվ է ցանցերի և հիերարխիաների հակադրությունը, սակայն Ֆերգյուսոնը դրանց «հաշտեցնող» մի դիտարկում է անում. հիերարխիան ցանցի հակապատկերը չէ, հակառակը՝ ցանցի տարատեսակ է: Դրա գլխավոր սկզբունքն է՝ նոր հանգույցներ ավելացնել վերևից ներքև, բայց երբեք դրանք չկապել հորիզոնական կապով: Մյուս հանգույցները կարող են այլ հանգույցների կապվել միայն վերևի իշխող հանգուցակենտրոնի միջոցով:

Ցանցերի մեծ մասը հիերարխիկ բնույթ ունի, քանի որ որոշ հանգույցներ ունեն ավելի մեծ կենտրոնայնություն: Իսկ հիերարխիան ցանցի հատուկ տարատեսակ է, որում տեղեկության կամ ռեսուրսների հոսքերն ուղղվում են միայն որոշ կողերի միջոցով, որպեսզի առավելագույն չափով ավելացնեն իշխող հանգույցի կենտրոնայնությունը:

Ավելի պարզ՝ հիերարխիաներում գործում է «բաժանիր, որ տիրես» սկզբունքը: Ստորին օղակներում գտնվողները հնարավորինս քիչ հորիզոնական կապեր պետք է ունենան, որպեսզի կանխվեն հեղաշրջումներն ու անակնկալ փոփոխությունները: Ամբողջ համակարգը մտածված է այնպես, որ հնարավորին չափ ավելանա վերևի հանգույցի տեղեկություն ստանալու և վերահսկելու կարողությունը:

Սա նշանակում է, որ իրենց համար էլ աննկատ՝ ցանցերը կարող են վերածվել-վերածել հիերարխիաների: Հակառակի վկայությունները կարծես թե քիչ են (երբ հիերարխիան է վերածվել ցանցի):

Ցանցերը կարող են հաջող գործառել նաև հիերարխիաների ներքո և նույնիսկ նպաստել դրանց բարգավաճմանը: Ֆերգյուսոնը ցույց է տալիս, որ բրիտանական կայսրության ծավալի ու երկարակեցության գլխավոր բացատրությունը հարաբերական չմիջամտության սկզբունքն է, որին հետևում էր կենտրոնական իշխանությունը: Իշխանության զգալի մասը պատվիրակվում էր տեղական կառավարիչներին և մասնավոր ցանցերին. «... բրիտանական կայսրությունը կառավարում էր ոչ թե հանձար-միկրոմենեջեր, այլ ոչ պրոֆեսիոնալ ջենտլմենների մի ամբողջ ակումբ, որի թվացյալ անձիգ-գերիշխանությունն իրականում պայմանավորված էր տեղական գործակալների ու գործակցող բնիկների ամենօրյա աննկատ ջանքերով: «Գլխամասը» Լոնդոնում էր, սակայն «տեղում գտնվող մարդն» օգտվում էր զգալի ինքնուրույնությունից, քանի դեռ ցույց չէր տալիս «տեղանքի հետ հարազատանալու» նախանշաններ»:

Համանման՝ չմիջամտելու սկզբունքով էր զարգանում նաև Բրիտանիայի առևտրական ցանցը: Բրիտանական Արևելահնդկական ընկերությունը վերահսկում էր Հնդկաստանի և Արևմտյան Եվրոպայի առևտրի հիմնական մասը: Սակայն նավապետները հաճախ անօրինական առևտրային արշավներ էին ձեռնարկում՝ շեղվելով ընկերության նախագծած ճանապարհից: Դրա շնորհիվ մասնավոր առևտուրը ստեղծում էր կապեր, որոնք միավորում էին մինչ այդ միմյանցից անջատ

գործող տարածաշրջանային կենտրոնները (նավահանգիստներն ու տրանսպորտային հանգույցները):


Ընկերությունն աչք էր փակում այս անօրինական գործունեության վրա, քանի որ դրա շնորհիվ հարստանում էր: Իրենց մասնավոր շահը հետապնդելով՝ անհատներն ակամա նպաստում էին հիերարխիկ կառույցի կապերի ընդլայնմանը:

Ի վերջո, որո՞նք են գրքի հիմնական դասերը: Որքան էլ զարմանալի է՝ դժվար է այս ծավալուն ու մանրակրկիտ ուսումնասիրությունից կիրառական եզրահանգումներ դուրս բերել: Թե ցանցերը, թե հիերարխիաներն ունեն իրենց ուժեղ և խոցելի կողմերը: Պետություններն այլ կերպ չեն կարող գոյատևել, քան՝ միայն և միայն գործելով որպես հիերարխիա: Չհիերարխիան է, որ կարող է ազգային անվտանգություն ապահովել և մասշտաբային այլ նախագծեր իրագործել: Որտեղ կարևոր են ստեղծագործական լուծումների փնտրտուքն ու կապերի ընդլայնումը, այնտեղ անփոխարինելի են ցանցերը:

Սակայն չկան դեղատոմսեր և կայուն օրինաչափություններ: Չավասարապես և նույն հաճախականությամբ են տապալվում թե՛ ցանցերը, թե՛ հիերարխիաները: Կարող է ճաքեր տալ ու կործանվել երբեմնի անխախտ թվացող կայսրությունը, կարող է կարծրանալ ու հիերարխիայի վերածվել գիտնականների՝ գաղափարների ազատ շրջանառություն խրախուսող ցանցը: Երբեմն լավ է մեկը, երբեմն՝ մյուսը: Ֆերգյուսոնի գիրքն, այս առումով, չի սովորեցնում ոչինչ:

Գրքի գլխավոր բացը հստակ հայեցակետի բացակայությունն է. պատմական փաստերի երկարաշունչ շարադրանքը հաճախ չի կապակցվում ուսումնասիրության թիրախին՝ «Ցանց – Չհիերարխիա» երկընտրանքին: Երբեմն դժվար է տարբերակել անգամ՝ նկարագրվող կազմակերպությունն ավելի շատ ցանց է հիշեցնում թե՛ հիերարխիա: Ռոտշիլդների տպավորիչ հաջողությունների նկարագրությունից այդպես էլ հստակ չէ՝ նրանց ցանցային հատկություններն են որոշիչ դեր կատարել, թե՛ ցանցերի կառավարման հիերարխիկ մեթոդները: Ի վերջո, որտե՞ղ է ցանցի և հիերարխիայի նուրբ սահմանը: Ո՞ր պահից սկսած և հատկությունների ո՞ր համախումբն է ցանցի՝ հիերարխիկ կառույցի վերածման ազդանշանը:

Պատմության՝ մեզ հայտնի փաստերի նորովի շարադրանքն ու բացահայտումները, իհարկե, հետաքրքիր են, սակայն ընթերցողը, որ բացել է գիրքը՝ հենց ցանցերի ու հենց հիերարխիաների վերաբերյալ օրինաչափություններ գտնելու համար, թերևս հուսախաբ կլինի: Ակնկալիքների ճշգրտման կարիք կա. եթե սիրում ենք պատմական բացահայտումներ և, ընդհանրապես, ծանոթ իրադարձությունների նորովի մեկնություններ, արժե հենց այդ նպատակով կարդալ այս գիրքը:



ԱՐՔԱՅԻ ԱՄԲՈՂՋ ԹԻԿՆԱԶՈՐԸ

Ռոբերտ Փեն Ուորեն

*Գիրք & Միտք #8 | Արքայի ամբողջ թիկնազորը
Լուսինե Խառատյան և Ավետիք Մեջլումյան*

Արքայի ամբողջ թիկնազորը. չընդհատվող ու ծանոթ պատմություն

Ավետիք Մեջլումյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Ռոբերտ Փեն Ուորենը (1905-1989) ամերիկացի բանաստեղծ է, վիպասան և գրաքննադատ: 1947-ին Պուլիտցերյան մրցանակ է ստացել «Արքայի ամբողջ թիկնազորը» (1946) վեպի համար, իսկ 1958 և 1979 թվականներին՝ բանաստեղծությունների ժողովածուների համար: Միակ գրողն է, որ Պուլիտցերյան մրցանակ է ստացել թե՛ արձակի, թե՛ պոեզիայի համար:

Գրքի գլխավոր հերոս Վիլի Ստարկի նախատիպը Յու Փիրս Լոնգն է (1893-1935), Լուիզիանայի նահանգապետը: Ուորենն առնչվել էր վերջինիս, երբ դասավանդում էր Լուիզիանայի պետական համալսարանում:

Իր հողվածներից մեկում հեղինակն անդրադարձել է գրքի ստեղծման նախապատմությանը՝ նկատելով, որ եթե չգնար ապրելու Լուիզիանայում և եթե գոյություն չունենար Յու Լոնգը, վեպն էլ չէր գրվի: Բայց Ուորենը նաև զգուշացնում է. դա չի նշանակում, թե գրքի միջավայրը հենց Լուիզիանան է կամ ԱՄՆ որևէ այլ նահանգ: Եվ Վիլի Ստարկն էլ հանգուցյալ նահանգապետ Լոնգը չէ: Պարզապես Լուիզիանան և նրա նահանգապետը գրողի մտքերին ու հույզերին ուղղություն են տվել՝ նպաստելով վեպի ստեղծմանը:

Վեպը գրելու խթաններից էին նաև նահանգապետի գործունեության մասին ժողովրդական միջերը: Դրանցում նա աղքատ ու ճնշված խավերի հերոսն է, ով ձեռնոց է նետում կոռումպացված ու փչացած էլիտաներին և անվճար բարիքներ (կամուրջներ, ճանապարհներ) ստեղծում հասարակ ժողովրդի համար: Չանուն արդարության, պետք է նշել, որ հերոսի նախատիպն, իր ողջ հակասականությամբ հանդերձ (ինչպես, թերևս, ցանկացած քաղաքական գործիչ), իրապես մեծ

ներդրում է ունեցել նահանգի կյանքում: Նրա կառավարման տարիներին ոչ միայն տպավորիչ շինարարական բում է եղել, այլ նաև՝ կարևոր սոցիալական ծրագրեր են իրագործվել՝ աշակերտների համար անվճար դասագրքեր ապահովելուց՝ մինչև աղքատ ընտանիքների սովորողների համար կրթական հնարավորությունների ընդլայնում և սևամորթների անգրագիտության մակարդակի էական նվազեցում:

Յյու Լոնգն ընդգծված հակաէլիտիստական հռետորաբանություն էր կիրառում՝ հանդես գալով խոշոր ընկերությունների հարկերի բարձրացման և, ընդհանուր առմամբ, հարստության արդար վերաբաշխման օգտին: Չնարավոր է՝ սա էր պատճառներից մեկը, որ նահանգի բարեկեցիկ ընտանիքներն ատում էին նրան, ինչի մասին նաև Ուորենն է պատմում՝ վերը նշված իր հոդվածում: Ատելության շարժառիթները որոշ դեպքերում ազնիվ էին, որոշ դեպքերում՝ ոչ այնքան: Բայց այդ մարդկանցից ոչ ոք, ըստ Ուորենի, չէր խորհել այն ակնհայտ փաստի մասին, որ եթե նահանգի նախորդ կառավարություններն ինքնագոհ, ծույլ ու ապաշնորհ չլինեին, ներքաշված չլինեին կոռուպցիայի մեջ և զուրկ չլինեին ստեղծագործ մոտեցումից, ապա չէր լինի և Յյու Լոնգը:

Վեպի այս համատեքստն է հիմք դարձել, որպեսզի այն մեկնաբանվի որպես պոպուլիզմի և քաղաքականության մասին մի գիրք: Վեպին հղում են անում նաև ժամանակակից քաղաքագիտական տեքստերը, ինչպես, օրինակ, քաղաքագետ Յան-Վերներ Մյուլերն՝ իր «Ինչ է պոպուլիզմը» գրքում:

Սակայն գլխավոր միտքը, որ ծագում է այս գիրքը կարդալու ընթացքում, հետևյալն է. սա վեպ չէ պոպուլիզմի մասին: Եվ ոչ էլ նույնիսկ՝ քաղաքականության մասին: Այո, քաղաքական պայքարն այս վեպի միջավայրն է և հավանաբար դրա նկատմամբ մարդկային հետաքրքրությունն է նպաստել վեպի՝ առնվազն երեք անգամ էկրանավորմանը (1949-ին՝ օսկարի մրցանակաբաշխությանը ճանաչվելով տարվա լավագույն ֆիլմ, 1971-ին՝ ԽՍՀՄ-ում և 2006-ին՝ կրկին Յուլիվուդում):

Բայց քաղաքականությունն ու պոպուլիստական հռետորաբանությունն այստեղ ֆոն են միայն: Վեպը գրականության հավերժական թեմաների շուրջ է՝ մարդու բարոյական անկման ու վերածննդի, մեղքի և դրանից փախուստի, սիրո ու դավաճանության: Սա քրիստոնեական ոգով լեցուն, աստվածաշնչյան պատում է՝ բազմաթիվ հղումներով ու աստվածաշնչյան մեջբերումներով: Չամընդհանուր խղճահարության ոգին է թևածում այստեղ՝ ազատ անկման մեջ գտնվող բոլորի ու ամենայնի հանդեպ:

Առանցքային գիծն իշխանության մեջ հայտնված մարդու փչացումն է, փոխգիջումը՝ հռչակված սկզբունքների և իրականության պարտադրանքի միջև:

«Մարդը հղանում է մեղքի ու ծնվում անբարոյականության մեջ, ճանապարհ է անցնում գոզաբույր բարության մինչև գարշահոտ սավան:»

Սա է Վիլլի Ստարկի հավատամքը: Բայց վեպի աշխարհում խավարը խտանում է ոչ թե այս հավատամքի գոյության փաստից, այլ այն բանից, որ այն աշխատում է՝ իրական է: Յուրաքանչյուր դրվագում այս համոզմունքն իր հիմնավորումն է փնտրում: Եվ, ցավոք, գտնում է:

Սա պատում է գերմարդու մասին, որ թույլ է տալիս՝ միջավայրը խժռի իրեն և կարծես ծանր չի

տանում այդ փաստը:

«Ես պետք է հավատամ, որ Վիլլի Ստարկը մեծ մարդ է եղել: Թե ինչ պատահեց նրա մեծության հետ, արդեն ուրիշ խնդիր է: Գուցե նա իր մեծությունը շաղ տվեց գետնին, ճիշտ ինչպես հեղուկն է թափվում ջարդված շշից: Գուցե իր մեծությունը լցրեց մի կույտի մեջ և միանգամից հրկիզեց խավարում, ինչպես մի մեծ խարույկ, ու հետո ոչինչ չմնաց խավարից ու կայծկլտացող խանձողներից բացի: Գուցե նա չէր կարողանում իր մեծությունը զանազանել իր ոչնչությունից և դրանք այնպես միախառնեց, որ ամեն ինչ փչացրեց: Բայց նրա մեջ մեծություն կար: Ես պարտավոր եմ դրան հավատալ:»

Կարելի է հիշել հայտնի «Խաղալիք» ֆիլմը՝ մասնակցությամբ Պիեռ Ռիշարի, որտեղ շեֆը փորձարկում է անում՝ կարգադրելով ենթականերից մեկին՝ հանվել: Երբ վերջինս անխոս հնազանդվում է պահանջին, շեֆը հռետորական հարց է տալիս այն մասին, թե իրենցից ով է ավելի մեծ հրեշ՝ ինքը, որ նման հրաման է տվել, թե դրան անտրտուն ընթարկվողը:

«- Գրողը տանի,- պատասխանեց,- դրանք այնպիսի աչքեր ունեն, որ մարդ ուրիշ կերպ խոսել չի կարող: Սա, օրինակ, պնակալեզի մեկն է: Անմիջապես երևում է: Նրա հետ այլ կերպ վարվել չի կարելի:

- Այո,- ասացի,- այդ մարդը մի երկար ճիճվի է նման:

- Ես նրան բոլոր հնարավորությունները տվեցի,- մռայլ արձագանքեց Բոսը: Նա հազար անգամ կարող էր հրաժարվել կրկնելուց իմ ասածը: Նա կարող էր չլսել ինձ: Կարող էր վեր կենալ, դուռը շրխկացնել ու գնալ: Կարող էր վերջապես ամսաթիվ դնել այդ թղթի վրա ու երեսիս շարտել: Բայց ոչ, գրողը տանի: Բայրամը դա անողը չէ:»

Ուորենի վեպում հերոսներն ու միջավայրը նույն տրամաբանությամբ կամ տրամադրությամբ են միմյանց արնչվում. մեկը մյուսին արժանի են և ոչ ոք ենթակա չէ ավսոսանքի: Հերոսներն աղտոտում են միջավայրը և նույնչափ էլ իրենք են աղտոտվում:

«Բայց նրանց էլ կարելի էր առարկել. ոչ, ի վերջո, մեղավորը, այնուամենայնիվ, ամբոխն էր, անուղղակի կերպով, քանի որ նա թույլ էր տվել Մակմերֆին անցկացնել այդ մարդկանց, և ուղղակի, քանի որ նա, ի հեճուկս Մակմերֆիի, ընտրել էր Վիլլի Ստարկին: Բայց ինչո՞ւ էր նա ընտրել Վիլլի Ստարկին: Նրա համար, որ հանգամանքները ստիպեցին, որ ամբոխը դառնա այն, ինչ որ է, թե՛ նրա համար, որ Վիլլի Ստարկը կարողանում էր թեքվել ու խոնարհվել դեպի նա՝ ձեռքերը երկնքին պարզած ու աչքերը չռած:»

Անադարտության ձգտող հազվագյուտ կերպարներն էլ իրականում երեսպաշտ են: Նրանք գիտեն, որ չարիքն անխուսափելի է, բայց ձգտում են մաքուր մնալ, ավելի ձգրիտ՝ մաքուր երևալ.

«- Ուրեմն նա աշխատում էր ինձ հետ... որպես գլխավոր դատախազ և հրաժարական տվեց: Իսկ գիտես ինչո՞ւ,- պատասխանի չսպասելով Բոսը շարունակեց,- հրաժարական տվեց, որովհետև չէր

ուզում թաթիկները կեղտոտել: Ուզում էր տուն կառուցել, բայց չգիտեր, որ ցեխի մեջ աղյուս շաղախող մարդիկ չկան: Նա ճիշտ նման էր այն մարդուն, որը սիրում է բիֆշտեքս ուտել, բայց ատում է սպանդանոցի մասին միտքն անգամ, որովհետև այնտեղ վատ, անտաշ, անասուն չսիրող մարդիկ կան, որոնց վրա միայն պետք է գանգատ տալ Կենդանիների պաշտպանության ընկերությանը: Ուստի և հրաժարական տվեց:»

Մարդկային այդ տափաստանում, ուր գետնաքարշ, գորշ թփեր են և անգործ թավալվող մացառներ, հանկարծ կաղնու պես խոյանում է նահանգապետը, որ բարոյապես հաճո չէ գուցե, բայց գործող մեկն է և խորություն ունի կարծես: Տեքստն ակնարկում է, որ յուրաքանչյուրն, ով թաթախված է քաղաքականության մեջ, սրիկա է: Ուրեմն մնում է պատմել գոնե այն մեկի մասին, ով ևս սրիկա է, բայց վառ կերպար է՝ կաղնի՝ մյուսներից վեր բարձրացող:

Վեպի բոլոր հերոսները, թվում է, միևնույն հավաքական անձի այլընտրանքային ես-երն են, ավտեր էգոները: Վիլի Ստարկը մյուսների թաքուն ու վախենալու մղումների իրագործողն է, այն ցանկությունների, որ քաջություն չունեն խոստովանելու: Նա ուրիշների՝ հայեցողների իրացված ես-ն է, գործող ես-ը: Մինչ մյուսները փորձում են մաքուր պահել ձեռքերը, Վիլին խիզախաբար մտնում է բեռի տակ:

«Դուք ուզում եք Ձեր հարվարդյան ձեռքերը մաքուր պահել, բայց հոգու խորքում լավ գիտեք, որ ես ձձմարտությունն եմ ասում, Ձեզ պարզապես անհրաժեշտ է, որ ուրիշն աղտոտվի:»

Վիլի Ստարկն ու պատմողը՝ Ջեկ Բարդենը, նույն անձի երկու կերպն են՝ բևեռային, տարբեր, բայց՝ սերտաճած արյունատար անոթներով և միմյանցից սնվող: Մեկը հայեցող է, մյուսը՝ գործող, մեկը տեսության մարդ է, մյուսն՝ իրականության, մեկը գաղափարների հետ է խաղում, մյուսը դրանք կարծր փաստերի է վերածում:

Ինչո՞ւ կարդալ այս գիրքը: Եվ ինչո՞վ է այն օգտակար հենց հայաստանցի ընթերցողին:

Առաջին հերթին այն բանի համար, որ հասկանանք-տեսնենք՝ Հայաստանի վերջին տասնամյակների պատմությունը՝ անկախացումից ի վեր, պատմական եզակի մի ֆենոմեն չէ:

Վեպում հյութալի կերպով ցույց են տրվում ԱՄՆ 30-ականների բարքերը, այն ամենը, ինչի դեմ մեզնից շատերը պայքարում էին կամ պայքարում են. կոռուպցիան՝ իր հիասքանչ մանրամասներով, պետական գնումներն ու կատաղի մրցակցությունը՝ դրանցից կտոր փախցնելու համար, քաղաքական մրցակիցների ահաբեկումն ու քվեներ հայթայթելը: Որքան ծանոթ է այս ամենը:


Գեղարվեստական արժանիքներից գատ, գիրքը պետք է կարդալ նաև՝ հասկանալու համար, որ մենք ինչ-որ եզակի ու անկրկնելի ողբերգության օբյեկտները չենք, այլ՝ պատմության հերթական, կրկնվող արարի մասնակիցներ: Այն քողագերծում է ԱՄՆ լուսապսակը, պատմության ամենացավոտ կողմերն ի ցույց դնում՝ ստրկատիրությունից մինչև քաղաքացիական պատերազմ, և դրանով հիշեցնում, որ ազգերի տառապանքն ինչ-որ յուրահատուկ անեծք չէ՝ առաքված միայն «ընտրյալներին»:

Վեպի գեղարվեստական արժանիքներից է հետթարթերի (flashback) գերազանց կիրառությունը՝ ընթերցողին պատմության էջերում այս ու այն կողմ նետելը: Բայց այս հետթարթերից գլխապտույտ չի առաջանում, հակառակը՝ փոշոտ պատումներն այնքան ներդաշնակ հյուսվում են այս պահի պատմությանը: Եվ հակարժ պարզվում է, որ դրանք միևնույն պատմությունն են, և առանց մեկի մյուսը թերի է, և իրականում ոչինչ չի ավարտվում, այլ տեղի է ունենում անընդհատ: Այդպիսի մի ճյուղ է Կասս Մաստերնի մասին պատումը, որ վիպակ է՝ վեպի մեջ: Այն սկզբում խորթ մարմին է թվում, բայց տեքստի ծավալման ընթացքում բացահայտում է իր առանցքային նշանակությունը՝ գլխավոր պատումի նկատմամբ:

Վեպի կրկնվող մոտիվներից է մեքենայով ճամփորդությունը՝ տեղից տեղ գնալը, որ այդքան հատուկ է ամերիկյան վեպին ու պատմվածքին՝ Նաբոկովի Լոլիտայից մինչև Սարոյանի հերոսներ: Այստեղ ավտոմեքենան մի լրացուցիչ իմաստ էլ է ստանում. այն փախուստի միջոց է: Մեքենայով ճամփորդությունը ժամանակակից ուխտագնացություն է՝ ինքն իրենից, ես-ից, ինքնությունից պոկվելու միջոց:

Վեպի հիանալի կտորներից մեկը պատմողի՝ Ջեկ Բարդենի մեքենա վարելն է՝ դեպի Արևմուտք, դեպի Կալիֆոռնիա: Ոչինչ տեղի չի ունենում ոչ ճանապարհին, ոչ նպատակակետում, ոչ էլ տունդարձի ժամանակ: Եվ այդ՝ «ոչինչ տեղի չունենալու»՝ իրադարձությունների ծանծաղության հանգամանքն էլ ավելի է ընդգծում մեկշաբաթյա ճամփորդության իրական իմաստը: Սա օրեր տևող մեդիտացիա է, ծես, անհավատի աղոթք ու խոկում, որ տեղի է ունենում ժամանակակից մարդու շարժական տաճարում՝ ավտոմեքենայում:

Ռոբերտ Փեն Ուորենի վեպը հանգիստ խղճով կարելի է դասել մեծ վեպերի շարքին: Ինչպես գրականության այլ նշանակալի տեքստերը, սա ևս չունի մի կոնկրետ ասելիք, մի հստակ ուղերձ: Այն տարողունակ է, մասշտաբային, լի՝ բազում շերտերով: Ուստի ներողամիտ լինենք «գիրք է՝ պոպուլիզմի մասին» մարկետինգային հնարի նկատմամբ, քանի որ լավ խայծը երբեք չի վնասում լավ գրականությանը:



ՐՈՒՋԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏ

Դենիել Գոուլման

Գիրք & Միտք #9 | Հուզական ինտելեկտ
Քրիստինա Ծատուրյան և Ավետիք Մեջլումյան

Դենիել Գոուլմանի «Հուզական ինտելեկտ»-ը և դրա նշանակությունը

Քրիստինա Ծատուրյան

Կրթության փորձագետ

Դենիել Գոուլմանը ամերիկյան հոգեբան, հետազոտող և գրող է, ով առավել հայտնի է «Հուզական ինտելեկտ» («Emotional Intelligence») գրքով: Նա համարվում է հուզական բանականության (EQ) հասկացության առաջատարներից մեկը, ում շնորհիվ այս գաղափարը մեծ ճանաչում է ստացել ամբողջ աշխարհում: 1995 թ. հրատարակված այս գրքում զետեղված են տարբեր հետազոտություններ, որոնք ցույց են տալիս, որ մարդկանց հաջողության և լավ հարաբերություններ կառուցելու համար կարևոր դեր ունի ոչ միայն ինտելեկտը (IQ), այլ նաև հուզական բանականությունը:

Գոուլմանը հուզական բանականությունը բնութագրում է որպես կարողություն, որը թույլ է տալիս մարդկանց հասկանալ և կառավարել իրենց սեփական և ուրիշների զգացմունքները՝ դրանով իսկ բարելավելով իրենց վարքագիծը, որոշումների կայացման գործընթացն ու սոցիալական փոխհարաբերությունները: Նա առանձնացնում է հետևյալ կարևոր հմտությունները.

1. Ինքնագիտակցություն (Self-Awareness)

- Հասկանալ սեփական զգացմունքներն ու տրամադրությունը:
- Իմանալ սեփական ուժեղ և թույլ կողմերը:
- Գնահատել և վստահել սեփական անձին:

2. Ինքնակառավարում (Self-Regulation)

- Կառավարել հույզերն ու պահվածքը՝ անկանխատեսելի իրավիճակներում:
- Հարմարվողականություն և պատասխանատվություն:
- Պահպանել ներքին հանդարտությունն ու ինքնատիրապետումը:

3. Մոտիվացիա (Motivation)

- Նպատակաուղղվածություն և ձգտում հաջողության:
- Ինքնապարտադրանք և բարձր պատասխանատվություն:
- Լավատեսություն և հաստատակամություն դժվարությունների դեմ:

4. Ապրումակցում (Empathy)

- Մյուսների հույզերը հասկանալու ունակություն:
- Զգացմունքային կապեր հաստատելու ունակություն:
- Կարեկցանք և հարգանք:

5. Սոցիալական հմտություններ (Social Skills)

- Կարողություն՝ կառուցելու և պահպանելու լավ հարաբերություններ:
- Համագործակցություն և թիմային աշխատանք:
- Ինքնավստահություն ու հաղորդակցման հմտություններ:

Գրքի նշանակալիությունը պայմանավորված է նրանով, որ Գոուլմանը ստիպում է ընթերցողին ներհայել և մտածել սեփական վարքագծի, հույզերի և այլոց հետ փոխհարաբերությունների մասին: Նա հատկապես անդրադառնում է մանկությանը և մանուկ հասակում ուղեղի տարբեր հատվածների ձևավորմանը, նյարդային համակարգին, կապերին և դրանց զարգացման վրա տարբեր գործոնների ազդեցությանը: Գրքի յուրաքանչյուր բաժնում սկզբում ներկայացվում է իրավիճակ, այնուհետև այդ իրավիճակի բացատրությունն է տրվում նյարդաբանության, վաղ տարիքի զարգացման առանձնահատկությունների, երեխայի համար նշանակալի խնամակալի հետ հարաբերությունների տեսանկյունից:

Գոուլմանն անդրադառնում է նաև, թե ինչպես է հուզական բանականությունը, կամ հուզական բանականության՝ վաղ տարիքում ձևավորումը նպաստում ուսումնառությանը և առաջադիմությանը: Օրինակ, նա ներկայացնում է մի դրվագ «մարշմելուու մարտահրավերը» փորձից, որին մասնակից երեխաներին հետազոտել են երկարատև ժամանակ և արձանագրել, որ այն երեխաները, որոնք ցուցաբերում էին համբերություն և մինչև նախանշված ժամանակը չէին դիպչում մարշմելուին, հետագայում առավել հաջողակ էին և տոկուն:

Այս թեման Հայաստանում առավելագույնս հետաքրքրական է դառնում՝ կրթության և աշխատաշուկայի պահանջների անհամապատասխանության, մասնագիտական ներուժի կամ փափուկ հմտությունների բացակայության, հետպատերազմյան և օրեցօր աճող ազդեցիկի համատեքստում:

Համաձայն 2023 թ. Երջանկության համաշխարհային զեկույցի՝ Հայաստանի երջանկության միջին միավորը 5.38 է (10-ից), ինչը մի փոքր ցածր է համաշխարհային միջին ցուցանիշից՝ 5.59-ից:

Gallup-ի 2023 թ. Հույզերի համաշխարհային զեկույցում Հայաստանն ընդգրկվել է հինգ ամենաբարկացած երկրների շարքում՝ Լիբանանի, Թուրքիայի, Իրաքի և Աֆղանստանի կողքին: Նույն կերպ, կրթության ցուցանիշները Հայաստանում վերջին տարիներին անկում են գրանցել, իսկ տարբեր ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ անհրաժեշտ են կրթության կազմակերպման նոր

և համապարփակ մոտեցումներ:

Գոուլմանն այս կապակցությամբ նշում է, որ 80-ականներին ԱՄՆ-ում մեծ թափ ստացան սոցիալ-հուզական ուսումնառության ծրագրերը: Տարբեր հետազոտություններ ցույց տվեցին, որ նմանատիպ ծրագրերը կարողանում են նվազեցնել ագրեսիան և անհանգստությունն աշակերտների մոտ, ինչպես նաև խթանում են ապրումակցումը, համագործակցությունը և կոնֆլիկտների լուծման հմտությունները: Նմանատիպ ծրագրերը միտված են զարգացնելու ինքնագիտակցությունը, ինքնակարգավորումը, սոցիալական հմտությունները, ապրումակցումը և մոտիվացիան, որոնք հուզական բանականության կարևոր տարրերն են:

Այս գիրքը հանրամատչելի կերպով ներկայացնում է հուզական բանականությունը՝ հղում անելով տարբեր ուսումնասիրությունների: Այն հետաքրքիր կլինի ծնողներին, ուսուցիչներին, մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետներին:

Ճանաչեք ձձմարիտ հույզերը և դրանք ձեզ կազատեն

Ավետիք Մեջլումյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Ամերիկացի գրող, հոգեբան և գիտական լրագրող Դենիել Գոուլմանի «Հուզական ինտելեկտ» գիրքը, 1995 թ. լույս տեսնելուց հետո, համաշխարհային համբավ է ձեռք բերում՝ դառնալով բեսթսելլեր: Մինչ օրս գիրքը բազմիցս վերահրատարակվել է, թարգմանվել ավելի քան 40 լեզուներով:

Գրքի ստեղծման շարժառիթները և ապագայի տեսլականը ուշագրավ կերպով է ներկայացնում հենց ինքը՝ հեղինակը:

«Հիշում եմ տասը տարվա վաղեմության իմ այն միտքը (այս գրքի հրատարակումից անմիջապես առաջ), որ եթե մի օր լսեմ գրույց, որի ժամանակ երկու անձանոթներ կիրառում են «հուզական ինտելեկտ» արտահայտությունը և երկուսն էլ հասկանում դրա նշանակությունը, ապա հաջողության հասած կլինեմ հասկացությունը հասարակության ավելի լայն շերտերին հասցնելու հարցում: Ես գաղափար անգամ չունի, թե ինչպիսի տարածում կունենա վերջինս:»

Այսօր արդեն կարելի է վստահաբար պնդել, որ Գոուլմանը հաջողել է: Հասկացությունը ոչ միայն լայն ճանաչում է ստացել, այլ նաև՝ կրթության ոլորտում տարածում է գտել սոցիալ-հոգեբանական ուսուցման (ՍՀՈւ) ծրագրերի միջոցով, որոնք պարտադիր են դարձել և ներառվել ԱՄՆ որոշ նահագների կրթական չափորոշիչներում: ՍՀՈւ ծրագրեր կան նաև Սինգապուրում, Կորեայում, Ճապոնիայում, Բրիտանիայում, Ավստրալիայում և այլ երկրներում:

Հուզական գրագիտության կարևորությունն ի ցույց դնելու համար Գոուլմանը մեջբերում է Բրուքլինի ուսուցիչներից մեկի դիպուկ խոսքը:

«Մեզ ավելի շատ անհանգստացնում է երեխայի գրելու և կարդալու ունակությունները, քան արդյոք երեխան ողջ կմնա հաջորդ շաբաթ:»

Գրքի հիմնական ուղերձն այն է, որ հուզական ինտելեկտի կարողությունները և ոչ թե IQ կամ տեխնիկական հմտություններն են «խտրականություն» առաջացնում և լավագույնս կանխատեսում, թե փայլուն ուղեղի տեր մարդկանցից ով ավելի ունակ ղեկավար կդառնա:

«Երբ վերլուծում ես, թե ողջ աշխարհում տարբեր կազմակերպություններ միմյանցից անկախ որ հատկանիշներն են կարևորում իրենց լավագույն ղեկավարների մեջ, տեսնում ես՝ որքան բարձր է պաշտոնը, այնքան IQ-ն և տեխնիկական հմտությունները այդ ցանկի ամենաստորին տեղում են գտնվում: (IQ և տեխնիկական փորձառությունը առաջխաղացման շատ ավելի ազդեցիկ գործոններ են մասնագիտական ավելի ցածր մակարդակներում:):»

Նախքան հուզական ինտելեկտի ուսումնասիրության ձեռնարկումը, Գոուլմանը քողագերծում է դրա շուրջ առկա որոշ միֆեր: Առաջին միֆն այն է, թե իբր հուզական ինտելեկտը կազմում է հաջողության 80 տոկոսը: Ըստ նրա, սա անհեթեթ պնդում է: Կա վիճակագրություն, որ IQ-ն հաջող կարիերայի միայն 20 տոկոսն է: Եվ այդտեղից այն սխալ հետևությունն է կայացվել, թե մնացած 80 տոկոս անորոշությունը հուզական ինտելեկտն է: Մինչդեռ, հաջողության մեջ մեծ է տարատեսակ գործոնների դերակատարությունը՝ ընտանիքից ու կրթությունից մինչև կույր բախտ, խառնվածք և այլն:

Մյուս միֆն, ըստ Գոուլմանի, այն է, թե իբր բոլոր ոլորտներում է հուզական ինտելեկտն ավելի կարևոր: Մինչդեռ զուտ ակադեմիական ձեռքբերումների բնագավառում դա այդպես չէ: Այն կարևոր է այնպիսի ոլորտներում, որտեղ հուզական ինքնակարգավորումն ու ապրումակցումն են ավելի կարևոր:

Վերջապես, շատերն այն թյուր պատկերացումն ունեն, թե իբր հուզական ինտելեկտը հույզերից հրաժարվելու կամ դրանք ճնշելու մասին է: Գրքի ուղերձն այս առումով ևս հստակ է. հույզերն արժեքավոր են, դրանցից հրաժարվել ոչ միայն հնարավոր չէ, այլև՝ պետք էլ չէ: Հարկավոր է քննել ու հասկանալ հույզերը, ուշադիր լինել դրանց նկատմամբ անգամ որոշումներ կայացնելիս: Օրինակ, անցանկալի հույզ համարվող տագնապը կարող է օգտակար լինել նրանց համար, ովքեր այն կարողանում են կառավարել: Տագնապի կառավարելի «չափաբաժինը» լավ խթան է ստեղծագործելիս կամ քննության պատրաստվելիս:

Գոուլմանը տալիս է հույզի իր մեկնաբանությունը:

«Հույզ ասելով ես հասկանում եմ զգացմունքը, վերջինիս բնորոշ մտքերը, հոգեբանական և կենսաբանական վիճակը և գործության մղումները:»

Սակայն հույզից ոչ պակաս և հաճախ ավելի կարևոր է մետահույզը, որը պարզեցված կերպով կարելի է բնորոշել որպես հույզ՝ հույզի մասին: Մետահույզը ցույց է տալիս մեր վերաբերմունքը մեր իսկ հույզի նկատմամբ, տվյալ հույզի առնչությամբ ունեցած մեր հույզերը: Այլ կերպ՝ մետահույզը հույզի նկատմամբ ռեֆլեքսիան է, հույզի ինքնահայեցումը:

Հուզական կոմպետենտությունը սկսում է հույզերը ծանաչելուց և ձևակերպելուց: Իսկ սրանք լեզվի միջոցով են տեղի ունենում. հույզերի հասկացումն անբաժանելի է լեզվից:

Այս առումով, առանձին քննարկման առարկա է հայերենի հուզական արտահայտման ներուժը: Առօրյա, խոսակցական հայերենը գերհուզական է, ինչն էլ արժեգրվում է լեզվական միջոցները՝ բառերն ու արտահայտությունները: Երբ անգամ սովոր հույզերն արտահայտվում են իրենց գերադրական աստիճանով («ահավոր է», «դիմանալու բան չէ», «անկարելի է», «մեռնում եմ», և այլն), այլևս չեն մնում հարմար բառեր՝ իրական ցավն ու տանջող հույզերն արտահայտելու համար:

Իսկ չարտահայտված հույզերն այդպես էլ մնում են անձանաչելի և ուռձացնում են տանջող անորոշության ճնշումը:

Ցավոք, հենց դպրոցական կրթությունն է դեռ տարրական դասարաններից երեխաներին ներարկում պաճուճավոր, շքեղազարդ, բայց իրականում՝ դատարկ ու ոչինչ չասող լեզվամտածողությունը: Հանրակրթությունը և հատկապես դրա հումանիտար առարկաները պետք է հնարավորինս մաքրել պարագիտ բառերից ու ճոռոմախոսությունից: Սովորողները պետք է յուրացնեն պարզ, հասկանալի, ավելորդություններից ու ձևականություններից զերծ լեզուն՝ իրենց հույզերն արտահայտելու, բանականության դաշտ բերելու համար:

Գրքում հաճախ է կրկնվում ու կարևորվում ճշմարտության ծանաչումը: Տվյալ դեպքում՝ հույզերի ծանաչումն այնպիսին, ինչպիսին դրանք կան՝ առանց սեթևեթանքի, առանց կեղծիքի ու վախի:


Մինչդեռ հասարակական հարաբերությունները՝ դպրոցից մինչև ընտանիք և այլուր, կառուցված են ոչ թե իրականության, այլ՝ ցանկալի, խրախուսելի, ապահով ճշմարտությունների յուրացման պարտադրանքի շուրջ: Հասարակությունն է հուշում, թե ինչ է պետք զգալ որոշակի իրավիճակում, ինչպես է պետք դա զգալ, ինչ չափով և ուժգնությամբ: Այդ պարտադրված հույզերի արտահայտման ձևերն էլ նույնպես նորմավորված են՝ վերաբերեն դրանք սգո, ուրախության թե հայրենասիրության արտահայտմանը:

Գրքի գլխավոր ուղերձներից է անկաշկանդ և խիզախ ինքնաձանաչումը: Ոչ թե ընդհանուրի բարոյախոսական մահակի ներքո վերարտադրել ակնկալվող հույզերը, այլ՝ խիզախորեն արձանագրել իրական մղումներն ու մտքերն:

Ճանաչված հույզերը բանական՝ հետևաբար՝ ազատ գործողությունների բանալին են:

Եվ կրկին վերադառնում ենք հանրակրթության դերին: Դպրոցական կրթությունն այժմ հույզերի արտահայտման պատրաստի շրջանակներ է տրամադրում սովորողներին՝ ասմունքի ցերեկույթներից մինչև այլ կրթադաստիարակչական միջոցառումներն ու դասավանդումն՝ ընդհանուր առմամբ: Դրանցում սովորողը հաղորդակից չէ ինքն իր հույզերին, այլ ուրիշների հույզերի արտահայտողն է:

Մենք պետք է փորձենք սովորեցնելու արդյունքում շատ բան+ չսովորեցնել: Երբ սովորողը միայնակ մնա ինքն իր հետ՝ առանց հեշտ, պատրաստի կաղապարների, այդ ժամանակ կսկսի ինքն իրեն հարցեր տալ ու քննել՝ անդրադառնալ հույզերին: Դրա համար պարզապես պետք է իջեցնել հույզերը պատվանդանից:



ՊԼՅՈՒՐԱԼԻԶՄ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից քաղաքական մտքի ժողովածու

*Գիրք & Միտք #10 | Պլյուրալիզմ, ժողովրդավարություն,
սոցիալական արդարություն
Արշակ Բալայան և Ավետիք Մեջլումյան*

Բաշխական արդարության տեսություններ. Ռուս, Ուլցեր, Միլեր

Արշակ Բալայան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Բաշխական արդարության տեսությունները ձգտում են բացահայտել այն սկզբունքները, որոնց համաձայն պետք է բաշխել բարիքները:

Այստեղ «բարիք» եզրույթը կկիրառենք խիստ լայն առումով. «բարիք» ասելով նկատի կունենանք այն ամենն, ինչին մարդիկ ձգտում են և/կամ կարող են որևէ այլ նպատակով կիրառել:

Քաղաքական համայնքում բարիքները կարող են բաշխվել ըստ տարբեր սկզբունքների, օրինակ՝ լիակատար ազատ շուկայական գործարքների միջոցով: Այս դեպքում բացարձակապես ամեն ինչ, ներառյալ անհատների հիմնարար ազատությունները, քվեները, դատական որոշումները, և այլն, կլինի առավաճառքի առարկա: Բնականաբար, ոչ մի իրական քաղաքական համայնքում, չկա այսպիսի «լիակատար ազատ շուկայական» համակարգ. անգամ տնտեսական առումով ամենաազատ քաղաքական համայնքներում է արգելվում մի շարք բարիքների ազատ առավաճառքը:

Ո՞ր բարիքներն է, որ պետք է բաշխվեն ազատ շուկայի միջոցով, իսկ որոնք՝ ըստ այլ սկզբունքների, օրինակ՝ ըստ մարդկանց կարիքի:

Վարը սեղմ շարադրված են բաշխական արդարության երեք տեսությունների հիմնական դրույթները:

Ըստ **Ջոն Ռոլսի**՝ արդարության սկզբունքները պետք է դիտարկել քաղաքական համայնքի անկյունաքարային, առանցքային հաստատությունների հետ համատեղ: Առանցքային հասարակական հաստատություններ են, օրինակ, մտքի և խղճի ազատությունները, մրցակցային շուկաները և մասնավոր սեփականությունը (Ռոլս 2024, էջ 124):

Այս հաստատություններն անհատների միջև որոշակի անհավասարություններ են ստեղծում: Ըստ

հասարակության մեջ: Նրանք գիտեն, որ այս անտեղյակության քողի ներքո համաձայնությամբ ընդունված սկզբունքները վերջնական են. երբ այդ անտեղյակության քողն ընկնի, հասարակությունը պետք է առաջնորդվի ըստ այդ սկզբունքների:

Ի՞նչ սկզբունքներ կընտրեն այս գործողները: Ըստ Ռոլսի՝ նրանք չեն ընտրի մի այնպիսի սկզբունք, որը, օրինակ, արտոնյալ վիճակում է դնում քրիստոնյաներին: Չէ՞ որ անտեղյակության քողը վայր ընկնելուց հետո կարող է պարզվել, որ իրենք բոլորն էլ մահմեդական են: Արդյունքում կստացվի, որ իրենք համաձայնության են տվել մի սկզբունքի, որն իրենց դեմ է: Նույն կերպ, անտեղյակության քողի ներքո գտնվողները կխուսափեն որևէ այլ հատուկ խմբի արտոնյալ վիճակում դնող սկզբունքներ ընդունելուց:

Իսկ արդյո՞ք նրանք կընտրեն հետևյալ սկզբունքը. «Յուրաքանչյուրին պետք է տրվի այնքան, որքան նա ներդրում է ունեցել քաղաքական համայնքի ընդհանուր բարիքների ստեղծման գործում»: Ըստ Ռոլսի՝ ո՛չ: Չէ՞ որ անտեղյակության քողը վայր ընկնելուց հետո կարող է պարզվել, որ մարդկանց գերակշիռ մասը ոչ մի ներդրում էլ քաղաքական համայնքի ընդհանուր բարիքների ստեղծման գործում չի ունեցել: Այս դեպքում այդ գերակշիռ մասը ոչինչ չի ստանա:

Ըստ Ռոլսի՝ անտեղյակության քողի ներքո գտնվողները կընտրեն հետևյալ երկու սկզբունքները.

1. Բոլորը պետք է ունենան հավասար հիմնական իրավունքներ և պարտականություններ:
2. Եթե ինչ-ինչ սոցիալական ու տնտեսական անհավասարություններ նպաստավոր են բոլորի, «մասնավորապես, հասարակության ամենաքիչ ապահովված (least advantaged) անդամների համար», դրանք թույլատրելի են (Ռոլս 2024, էջ 136):

Այս սկզբունքները պետք է հարգել, քանի որ սրանք հենց այն սկզբունքներն են, որոնք մենք կընտրեինք սեփական շահն առաջ մղել ձգտող, ռացիոնալ, բանիմաց և անշահախնդիր լինելու դեպքում:

Անհատների հիմնական իրավունքներն, ըստ Ռոլսի, որևէ պարագայում չեն կարող զոհաբերվել հանուն որևէ հանրային նպատակի: Բայց հասարակության մեջ կարելի է թույլատրել տնտեսական (հարստության), սոցիալական (հեղինակության, հանրային ուշադրության) և քաղաքական (իշխանության) անհավասարություն, եթե այդ անհավասարությունից օգտվում են բոլորը:

Մայքլ Ուոլցերի արդարության տեսությունը մի շարք հարցերում հակադրվում է Ջոն Ռոլսի տեսությանը:

Ուոլցերի կարծիքով, չկա «... մի չափանիշ կամ փոխկապակցված չափանիշների մի կազմ բոլոր բաշխումների համար» (Ուոլցեր 2024, էջ 155): Տարբեր բարիքներ բաշխվում են ըստ տարբեր սկզբունքների: Որոշ բարիքներ բաշխվում են ըստ անձանց մարդկային արժանիքների, մյուսներն՝ ըստ մասնագիտական որակավորման, բարիքների մի երրորդ խումբն՝ ըստ մարդկանց կարիքների, և այլն:

Այն, թե ինչպես պետք է տվյալ բարիքը բաշխվի, ըստ Ուոլցերի, կախված է տվյալ բարիքի սոցիալական իմաստից կամ «հասարակական նշանակությունից»: Սնունդը, կրթությունը, հանրային պաշտոնը, տեղաշարժվելու ազատությունը և այլն (հիշենք, որ «բարիք» եզրույթն այստեղ խիստ լայն առումով է կիրառվում) պետք է բաշխել տարբեր սկզբունքներով (Ուոլցեր 2024, էջ 157-158): Ամեն մի բարիք «պահանջում է» իր բաշխման ձևը. ամեն մի բարիքի բաշխում պետք է տեղի ունենա իր

«ներքին տրամաբանությամբ» (Ուոլցեր 2024, էջ 163-4): Մնունդը, թերևս, պետք է բաշխել ըստ կարիքի, հանրային պաշտոններն՝ ըստ արժանիքի, տեղաշարժվելու ազատությունը՝ բոլորին հավասար:

Գործնականում երբեմն այնպես է ստացվում, որ բարիքներն իրենց «ներքին տրամաբանությամբ» չէ, որ բաշխվում են: Օրինակ, երբեմն այնպես է ստացվում, որ դրամ ունեցողը կարողանում է գնել դատարանի որոշում կամ համալսարանական դիպլոմ:

Տվյալ բարիքը տիրապետող է՝ գերիշխող է, եթե զուտ այդ բարիքն ունենալու շնորհիվ հնարավոր է ձեռք բերել այլ բարիքներ: Լիակատար ազատ շուկայական հասարակություններում հաճախ տիրապետող բարիք է դրամը: Տիրապետող բարիքները հաճախ մենաշնորհվում են. նրանք, ովքեր այդ բարիքը ձեռք են բերում, ձգտում են այլոց հետ այդ բարիքը չկիսել՝ ստեղծելով արհեստական խոչընդոտներ, որպեսզի նոր գործորդներ այդ բարիքը ձեռք չբերեն (Ուոլցեր 2024, էջ 166):

Կան բարիքների՝ մեկը մյուսով փոխարկման ընդունելի ոլորտներ (Ուոլցեր 2024, էջ 181): Օրինակ, համակարգչային ծրագիր գրելու կարողությունը փոխարկվում է այս կամ այն ընկերությունում պաշտոնի և համապատասխան աշխատավարձի: Այս ոլորտները մենք բացահայտում ենք ինտուիտիվ կերպով: Բայց բարիքները երբեմն մեկը մյուսով փոխարկվում են անընդունելի ձևերով և ոլորտներում: Օրինակ, փողը գնում է սեր, գիտելիքը՝ համակրանք, և այլն: Ուոլցերը հակադրվում է հենց սրան՝ առաջարկելով ռեսուրսները բաշխելիս հաշվի առնել այդ բարիքների սոցիալական իմաստները՝ հասարակական նշանակությունները (Ուոլցեր 2024, էջ 181):

Ըստ Ուոլցերի՝ արդարությունը պահանջում է վերացնել տիրապետող բարիքները՝ ստեղծել այնպիսի հասարակություն, որտեղ որևէ բարիք տնօրինելը տվյալ գործորդին այլ բարիքներ մեխանիկորեն ձեռք բերելու հնարավորություն չի տա (Ուոլցեր 2024, էջ 177): Սրա համար պետք է «... նեղացնել այն շրջանակը, որի ներսում որոշակի բարիքներ փոխարկելի են, և պաշտպանել բաշխական ոլորտների ինքնավարությունը» (Ուոլցեր 2024, էջ 178):

Ասվածը լուսաբանենք օրինակով: Քաղաքական իշխանությունը բարիք է: Այդ բարիքն, ըստ Ուոլցերի, չպետք է իշխանավորին օգնի, որ նա արտոնյալ ձևով ձեռք բերի, օրինակ, հարստություն կամ լավ կենսաբանի համբավ:

Իսկ բաշխական ինչ սկզբունքներ կան: Ուոլցերը դիտարկում է բաշխական երեք սկզբունք. բարիքները կարելի է բաշխել կամ ազատ փոխանակման միջոցով, կամ ըստ անձանց մարդկային արժանիքների, կամ էլ ըստ մարդկանց կարիքի:

Դեյվիդ Միլերը համաձայն է Մայքլ Ուոլցերի հետ այն առումով, որ չկան բաշխական արդարության այնպիսի սկզբունքներ, որոնք կիրառելի են բոլոր բաշխումների դեպքում: Նրա կարծիքով, կան բաշխական «արդարության բազմաթիվ սկզբունքներ, որոնցից յուրաքանչյուրն ունի կիրառության սահմանված տիրույթ» (Միլեր 2024, էջ 213):

Այս առումով Դ. Միլերն ու Մ. Ուոլցերը համակարծիք են, սակայն արդարության սկզբունքները բարիքների սոցիալական իմաստներից բխեցնելու փոխարեն, Դ. Միլերը փորձում է դրանք բխեցնել մարդկանց «փոխհարաբերության կերպերից» (Միլեր 2024, էջ 214):

Մարկային փոխհարաբերության ինչ տեսակներ կան: Ըստ Միլերի՝ հասարակության անդամների միջև ձևավորվում են հարաբերությունների երեք հիմնական տեսակ. «համերաշխական համայնք,

գործիքային միություն և քաղաքացիություն»:

Համերաշխական են այն համայնքները, որոնց անդամներն ունեն ընդհանուր բարքեր ունեցող համեմատաբար կայուն խմբի ընդհանուր ինքնություն: Այսպիսի համայնքները հաճախ ձևավորվում են անհատների միջև անձնական շփումներից: Այսպիսի համայնքներ են ընտանիքը, կրոնական համայնքը, և այլն: Դրանցում «արդարության առարկայական սկզբունքն ըստ կարիքի բաշխումն է» (Միլեր 2024, էջ 216):

Համերաշխական համայնքներում անձինք համերաշխ են՝ պատրաստ են միմյանց իրենց ուժերի ներածին չափով աջակցել: Իսկ այն, թե որքան է անձը պարտական, կախված է տվյալ համայնքային կապերի սերտության չափից. եղբորից ավելի շատ կարելի է պահանջել, քան գործընկերոջից:

Գործքային միությունն ի հայտ է գալիս այն դեպքում, երբ մարդիկ միմյանց հետ շփվում են միմյանցից օգտվելու, օգուտ քաղելու նպատակով: Գործիքային փոխհարաբերություններով ձևավորված միություններում արդար է բարիքները բաշխել ըստ արժանիքի: Խոսքն այստեղ մարդկային արժանիքի մասին չէ: Տվյալ անձի արժանիքն, ըստ Միլերի, կախված է նրանից, թե նրա ներդրումը որքանով է օգնում հասնել տվյալ գործիքային միության նպատակներին: Բնականաբար, գործնականում դժվար է գնահատել տվյալ անձի ներդրումը:

Հարաբերության երրորդ տեսակը քաղաքացիությունն է (Միլեր 2024, էջ 222): Քաղաքացիական միության բաշխական սկզբունքը հավասարությունն է. քաղաքացիները պետք է ունենան հավասար իրավունքներ և ազատություններ: Թե որքան ընդգրկուն պետք է լինի հավասարությունների ոլորտը, առանձին քննարկման հարց է: Քաղաքացիների համար միևնույն իրավունքներն ունենալը բավարար է, թե՛ պետք է ապահովել նաև քաղաքացիների սոցիալական հավասարությունը (Միլեր 2024, էջ 223):

Ոմանց կարծիքով, քաղաքացիական հարաբերությունները պահանջում են մարդկանց ոչ միայն հավասար իրավունքներ տալ, այլ նաև քայլեր ձեռնարկել, որպեսզի բոլորը գործնականում կարողանան լինել հավասար քաղաքացիներ: Ծայրահեղ աղքատության մեջ գտնվողը չի կարող այլոց հետ հարաբերվել որպես նրանց հավասար քաղաքացի:

Գրականության ցանկ

Միլեր, Դ. (2024), Արդարության տեսության համառոտ ակնարկ. Պլյուրալիզմ, ժողովրդավարություն, սոցիալական արդարություն. Ժամանակակից քաղաքական մտքի ժողովածու, Երևան, Ժամանակակից արվեստի ինստիտուտ: 206-247:

Ռոլս, Ջ. (2024), Արդարությունը որպես անաչառություն. Պլյուրալիզմ, ժողովրդավարություն, սոցիալական արդարություն. Ժամանակակից քաղաքական մտքի ժողովածու, Երևան, Ժամանակակից արվեստի ինստիտուտ: 118-151:

Ուոլցեր, Մ. (2024), Բարդ հավասարություն. Պլյուրալիզմ, ժողովրդավարություն, սոցիալական արդարություն. Ժամանակակից քաղաքական մտքի ժողովածու, Երևան, Ժամանակակից արվեստի ինստիտուտ: 153-205:

Ավետիք Մեջլումյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

«Պլյուրալիզմ, ժողովրդավարություն, սոցիալական արդարություն»-ը վեց հեղինակների՝ վերջերս լույս տեսած տեքստերի ժողովածու է: Դրանք, որպես կանոն, առավել ծավալուն աշխատությունների առաջին կամ երկրորդ գլուխների հայերեն թարգմանությունն են ներկայացնում: Այդ «կիսատությունը»՝ ոչ լրիվ թարգմանությունը, լավ խթան է ընթերցողի համար՝ ուսումնասիրելու աշխատությունների ամբողջական տարբերակները:

Աչքի է զարնում տեքստերի լավ մտածված, տեղին ընտրությունը: Թեև աշխատությունները պատմական տարբեր ժամանակահատվածներ են ներկայացնում, սակայն հեղինակների՝ միմյանց հետ երկխոսություն-բանավեճն ու փոխադարձ խայթոցները բավական ներդաշնակ է: Միևնույն ժամանակ, քննադատությունը հարգալից է՝ ակադեմիական բարեվարքության լավագույն ավանդույթներին համահունչ:

Այս ակնարկում անդրադարձ է կատարվում ժողովածուի երեք տեքստի՝ Ջոն Ռոլսի, Մայքլ Ուոլցերի և Դեյվիդ Միլերի հեղինակությամբ: Վերջիններս արդարության տեսություններ ու չափանիշներ մշակելու փորձեր են ձեռնարկել:

Ջոն Ռոլսի տեքստը 1971 թ. լույս տեսած «Արդարության տեսություն»՝ նշանակալի և փիլիսոփայական բանավեճի վրա մեծ ազդեցություն ունեցած աշխատության առաջին գլխի մի մասի թարգմանությունն է:

Նախ, Ռոլսը նշում է, որ արդարությունը հասարակական հաստատությունների առաջնային առաքինություն է: Դրանով այն ինքնին արժեք է ներկայացնում, այսինքն, անսակարկելի է, անզիջելի: Այս առաքինության իրագործման համար մենք կարիք ունենք մշակելու արդարության սկզբունքներ, որոնք.

- Տրամադրում են իրավունքների ու պարտականությունների վերագրման եղանակ,
- Սահմանում են հասարակական համագործակցության օգուտների պատշաճ բաշխումը:

Ռոլսը նշում է, որ արդարության սկզբունքները նրանք են, որ ազատ ու ռացիոնալ անձինք, որ շահագրգռված են իրենց սեփական շահերն առաջ մղելով, հավասարության նախնական դիրքում կընդունեն որպես իրենց միության հիմնարար պայմանները սահմանող սկզբունքներ:

Հավասարության նախնական դիրքը համապատասխանում է բնական դրությանը՝ սոցիալական պայմանագրի ավանդական տեսության մեջ: Այդ իրադրության մեջ ոչ ոք չգիտի հասարակության մեջ իր տեղը, դասային դիրքը կամ սոցիալական կարգավիճակը, ոչ էլ բնական հարստությունների կամ ունակությունների բաշխման մեջ իր ճակատագիրը, իր խելքը, զորությունը, և այլն: Արդարության սկզբունքներն ընտրվում են չիմացության քողի հետևում:

Սա երաշխավորում է, որ սկզբունքների ընտրության մեջ ոչ ոչ չի շահում կամ կորցնում բնական

դիպվածի բերումով կամ սոցիալական հանգամանքների պատահականությամբ:

Այսինքն, արդարության սկզբունքները համաձայնեցվում են անաչառ իրավիճակում՝ արդարության զգացման ունակ բանական էակների միջև: Այստեղից էլ՝ արդարության Ռուսի մեկնաբանությունը. արդարությունը՝ որպես անաչառություն:

Իհարկե, Ռուսի նկարագրած իրադրությունը վավերական ու պատմական չէ: Սա մտային գիտափորձի նմուշ է, ենթադրյալ մի իրավիճակ, որ ստեղծել ենք պայմանականորեն՝ գործողների (ագենտների) որոշումները երևակայելու համար:

Եվ ահա այդ իրավիճակում, ըստ Ռուսի, ռացիոնալ և փոխադարձաբար անշահախնդիր անձինք կընտրեին 2 սկզբունք.

1. Հիմնական իրավունքների ու պարտականությունների հատկացման հավասարություն:

2. Սոցիալական ու տնտեսական անհավասարություններն արդար են միայն այն դեպքում, եթե դրանց հետևում է օգուտների փոխհատուցում յուրաքանչյուրի, մասնավորապես՝ հասարակության ամենաքիչ ապահովված անդամների համար:

Քանի որ յուրաքանչյուրի բարեկեցությունը կախված է համագործակցության սխեմայից, առանց որի մեկը չէր կարող գոհացուցիչ կյանք ունենալ, առավելությունների բաժանումը պետք է լինի այնպիսին, որ առաջ բերի յուրաքանչյուր մասնակցի հոժարական համագործակցությունը, այդ թվում՝ առավել վատ դիրքում հայտնվածների:

Ռուսի գլխավոր եզրահանգումը խնդրականացնում է ստորև քննարկվող հեղինակներից մեկը՝ Դեյվիդ Միլերը, ով նշում է, որ մարդկանց մեծ մասն այդ պայմանական իրավիճակում (չիմացության քողի ներքո) պարզապես կպատասխաներ, որ չգիտի, թե որոնք պետք է լինեն արդարության պատշաճ սկզբունքները: Այսինքն, որևէ երաշխիք չկա, որ ռացիոնալ և իրենց շահը հետապնդող էակներն անպայմանորեն կգան համաձայնության:

Խնդրահարույց է նաև նկարագրված մտային գիտափորձի կիրառական նշանակությունը: Ըստ քննարկվող մյուս հեղինակի՝ Ուոլցերի, այդ տեսական իրադրության գործողների փոխարեն եթե պատկերացնենք իրական մարդկանց՝ սեփական ինքնությամբ, սեփական բարիքներով, ամենօրյա մտահոգություններով, վստահ չենք կարող լինել՝ արդյո՞ք նրանք կկրկնեին նույն ընտրությունը: Եվ խոչընդոտը նույնիսկ մասնավոր շահը չէ, այլ նվիրվածությունը պատմությանը, մշակույթին, անդամակցությանը:

Թե Ուոլցերը, թե Միլերը թերահավատ են Ռուսի հավակնոտ ու համընդգրկուն նախագծի նկատմամբ: Ի տարբերություն վերջինի, նրանք արդարության պլյուրալիստական մեկնաբանության կողմնակիցն են:

Ուոլցերի առանցքային և Ռուսյան մոտեցմանը հակադրվող դիրքը հետևյալն է.

«Ես ուզում եմ պնդել ավելին՝ որ արդարության սկզբունքներն իրենք ձևով պլյուրալիստական են, որ տարբեր հասարակական բարիքներ հարկ է, որ բաշխված լինեն տարբեր նկատառումներով, տարբեր պրոցեդուրաների համաձայն, տարբեր գործողների կողմից ...»

Մայքլ Ուոլցերի մյուս կարևոր ներդրումն այն է, որ ուշադրություն է հրավիրում բարիքների նշանակության վրա, ինչն էլ որոշադրում է՝ ուղղորդում է դրանց բաշխումը: Ըստ նրա, մինչև հիմա գերիշխող էր այս ձևակերպումը. մարդիկ բաշխում են բարիքներ ուրիշ մարդկանց: Առաջարկվող նոր ձևակերպումն ավելի ծզարիտ է. մարդիկ հղանում ու ստեղծում են բարիքներ, որոնք հետո բաշխում են միմյանց միջև. «Բարիքները հայտնվում են մարդկանց մտքում, նախքան կհայտնվեն նրանց ձեռքերում»:

Այսինքն, հարկ է ուշադրությունը բուն բաշխումից տեղափոխել դեպի իրերի անվանակոչումը, նշանակություն տալն ու կոլեկտիվ պատրաստումը: Հենց այս գործընթացներն են կանխորոշում բարիքների «ձակատագիր-բաշխումը»:

Օրինակ, միևնույն իրն արժևորվում է ինչ-որ տեղում և անարժեք համարվում այլ տեղում, ասենք, այլ պատմամշակութային կամ սոցիալական միջավայրում: Հետևաբար, չկա առաջնային կամ հիմնական բարիքների համընդհանուր կազմ, որն ընդունելի կլիներ բոլորի համար: Յուրաքանչյուր միջավայրում կամ ոլորտում բարիքը բաշխվում է ըստ այն նշանակության, որ ունի այն մարդկանց համար, ում համար այն բարիք է:

Բաշխումներն արդար կամ անարդար կարող են համարվել բարիքների հասարակական նշանակությունների համեմատ: Հետևաբար, քանի որ բարիքների նշանակությունները տարբեր են, բաշխումները պետք է լինեն ինքնավար: Յուրաքանչյուր բաշխական ոլորտի ներսում կարող են գործել բաշխման տարբեր չափանիշներ:

Մայքլ Ուոլցերի քննարկած մյուս կարևոր հայեցակարգերն են՝ տիրապետումն ու մենաշնորհը: Ըստ նրա, որևէ բարիք տիրապետող է, եթե այն ունեցող անհատները դրա շնորհիվ կամ միջոցով կարող են տնօրինել այլ բարիքների ընդարձակ շարքի: Տիրապետումը նկարագրում է բարիքների կիրառման եղանակը: Բարիքը մենաշնորհված է, երբ այն հաջողությամբ պահում են՝ ընդդեմ բոլոր մրցակիցների: Մենաշնորհը բնութագրում է բարիքների սեփականատեր լինելու կամ վերահսկելու մի եղանակ, որի նպատակը դրանց տիրապետումը շահագործելն է:

Մինչ այժմ տիրապետող է եղել այն հարցը, թե ինչպես հաղթահարել մենաշնորհը: Սակայն Ուոլցերի համար մենաշնորհը կարծես անխուսափելի մի բան է, մարդկային պատմությանը ներհատուկ երևույթ, որի հաղթահարումն անհնար է: Մենաշնորհների դեմ պայքարը հանգեցրել է միայն այն բանին, որ դրանք պարզապես փոխանցվել են մի ազդեցիկ խմբից՝ մյուսին: Մենաշնորհը ծնշելու համար հաճախ են դիմում պետությանը, հետո էլ արդեն փնտրում են եղանակ՝ պետությանը սահմանափակելու, նրա՝ ամեն բան ու ամենքին տիրելու ախորժակը զսպելու համար:

Ըստ Ուոլցերի, պետք է առաջնահերթ կենտրոնանալ ոչ թե մենաշնորհի սահմանափակման, այլ՝ տիրապետման կրճատման խնդրի վրա: Հարկավոր է նեղացնել այն շրջանակը, որի ներսում որոշակի բարիքներ փոխարկելի են, և պաշտպանել բաշխական ոլորտների ինքնավարությունը:

Մի բարիքը փոխարկել մեկ ուրիշի, երբ երկուսի միջև ներքին կապ չկա, նշանակում է ներխուժել այն ոլորտը, որտեղ պատշաճորեն կառավարում է մեկ այլ ընկերակցություն, այլ խումբ: Օրինակ, քաղաքական իշխանության օգտագործումն ուրիշ բարիքների հասանելիությունն ապահովելու համար՝ բռնակալական է:

Ուոլցերի առաջարկած լուծումն է՝ բարդ հավասարության կառավարածնը, որ հակադիր է

բռնակալությանը: Քաղաքացու դիրքը մի ոլորտում կամ մի հասարակական բարիքի նկատմամբ կարող է տարանջատվել մի ինչ-որ այլ ոլորտում ինչ-որ այլ բարիքի նկատմամբ նրա ունեցած դիրքից: Այս դեպքում բաշխական սկզբունքը կլինի հետևյալը.

«Ոչ մի X հասարակական բարիք չպետք է բաշխվի տղամարդկանց ու կանանց, որոնք ունեն մեկ այլ Y բարիք լուրջ այն պատճառով, որ նրանք ունեն Y բարիք և առանց ուշադրություն դարձնելու X-ի նշանակությանը»:

Ուուցերի մոտեցումն առավել մանրամասն շարադրված է նրա՝ 1983 թ. լույս տեսած «Արդարության ոլորտներ. պլյուրալիզմի և հավասարության պաշտպանություն» աշխատության մեջ: Քննարկվող տեքստն այդ գրքի առաջին գլխի թարգմանությունն է:

Երրորդ հեղինակը՝ **Դեյվիդ Միլերը** ևս արդարության պլյուրալիստական մեկնաբանության կողմնակից է: Սակայն, ի տարբերություն Ուուցերի, ով բաշխման սկզբունքներն առանձնացնում էր ըստ բարիքների նշանակության և ըստ դրա՝ տարանջատում բաշխական ոլորտները, Միլերի պլյուրալիզմը ելնում է մարդկային փոխհարաբերության կերպերից:

Փոխհարաբերության որոշակի տեսակին համապատասխանում է մարդկային միության մի տեսակ, և դրան էլ, իր հերթին, բաշխման որոշակի սկզբունք: Դրանք են.

1. Համերաշխական համայնքը, որտեղ բաշխման սկզբունքը կարիքն է:

Այս համայնքների առանցքային հատկությունն ընդհանուր ինքնությունն է՝ հիմնված արժեքների, ընդհանուր անցյալի, արյունակցական-ազգակցական կապերի, մշակութային ընդհանրության վրա: Սպասելի է, որ այս համայնքները համեմատաբար թուլացած են ազատական հասարակության մեջ:

Նման համայնքներն ունեն չափօրինակներ առ այն, թե ինչպիսին պետք է լինի բավարար կյանքը: Առաջնորդվելով չափօրինակներով՝ համայնքները որոշում են իրենց անդամների իրական կարիքները և դրան համապատասխան տրամադրում բարիքներ: Չափօրինակներն օգնում են նաև, որ ցանկություններն ու ակնկալիքները տարբերակվեն իրական կարիքներից:

2. Գործիքային միությունը, որտեղ բաշխման սկզբունքն արժանիքն է:

Այս միություններում մարդիկ միավորված են փոխշահավետ և ռացիոնալ նպատակների շուրջ: Այդպիսիք են, օրինակ, տնտեսական ձեռնարկությունները, քաղաքական կուսակցությունները, կրթական նպատակների շուրջ համախմբված անձինք, և այլն:

Տնտեսական կազմակերպություններում, օրինակ, աշխատավարձի չափը որոշվում է ըստ արժանիքի՝ գնահատելով կազմակերպության նպատակները հետապնդելու գործում տվյալ անձի ներդրման չափն ու արժեքը (կարևորությունը):

Այս միություններում արդարության հաստատման շուրջ բախումներ կարող են լինել, քանի որ դրանք հաճախ ունենում են ձևական կառույցներ, որտեղ մարդիկ արդեն իսկ ունեն որոշակի դասակարգում, և բարիքներն էլ բաշխվում են ըստ այդ դիրքերի: Ստացվում է, որ զբաղեցրած պաշտոնն է համարվում արժանիք՝ որևէ բարիք (աշխատավարձի բարձրացում, պարգևատրում,

արտոնություն, առաջխաղացում) ստանալու համար, և ոչ թե իրական, բովանդակային ներդրումը:

Մի այլ դժվարություն էլ ծագում է այն դեպքում, երբ կա տարածայնություն միության իրական նպատակների շուրջ: Նպատակների մեկնաբանությունից է կախված, թե ինչը կհամարվի արժանիք: Օրինակ, կրթական հաստատության անդամների՝ դասախոսների գլխավոր արժանիք կարող է դիտարկվել հենց դասավանդման հմտությունն ու որակը: Սակայն գոյության իրավունք ունի նաև այն մոտեցումը, որ դասախոսի գլխավոր արժանիքը գիտական հետազոտությունն է: Այս դեպքում հստակ չէ, թե ինչպես պետք է բաշխումները կատարվեն՝ ըստ դասավանդման թե հետազոտության արժանիքի:

3. Քաղաքացիության պարագայում էլ բաշխման սկզբունքը հավասարությունն է:

Քաղաքացիությունը հիմնականում իրավունքների ու պարտականությունների հավասար բաշխման մասին է: Այն ցույց է տալիս պատկանելություն՝ որոշակի իրավական համակարգին: Խնդրահարույց է այն պնդումը, որ բարիքները ևս վերաբերում են քաղաքացիությանը: Ինչ-որ երկրի քաղաքացի լինելով՝ իրավունք ունենք մյուսներից պահանջելու, որ մեր բարեկեցությունն ապահովող բաշխումներ անեն, օրինակ, լավ առողջապահություն ապահովեն մեզ համար: Սա վիճելի հարց է:

Երբ ազգը և քաղաքացիությունը համընկնում են, մենք հաճախ պահանջ ենք ներկայացնում՝ ինքներս չիմանալով՝ ում ենք դիմում. մեր հայրենակիցներին՝ նույն ազգին ներկայացուցիչներին թե՛ մեր համաքաղաքացիներին:

Հաճախ կարող ենք լսել. ես քաղաքացի եմ և ունեմ այս և այս բարիքներն ունենալու իրավունքը: Բերված պնդման մեջ հաճախ նկատի է առնվում ոչ թե քաղաքացիներից ակնկալվող աջակցություն-բաշխումը, այլ՝ ազգ-համայնքի աջակցությունը: Ակնկալիքն այն է, որ պատշաճ բաշխում պետք է իրականացվի՝ միևնույն ինքնության կրողը լինելու հանգամանքից ելնելով:

Կախված այն բանից, թե բաշխման ինչ չափանիշ է գերակայում, կարող ենք ենթադրել տվյալ միության դինամիկան: Օրինակ, եթե համերաշխական համայնքում կարիքի փոխարեն ժամանակի ընթացքում սկսում է կարևորվել արժանիքը, նշանակում է՝ այդ համայնքը ձեռք է բերել այնպիսի հատկանիշներ, որ բնորոշ են գործիքային միությանը:

Միմյանցից ունեցած չարդարացված ակնկալիքների առնչությամբ Միլերը նշում է, որ այդպիսի բախումներ առաջանում են այն ժամանակ, երբ մենք այլ կերպ ենք ընկալում փոխհարաբերությունը, և դնում ենք այլ՝ չհիմնավորված պահանջներ:

«Երբեմն մարդիկ սխալ են հասկանում ուրիշների հետ իրենց փոխհարաբերությունները: Եթե այնպես անենք, որ նրանք ավելի հստակ հասկանան իրողությունները, մենք կարող ենք փոխել նրանց ըմբռնումն այն բանի մասին, թե նրանցից ինչ է պահանջում արդարությունը:»

Դ. Միլերի մոտեցումն առավել մանրամասն շարադրված է նրա «Սոցիալական արդարության սկզբունքներ» աշխատության մեջ: Քննարկվող տեքստն այդ գրքի երկրորդ գլխի թարգմանությունն է:

Արդարության՝ վերը քննարկված տեսությունները բավական լայն են մեկնաբանում բաշխման ենթակա բարիքները: Դրանց շարքում կարելի է գտնել նաև բավական «անսպասելի» բարիքներ:

Օրինակ, գրույցը կամ լավ վերաբերմունքը ևս բարիք է համարվում:

Ցանկացած բան, որ կարող է մարդկանց կողմից ստեղծվել և բաշխվել, բարիք է: Այս պարագայում պարզ չէ, թե ինչը բարիք չէ: Կա՞րողոք մի նյութական կամ ոչ նյութական երևույթ, որ այդ համընդգրկուն շարքից դուրս է մնում:

Չետևաբար, այս տեսությունները միայն արդարության մասին չեն և միգուցե առաջին հերթին արդարության մասին չեն: Սրանք հավակնում են լինել հասարակական ամբողջ կյանքը նորմավորող տեսություններ: Սրանցում արդարության հարցերն անբաժանելի են իշխանության, սոցիալական կոնֆլիկտի, սոցիալական գործողության, համերաշխության հարցերից:

Այս իմաստով, արդարության հայեցակարգը կարծես փորձում է «գրավել» այլ տեսությունների ավանդական տիրույթները՝ հավակնելով լինել քաղաքական ու սոցիալական համընդգրկուն տեսություն: